

L67

677

19 99. []


ՄԿՐՏԻՉ Ս. ԹԻԻԹԻԻՆՆԻՆ

ՎԱՇԽԱՌՈՒԻՆ

ԱՂՋԻԿԸ

ՍԻՐԱՎԷՊ

1650.



عارف نظارت جلیله سنک ۵۹۵ نومرولی رخصتیه طبع اولمشدر

ՏՊԴՐ. Կ. ՊԻՊԷՐԵԱՆ

Կ. ՊՈԼԻՍ

Զիւնդիլլի խան, Թիւ 18, 19

1894

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ




ՀԳ 676 9677-60

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
Վ. ԳՐԱԳՐԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԿՈՒՆՍՏԱՆՈՎ
1891

ԵՆՈՂԳԻՍ

ՅԻՇԱՍԱԿԻՆ



ՅԱՌԱՋԱԲԱՆ




Վախառութիւնը , որ մեր մէկ դասակարգին արձն ու կերուին է , թէն նիւթ եղած է պարբերաբար մեր թերթերուն եւ պատարկներ երեցած են արձկուած հառաչներու պէս , այնու ամենայնիւ՝ հասոր մը , կամ հասորիկ մը այդ խաւարապատ դասակարգի գաղտնի մեքենաներուն , դուրս ելած չէ սակաւին . եւ թէն երեւուն է այսօր այդ խաւարային նիւաղը , բայց սակաւին կը քաշէ իր էութիւնը եւ հարակ կը գտնէ հիւծեալ , վիթ աղմատութեան երեսէն .

Հասորիկս իբրեւ էջ մը այդ դասակարգին . հրաւարակութեան տալով , միայն սա փափաքն ունիմ որ թերեւս աւելցնէ զզուանն վախառութեան դէմ , եւ անոր վերջին պատմութեան մէկ հետքն ըլլայ .

ՀԵՂԻՆԱԿՆ

0449088

Մ.Պ.Ս.Ս.Ս.Ս.Ս.



միջոցառումներ ինչպես և ցմովորոշումներ
- առաջարկել ենք զբնական և մարտի տեղեր
մեծ ծախսերով անհրաժեշտ է մտածել զանազան
համայնական անկողիններում և անհրաժեշտ
հասարակությանը զանազան կերպով և զանազան
էջերով արտաբերել մտածելով զանազան
արտաբերելով զանազան կերպով և զանազան
ցմովորոշումներ ինչպես և ցմովորոշումներ
մասնավորապես ինչպես և ցմովորոշումներ

- ցմովորոշումներ ինչպես և ցմովորոշումներ
նկատելով մեծ ծախսերով անհրաժեշտ է
և անհրաժեշտ է մտածել զանազան
համայնական անկողիններում և անհրաժեշտ
հասարակությանը զանազան կերպով և զանազան
էջերով արտաբերել մտածելով զանազան
արտաբերելով զանազան կերպով և զանազան
ցմովորոշումներ ինչպես և ցմովորոշումներ

Վ Ա Շ Խ Ա Ռ Ո Ւ Ի Ն

Ա Ղ Ջ Ի Կ Ը

Ա.

1876 թվականն էր :
Աստուածածնի Վերափոխման կիրակին . օդը սպայծառ ու
գեղատեսիլ . առտուան արեւու կենսատու ճառագայթները
հայելիի նման կը փայլէին երկնքի վրայ . օդի մէջ կը ծաւալէր
խիտ ախորժ . քաղցրահոտ թարմութիւն մը , հակառակ ա-
մառնային եղանակի՝ բնութիւնը դարնան զուարթագին օրե-
րու կը նմանէր :

Երիտասարդ մը՝ հազիւ իր քսան եւ մէկ տարին լրացու-
ցած . միջահասակ նուրբ կազմուածքով . բարակ ու ոլորուած
սեւ պեխերով . մտազբաղ եւ դանդաղաքայլ կանցնէր Պաղ-
լար-սպաշիի հրապարակէն եւ կը շարունակէր իր ճանապարհը
դէպի Սուրբ Կարապետ եկեղեցին : Բազմաթիւ անձինք եւս
երկսեւ եւ ամէն հասակէ մէկը միւսի ետեւէն կերթային դէպ
ի Աստուծոյ Տաճարը աղօթելու : Երիտասարդը աղքատիկ
ընտանիքի մը զաւակ էր , ըստ բաւականի զարգացած եւ ու-
սումնական , իր քաղցր բնաւորութեան՝ համեստութեան եւ
լրջութեան շնորհիւ յաջողած էր ազնուական թաղեցիներէն
մէկուն յանձնարարութեամբ հայ վաճառատան մը մէջ երկ-
րորդ գրադրութեան պաշտօնը ստանձնել համեստ ամսակա-
նով մը : Երիտասարդին հայրը չորս տարի առաջ յանկարծա-
մահ եղած էր , տան կառավարութիւնը եւ իրենց ապրուստի
հոգը միացած էր մօրը վրայ : Երիտասարդը Հրանտը այն ա-

տեն տակաւին վարժարան կը յաճախէր . իր վախճանեալ հօր-
մէն մնացած հարիւր ոսկւոյ չափ գումարով մը մայր եւ որդի
կապրէին ամենայն խնայողութեամբ . իրենց համար պատկա-
ռելի գումար մընէր աս , եթէ որդին չափահաս եւ գործուն-
եայ մէկը չըլլար , կրնային սոյն գումարին շահովը երջանիկ
սպրիլ . իսկ մայրը՝ առտնին խնայողութիւն միայն ուսումնա-
սիրած էր , հետեւաբար անձեռնհաս էր առանց մայր գումարը
վտանգելու՝ հանապազօրեայ պարէն մը հայթայթել . ասոր
համար անդադար կը խրատէր իր որդին որ շուտով աւարտէ
իր դպրոցական շրջանը , որպէս զի գործի մտնելով ապրուստ-
նին հոգայ : Խեղճ կինը կը դողար որ իր ունեցած փոքրիկ
գումարը սպառելով թշուառութեան մատնուին . մէկ խօսքով
իր բոլոր յոյսը դրած էր միակ զաւկին վրայ , անոր վաստա-
կովը պիտի կարենար երջանիկ ըլլալ միայն . ուրիշ ոչ մէկէ
օգնութիւն չէր կարող սպասել : Այս ընտանիքը չէր նմանէր
այն գերդաստաններուն զորոնք կը շրջապատեն բազմաթիւ
ազգականներ ու բարեկամներ : Հրանտի մայրը աշխարհի վրայ
իր զաւակէն ուրիշ ազգական չունէր , կարծես սուսկի նման
մայր եւ որդի առանձին բուսած ըլլային . ահա այս պատճա-
ռաւ էր որ նա անհանգստութիւն մը կը գար եւ կը յուզուէր
միշտ ուրիշի մը կարօտ չըլլալու . իր մտածութեան աւարկայն
աս էր : Հրանտը երբ պաշտօնի կոչուեցաւ վաճառատան մէջ ,
արդէն սպառած էր իր հօրմէն մնացած դրամը , եւ այնու-
հետեւ նա իր աշխատութեան արդիւնքը եղող ամսաթոշակովը
սկսաւ տան պիտոյքները հոգալ . մայրը կորհնէր իր որդին
եւ ալ եւս երջանիկ կը համարէր ինքզինքը :

Հրանտ եկեղեցւոյ դռնէն մտնելով՝ իր մօմը առաւ եւ
գաւթի պատկերին նուիրեց , երեք անգամ խաչակնքելէ յե-
տոյ գնաց ձախակողմեան պահարանի դրան մէջ կեցաւ եւ
գրպանէն դուրս հանելով Պարտէզ Հոգեւորը սկսաւ աղօթել :
Հրանտ իր պատանեկութենէն արդէն ջերմեանդ էր , իր
քաղցր բնաւորութիւնը եւ անբիծ բարոյականը ծանօթ էր
ամենուն . իր պատանեկան եւ երիտասարդական զրօսանք-
ները անմեղ էին . Բայի Տօն օրերէ՝ անիկայ սովորութիւն ու-
նէր ամէն առաւօտ իր բնակարանէն ելլել եւ եկեղեցի հան-

դիպիլ , աղօթել մօրը առողջութեան եւ իր գործոց յաջողու-
թեան համար եւ յետոյ կը մէկնէր իր պաշտօնատեղին , ունէր
կատարեալ հաւատք դէպ ի իր կրօնքն ու եկեղեցին եւ կար-
ծես ամէն անգամ իր խնդիրքը կը կատարուէր :

Նոյն օրուան պատարագիչն էր երիտասարդ Եպիսկոպոս
մը , Ս . Աւետարանի ընթերցումէն առաջ ըստ աւուր պատ-
շաճի սկսաւ քարոզ խօսիլ կանգնած Ս . Սեղանի առջեւ . վը-
տակի պէս Աստուծոյ խօսքը կը հօսէր անոր բերնէն . աստ-
ուածաբան Եպիսկոպոսը՝ ժողովուրդին կը բացատրէր Ս . Գըր-
քի բովանդակութեան իմաստը , երկար կը խօսէր որպէս
քրիստոնէութեան մարմնացած ոգին , իր ձայնը ազդու էր եւ
ժողովուրդը անոր պերճախօսութենէն քրիստոնէական ջերմե-
ռանդութեամբ կողեւորուէր : Եպիսկոպոսը քարոզը վերջաց-
նելով՝ ջերմեռանդութեամբ կարգաց օրհնութեան մաղթանքը
եւ դարձաւ Ս . Սեղանին :

Արարողութիւնը աւարտելու մօտ էր , հարիւրաւոր խառ-
նիճազանձ ամբօխը ամէն դասակարգէ իրար հըրելով , ինչպէս
որ սովորութիւն է մեր մէջ , սկսան մեկնիլ . հագիւ ժողովուր-
դի մէկ մասը մնացած էր Տաճարին մէջ , Հրանտ ալ իր վեր-
ջին մաղթանքը ընելով դուրս ելաւ : Բազմութիւնը եկեղեցւոյ
բակը կեցած կը խօսակցէր , եւ ամենայն հիացմամբ կը գովէր
Եպիսկոպոս Սրբազանին ազդեցիկ քարոզը , քանի մը վայր-
կեան ետքը էրիկ մարդ կնիկ մարդ խառն՝ եկեղեցւոյ արտա-
քին դրան մարմարէ սանդուղքներէն կիջնէին փողոց ելլելու .
Հրանտ եւս սանդուղքի գլուխը կանգնած՝ քանի մը կիներու
ճանապարհ կուտար որ անցնին : Յանկարծ տարիքոտ կին մը
անցաւ իր մօտէն , շքեղ զարդարուած օրիորդի մը հետ .
մայրը մեծ դժուարութեամբ կարողացաւ ձեռքել ամբօխը եւ
շարունակել ճամբան , իսկ օրիորդը չկարողացաւ քայլ մը խոյ
յառաջանալ , խպառ կորանցուց ինքզինքը . իւր վարդագոյն
դէմքը գունատեցաւ եւ լուսափայլ ճակտին նուրբ գիծերը
տրտմութենէն պլլայլեցան : Քանի մը երիտասարդներ տեսնե-
լով օրիորդին այդ վիճակը՝ կարծեցին թէ՛ իր ամօթխածու-
թենէն եւ բազմութեան պատճառաւ նուաղած էր :

Հրանտ զգուշութեամբ , ետ քաշուելով ճամբայ բացաւ

որպէս զի օրիորդը անցնի աղատօրէն . իսկ օրիորդը եղած տեղը կը կենար իբր մարմարէ արձան , երբ քաղցրիկ եւ գրաւիչ հայեացք մը ձգեց Հրանտի աչքերուն եւ այնպէս մնաց քանի մը բոպէ : Օրիորդին մայրը փողոց ելած կըտուս սէր աղջկան առանց գիտնալու թէ ի՞նչ պատահած է , արդ վերադարձաւ անոր մօտ եւ ի միասին անձայն ու անշուշտ բազմութեան մէջէն աներեւութացան , ոչ ոք չը կարողացաւ հասնել սոյն եղբւրթիւնը , մի միայն Հրանտ զգաց իր հոգիին մէջ անբացատրելի յուզում մը օրիորդին շեշտակի հայեացքներէն : Սրդարեւ օրիորդը սիրահարուած էր երիտասարդ Հրանտին : Զինքը ճանչցող քանի մը երիտասարդներ այլ եւ այլ կասկածներ ունեցան . բայց իրենցմէ ոչ ոք կրցաւ ճշմարիտ գաղափար մը գոյացնել եւ եզրակացութեան մը յանգիլ . վասն զի անոր կերպարանքին արտաքին երեւոյթէն բան մը չէր նշմարուեր , միայն դէմքի բոպէական փոփոխութիւնը կրնար շատ պատճառներ ունենալ . պէտք էր միայն անոր սրտին եւ հոգիին խորը թափանցել , եւ ասիկայ անկարելի էր հետաքրքիր երիտասարդներու համար :

Սոյն օրիորդը՝ որուն անունն էր Վերգինէ գաւառացի վաշխառուի մը աղջիկ էր , հազիւ տասն եւ եօթն դարուն ողջունած . հասակը նուրբ եւ վայելուչ , քնքուչ եւ գեղադէմ . շիկահեր եւ սպիտակ . աղեղնածեւ յօնքերուն ներքեւ երկնադոյն աչքերուն սեւուկ բիւրեղ երկայն սոխակի լեզուի նման արտեւանունքներով շուրջ պատած . դանգրածեւ գիտակները սաթի նման կը փայլէին եւ վարդ այտերուն ու կարմրաշար շրթունքներուն վրայ հիանալի գեղեցկութիւն մը կը յաւելուէին : Նախախնամութիւնը կարծես , իր սքանչելագործ յաւանութեամբը , բացառիկ գեղ մը գծած էր այդ գրաւիչ դէմքին վրայ , միով բանիւ՝ անմեղութեան զմայլելի տիպար մընէր սա . նախանձելի կոյսերուն եւ հրապուրիչ պարծանքի :

Մայր եւ աղջիկ երբ տուն հասան , տիկինը սպառնական կերպիւ հարցուց անոր եկեղեցւոյ սանդուղքներու վրայ պատահած անցքը : Սր . Վերգինէ ամենայն անկեղծութեամբ պատմեց Հրանտի մասին իր զգացած հոգեկան եւ սիրոյ վիշ-

տերը , բացարձակապէս խոստովանեցաւ թէ՛ Հրանտի սիրահարուած էր :

— Ե՞րբ եւ ո՞ւր առիթ ունեցար տեսնելու այդ անծանօթ երիտասարդի հետ՝ հարցուց մայրը :

— Անձանօթ չէ անիկայ . ես զինքը տեսնան եմ շատ անգամ . երբ երկուքնիս ալ վարժարան կը յաճախէինք տակաւին . թէպէտ եւ այդ երիտասարդը չը գիտէր թէ ես համակրած եմ իրեն , գուցէ այս օրուան դէպքէն հասկցած ըլլայ թէ կը սիրեմ զինքը . սրտին բաղխումը ընդհատեց խօսքին շարունակութիւնը եւ նուաղելու աստիճան յուզմունք մը բոլոր մարմնոյն տիրեց . կարծես կրակ մընէր որ կեւէր իր բերնէն :

Մայրը ոչինչ պատասխանեց Հրանտի սիրովը բորբոքած աղջկանը . ամէն բան հասկցաւ , ամէն բան զգաց , իր մայրական ջերմ սէրը չը թողուց որ իր միակ զաւակը վշտացնէ . միայն սիրահարութեան պատճառած աղետալի հետեւանքը զգացուց բարոյական խրատներով եւ խօստացաւ օրիորդին՝ ընդ հուպ ամուսնացնել զինքը հարուստ մարդու մը հետ . եւ արդէն վաշխառուն ալ միտքը դրած էր իր աղջիկը կնութեան տալ ուրիշ գաւառացի հարուստ վաշխառուի մը որ համակրած էր անոր ճարտիկութեան եւ անտեսագիտութեան , աւելի շիտակը ըսելով՝ անխղճութեանը :

Վերգինէ երբ լսեց մօրը բերնէն որ ուրիշի մը պիտի ամուսնացնեն զինքը , կայծակէ զարնուածի պէս արձանացած մնաց , նոյն ժամայն տրամութեան ստուերներ երեւացին դժբաղդ արարածի դէմքին վրայ : Մայրը կրկին սխալ խրատեւ — Աղջիկս ամէն գործի մէջ պէտք է մարդս զգոյշ եւ շրջահայեաց ըլլայ . որպէս զի ուրիշներու ծաղրու առարկայ չըլլայ : Կը վախնամ որ հայրդ կխնայ , այն աստե՛ն ո՛չ ես եւ ո՛չ դու կարող ե՛նք արդարանալ . անոր բնատրութիւնը խիտ է , գիտցիր որ ընտանեկան ներքին երկպառակութեան մը պատճառ պիտի ըլլաս : Ինչպէս որ քիչ մը առաջ մեր կամքը յայտնեցի , քեզի կը խօստանամ որ այս իրիկուն իսկ պիտի առաջարկեմ հօրդ որ քեզի արժանաւոր ամուսին մը ընտրէ . դու անհոգ եղիր զաւակս , որչափ որ կարելի է՝ պիտի ջանամ

ամուսնութիւնդ փութացնելու որպէս զի մեր ընտանեաց անուան ո՛ր եւ է անպատուութիւն մը չը պատահի, դու լաւ գիտես որ հայրդ պատուոյ նախանձախնդիր մարդ է . ամէն ոք պատկառանքով կը խօսի իրեն հետ, երբ իր աղնուականութեան դէմ արատ մը բերենք՝ անխղճութեամբ վարուած կըլլանք :

Վերգինէ լուի մնջիկ մըտիկ կընէր կեանքի պայմաններու անձանօթ մօրը խօսքերուն . իր ջախջախուած սրտի անդորութիւնը չէր կարող մխիթարութիւն գտնել մօրը համոզիչ խօսքերու մէջ : Վերգինէ չունէր այն քաջութիւնը որ իր հօր կամ մօր ընտրած ամուսինը մերժէր, եւ միայն իր սիրած երիտասարդը ընդունէր, այլ ճարը հատած ըսաւ . — Ա՛հ մայր իմ՝ ես ամուսնանալու փափաք չունիմ . դուք սխալ հասկըցաք իմ մասին ձեր ունեցած կարծիքը . զիս պիտի մեռցնէք : Այս խօսքերը արտասանելէ յետոյ՝ դժբաղդ աղջիկը ինչպէս մօրը կուրծքին վրայ . մայրը սովորական համբոյր մը դըրջեց անոր ձակտին եւ ըսաւ . — Մտիկ ըրէ՛, զաւակս, գիտեմ թէ հոգւով եւ մարմնով դըրսուած ես այն երիտասարդին . եթէ կը կարծես որ ատկէ ի դատ ուրիշ մը չէ կարող երջանիկ ընել քեզ, կը խարուխ, ես ատոր մասին վճիռ մը տալ չեմ կարող, որովհետեւ նա բոլորովին անձանօթ է մեզի . նախ պէտք է գիտնալ թէ այդ անձը ո՛ր դասակարգի ընտանեաց կը պատկանի . դու կը սիրես զինքը, արդեօք նա ալ փոխադարձաբար կը սիրէ՞ եւ կամ պիտի սիրէ՞ քեզ : Յետոյ իր նիւթական վիճակը կը ներէ՞ ամուսնանալ . եթէ ունի ծնողք, արդեօք թողտուութիւն պիտի ընեն իրենց զաւակին ամուսնութեան, եւ դեռ շատ հարցումներ կան ընելու : Ասոնք կենսական խնդիրներ են՝ զոր եթէ նախապէս աչքի առաջ չունենանք, ի վերջոյ շատ մը բարոյական եւ նիւթական փրաններու կրնայ ենթարկել զմարդ . ես նախ ամէն ջանք ի դորձ պիտի դնեմ, որպէս զի ծանօթանամ այդ երիտասարդին հետ եւ անոր բնաւորութեանը ինչ ըլլալը հասկնալէ յետոյ, եթէ նա ամուսնանալու վիճակի մէջ կը գտնուի, այն պտեն դու ալ բաղձանքիդ կը հասնիս : Ես երբէք, քու ամուսնական երջանկութիւնդ ոչնչացնելու դիտաւորութիւն չունիմ . դու ես իմ միակ

յոյսս . քեզմով երջանիկ պիտի ըլլամ . գիտեմ թէ աղջիկ մը իր սիրած երիտասարդէն զրկելը խոհեմութիւն չէ դու սիրտդ հանդարտեցո՛ւր :

Տիկինը հազիւ իր խօսքը աւարտած էր, տան խոհարարը դանդաղ քայլերով ներկայանալով՝ ցերեկեայ սեղանը պատրաստ ըլլալը իմաց տուաւ :

— Աղան ո՛ր է, կիրակո՛ս, հարցո՞ց տիկինը :

— Աղան իր սենեակն է թէմէսիք (մուրհակ) ներք կարգի կը դնէ :

— Գնա՛ իմաց տուր աղաին որ ճաշի հրամմէ, յարեց տիկինը :

Կիրակոսը դուրս խոնարհեցնելով հեռացաւ : Մայր եւ աղջիկ ձեռք ձեռքի տուած իջան ճաշի :

Բ

Ինչպէս որ քիչ մը վերը ըսինք, աղան դաւառացի մըն էր, Երանոս անուշով, որ իր երիտասարդութեան ժամանակ Պոլիս եկած էր իր հօրը գործերով զբաղելու : Երանոս աղայի հայրը նոյնպէս վաշխառու էր . երբ բաւական ծերացաւ, իր գործի ասպարէզը թողուց զաւակին եւ ինքը գնաց հայրենիք : Եւ հոն քիչ տեսնէն մեռնելով Պոլսոյ ասպարէզը մտաց երիտասարդ Երանոսին՝ որ իր հօրմէն աւելի վարպետութեամբ սկսաւ գործերը յառաջ տանիլ : Երանոս աղան վաշխառուի ճշմարիտ տիպարն էր . իր խորամանկութեամբն ու անխղճութեամբը քիչ ժամանակի մէջ գործը ընդարձակեց . բազմաթիւ դաւառացի գիւղացուց տուները հիմնայատակ կործանելէ յետոյ՝ մեծ հարստութիւն մը ձեռք բերաւ, իր տուած փոխ դրամը հարիւրին 20-25 դուրուշ տոկոսով էր : Երբ պարտատէրը որոշուած ժամանակին չէր կարող վճարել իր պարտքը, Երանոս աղան կուրախանար եւ դրախտի օճի պէս քանի մը չլացուցիչ մխիթարական խօսքեր ուղղելէ յետոյ՝ անմիջապէս կը փոխէր նոյն մուրհակը նոր պայմանաժամով մը, եւ մէկ տարուան մէջ իր տուած հարիւր դուրուշը կըլլար երեք հար

րիւր զուրուշ : Իսկ եթէ տգէտ գաւառացին երկրորդ տարին ալ չը կարողացաւ վճարել՝ երեք հարիւր զուրուշի գումարը անպատճառ վեց հարիւրի կը բարձրանար . եւ արդէն պարտատիրոջ ունեցած հարստութիւնն ալ այդչափ ըլլալով՝ անմիջապէս վաշխառուին գործակատարը կը դրաւէր խեղճ գիւղացիին ունեցածը , որով բոլորովին կը կործանուէր գիւղացիին այն տեղ : Իսկ ասդին Երանոս ազան ոսկիները կը դիզէր իւրարու վրայ : Այս ընթացքով խեղճ պանդուխտին կիներն ու զաւակները անապշտական կը մնան , արտասուալի աչքով կը դիմեն ուրիշ գիւղ մը . կաշխատին կը մաշուին , որպէս զի իրենց օրապահիլը հայթայթեն : Ահաւասիկ վաշխառուներու հետեւած դարաւոր կործանիչ սովորութիւնները . բայց հիմա այդ կործանարար տարրը մեծ մասամբ անհետացան շնորհիւ Օսմանեան բարեխնամ կառավարութեան աշխուրջ հսկողութեան :

Երանոս ազան այժմ կար յիսուն եւ չորս տարեկան . կարճահասակ կլորիկ մեծ փոր մարդ մը , վերջին աստիճան կծծի եւ անտեսազէտ : Ինչ որ գնէր՝ պէտք էր որ փոխարէնը կանխիկ վճարէր . ապառիկ առեւտուրը իրեն համար մահացու մեղք կը համարուէր . իր դէմքին վրայ երբէք ժպիտ մը չէր երեւէր , իր գործատեղին էր Պոլսոյ կողմը , խանի մը մէջ վարձած սենեակ մը էր՝ ուր կը դիմէին իրեն հետ գործ ունեցող անձեր : Երանոս ազան հազիւ 35 տարեկան կար՝ երբ ամուսնացաւ իր արհեստակից եւ հայրենակից անձի մը Բրաբիտն անուն աղջկան հետ , որմէ երկու զաւակ ունեցաւ . առաջինը մեռաւ ծաղկախոտէ երբ եօթը տարեկան էր , խիկ երկրորդը՝ Վերգիլէն էր : Երանոս ազան անընդհատ իր ապառիկ եւ չգանձուած մուրհակները կը բանար եւ կարգի կը դնէր , տանը մէջ , սենեկին մէջ , շոգենաւին մէջ այդ էր իր միակ զբաղումը , այդ արցունքով գրուած սեւ մուրհակները իր մարմնոյ անբաժանելի ընկերներն էին . ի՞նչ անլուծանելի հաշիւներ կար այդ կաշիէ ծրարի մէջ . եթէ հարկ ըլլար ճշգրիտեղեկանալ Երանոս ազայի հաշիւներուն՝ հմուտ թուարան մը անգամ անկարող պիտի ըլլար այդ հաշիւներուն մէջէն ելելու :

Ողորմածասիրութիւն ըսուած բանը իր բացակայութեամբը կը փայլէր Երանոս ազայի սրտին մէջ . իր կեանքին մէջ գոնէ մէկ անգամ ազբասի մը ողորմութիւն չէր տուած , ով որ ներկայանար այդ անխիղճ եւ անաղնիւ մարդուն՝ օգնութիւն մը խնդրելու , անպատճառ կտորած սրտով պիտի հեռանար անոր քովէն : Զատիկի եւ Մնունդի տօներուն երբ թաղային ազբատներու համար թաղական խորհրդի կողմանէ մասնաւոր նամակ մը խրկուէր Երանոս ազային , խնդրելով որ իր նուէրը տայ ի նպատակարարութեան . նամակը կը բանար կը կարդար եւ առանց կարեւորութիւն տալու՝ մէկ կողմ կը նետէր եւ ի հարկին իր վաշխառուի հօշիւները կը գրէր անոր հակառակ կողմը : Սոյն թուականներուն ամէն դասակարգի մէջ Երանոս ազայի կծծիւթիւնը եւ վերջին աստիճան ծայրայեղութիւնը խօսակցութեան առարկայ եղած էր : Տան հացագործը ստիպուած էր՝ տասանորդ տալ Երանոս ազայի , սոյնինքն տասը հաց երբ ստանար՝ մէկ հօխայ հաց եւս պարտ էր երբեւ տասանորդ տալ , նախապէս պայման դրած էր հացագործի եւ իր մէջ : Նպարավաճառի եւ մսավաճառի հետ եւս ունէր միեւնոյն տասանորդական հաշիւը :

Երանոս ազայի անտարբերութիւնն ու անաղնուութիւնը իր վերջին գազաթնակէտը հասեր էր , ո՛չ ամօթը եւ ո՛չ ալ հասարակաց կարծիքը իր վրայ ազդեցութիւն չէին ունենար . մարդասիրութիւնը իրեն համար նշանակութիւն չուներ . ոսկին միայն կը նշմարէր անոր դէմքին վրայ անկեղծ ծիծաղ մը . անհասկացողութիւն եւ անտարբերութիւն սերտ դաշնակցութեամբ միացած՝ իր հոգին ու մարմինը գրաւած էին եւ անքակտելի շղթաներով կաշկանդած էին զինքը : Տիկին Բրաբիտն շատ անգամ իր ամուսնոյն պախարակելի ընթացքին չափազանցութիւնը կը յիշեցնէր իրեն . առանձնակի խորհուրդներ կուտար անոր եւ կառաջնորդէր զինքը դէպի աղնուութիւն ու մարդասիրութիւն , բայց անիկայ չէր գիտէր թէ ի՞նչ է մարդասիրութիւն . փոխանակ շնորհակալ ըլլալու իր կնոջ՝ սաստիկ կը դայբանար , կը յարձակէր անոր վրայ . այդ առաքինի կնոջ դէմ խղճի եւ աղնուութեան հակառակ կը վարուէր , ու այսպէս գծտուելով՝ քանի մը օր բացակայ կըլլար ընտանիքին

գրկէն : Իրաց այս վիճակին մէջ խեղճ կինը կըստիպուէր ան-
տանձ թողուլ իր ամուսինը : Ահա այսպէս էր Երանոս աղայի
բնաւորութիւնը , եւ որուն այլանդակ դէմքի վրայ բացա-
յայտ կը տեսնուէր անամօթութեան եւ անխղճութեան տի-
պարը :

Գ

Վերգինէ ճաշարանէն ելլելով գնաց առանձնացաւ իր
մասնաւոր սենեակը , պատուհանին փեղկերը գոցեց եւ մտաւ
անկողին յուզուած սրտին ու մտքին դոյզն ինչ հանգիստ
տալու :

Քունը՝ որ այսպիսիներու միակ մխիթարութիւնը կրնայ
համարուիլ , առ ալ չէր մօտենար իր աչքին . իր մահճակալին
վրայ ընկողմանած՝ ձեռքը ծնօտին դրած , դառն մտածու-
թիւններու մէջ խորասուզուեցաւ : Ներքին խռովութիւնը թոյլ
չը տուին որ գէթ քանի մը վայրկեան քնանայ . կըսէր իւրովի
— Ա՛հ , մարդս իր դառնութիւնը միմիայն գերեզմանի խորը
կարող է անհետացնել . հայրս , անզգայ եւ անխղճ արարած ,
մայրս , որ կերկնչի անոր կատաղութենէն՝ կուզէ հպատակ ընէ
իր կամքին . ո՛չ , ո՛չ , սէրը երբէք չի հպատակիր , մարդուս
ազատ զգացմունքն է ինչպէս կրօնքը . արդէն իմ ծնողացս մէջ
ճշմարիտ սէրը գոյութիւն չունի . հայրս իր ամբողջ էու-
թեամբը սիրահարուած է Մամոնային միայն , իսկ մայրս տար-
բեր կարծիք մը յայտնելու իրաւունք չունի երբեք : Ո՛րչափ
դժբաղդ եմ եղեր ես : Ո՛չ ընկեր , ո՛չ բարեկամ եւ ոչ ալ
սրտակից մը ունիմ , որ երբեմն հոգիս դառնութիւններս
անոր յայտնելով գէթ խարուսիկ մխիթարութեան մը արժա-
նանայի , ծնած օրէս մինչեւ ցարդ տասնեւեօթը դարուն տե-
սայ , բայց գոնէ 17 անգամ չվայելեցի աշխարհային այն
բերկրանքը զոր երջանկութիւն կանուանեն : Ինչո՞ւ համար
ծնայ ես , եւ ի՞նչ եմ այսօր — մառախլապատ մեռչին մէջ
այլակերպութիւն մը , փողոցներու սաղայատակին վրայ եր-

թեւեկող դէմք մը , տանը մէջ ճայն մը եւ հօրս առջեւ սա-
ռուեր մը . ուրեմն ոչինչ եմ ես : Սակայն իմ իսկ ոչնչութեանս
մէջ սիրտ մը ունիմ . սիրտ մը՝ որուն խորը նախախնամու-
թեան անքննին կարողութեանը վե՛ւմ ու անարատ սիրոյ բոյնը
դրած է : Ո՛հ , իմ ոչնչութիւնս եւ այս անպարագրելի սիրոյ
մեծութիւնը . . . Աստուած իմ , շփոթած եմ . չեմ կարող
եւ չպիտի կարողանամ սատանայական մեքենայութեանց
գաղանիքին թափանցել :

Վերգինէ այսպէս մենախօսութեամբ իր արդար բողբջը
կը բառնար ծնողացը դէմ . բոսիական լուծեմէ կտքը խեղճ
աղջկան աչքերը լցուեցան արցունքով . երեսը ծածկեց բար-
ձի վրայ եւ սկսաւ դառնապէս հեծել : Այն ինչ այսպէս սար-
սափելի հոգեկան վրդովանքի մէջ կը գտնուէր , տեսակ մը
թմրութիւն տիրեց անոր անդամներուն , գլուխը ինկաւ բար-
ձին վրայ եւ աչքերը գոցուեցան :

Թողունք որ տարաբաղդ աղջիկը քիչ մը քնանայ եւ մենք
նկատողութեան առնենք նրանոս ազաի բնաւորութիւնը :

Այս անձը սովորութիւն ունէր կիրակի եւ տօն օրերը
տան խոհարարը միասին առնելով պտոյտի ելլել Չամիքճայի
կողմերը . սովորաբար հետիտան կերթար եւ ծառի մը հովա-
նիին ներքեւ կը նստէր ու կիրակոսի հետ կը խօսէր . ինչ
հարցում որ ուղղէր խոհարարին՝ անոր պատասխանը կըլար
չատ կտրուկ , պէլի աղա , էնպէս է աղա , Ձշմարիտ է աղա
եւայլն : Կիրակոս իր սեպհական կարծիքը չունէր , ահա այս
պատճառով էր որ անիկա երկար տարիներ նրանոս ազաի
տան խոհարարը ըլլալու պատիւը ունեցած էր . այսօր ալ
օղբ գեղեցիկ տեսնելով՝ առիթը ձեռքէ չը փախցունելու
համար՝ կերակուրէ կտքը՝ կիրակոսի հրաման տուաւ որ
պատրաստուի միասին պտոյտ մը ընելու : Ծառան անմիջապէս
պատրաստուելով ներկայացաւ՝ աղաին իմաց տալու թէ
պատրաստ է մեկնելու : Քանի մը վայրկեան կտքը նրանոս
աղտն եւ կիրակոս աղբար յամբաքայլ կը յառաջանային դէպ
ի Չամիքճա :

Վաչխառուն ճամբան քալած միջոցին՝ սովորութիւն ըրած
էր միշտ գլուխը կուրծքին վրայ խոնարհեցնել , որպէս զի

եթէ ճամբան ծանօթ անձ մը դիմացը ելլէ , զանի չը տեսնել ձեռացնէ . իր գլխուն ցաւ մը պակաս կըլլար : Ահա իր այս այլանդակութեամբը ծանօթ էր ամենուն :

Երանոս աղան խոհարարի հետ տունէն մեկնելէ յետոյ՝ տիկինը դնաց իւր աղջկան սենեակը եւ տեսաւ որ մահճակաւքին վրայ կը քնանար : Մօտեցաւ անոր , մայրական ջերմ զգացմամբ համբոյր մը դրոշմեց անոր ճակտին եւ մափուկ ձեռքերովը շոշափեց անոր ձիւնի պէս սպիտակ երեսը : Վերգլինէ արթնցաւ , բացաւ իր քաղցրիկ աչքերը եւ հրեշտատակային հայեացք մը թողուց մօրը երեսին :

— Սիրելի՛ աղջիկս , դու սովորութիւն չունէիր օրուան մէջ քնանալու , արդեօք անհանգիստ ես :

Աղջիկը ոչինչ չզատասխանեց , անոր աչքերը դարձեալ լցուեցան արցունքով : Մայրը զգաց անոր արցունքին ջերմ կաթիլները իր սրտին վրայ , խիոյն հասկցաւ պատճառը . վասն զի արցունքը զարմանալի արտայայտութիւն մըն է հոգեկան կրքերու :

Տիկին Բրաբիոն առաքինի կին մըն էր . եթէ քիչ մը դատարարականութեամբ ըլլար , այն ատեն իր աղջկան հետ տարբեր ընթացքով պիտի վարուէր : Մայրը աւելի մօտենալով աղջկան՝ մայրական ջերմ գլխարտութեամբ քանի մը անգամ հետզհետէ համբուրեց անոր ճակատը :

Վերգլինէ դիւրագգաց սրտի երկար խռովութիւններէ ետքը՝ խիստ հասկնալի լեզուով մը պատասխանեց .

— Սիրելի՛ մայր , եթէ զիս ամուսնացնելու համար ո եւ է ձեռնարկութիւն մը ընէք , գիտցէք որ ձեր մէկ հատիկ աղջկան մահուանը պատճառ պիտի ըլլաք :

— Ուրեմն , զաւակս , գոչեց մայրը . ես այս իրիկուն իսկ կը բանամ ամուսնութեանդ խօսքը . եթէ հայրը հրաման տայ , այն ատեն դու կընտրես քեզի համար ամուսին մը . գիտցիր որ ես միշտ քեզ համամիտ պիտի ըլլամ . իսկ գալով հօրդ , չեմ կարող երաշխաւորել թէ իր կարծիքը ձեզի նըպաստուոր թէ աննպաստ պիտի ըլլայ :

— Մայր , ինչ որ ալ ըլլայ , ես սիրով պիտի կրեմ ճակատիս դատակիւնքը . մինչեւ իսկ ամենատխուր վայրկեաններուս՝

պիտի աշխատիմ ուրախ ձեւանալ . դէմքս զուարթ պահել եւ յակամայից ժպտիլ , ծիծաղիլ , ես իմ բոլոր զգացմունքներս սրտիս մէջ պիտի խեղդեմ , եւ այս բոլորը ձեզի համար պիտի ընեմ միայն , որպէս զի դուք ուրախ ըլլաք , որպէս զի չըձանձրացունեմ ձեզ :

— Աղջիկս , հիմա կը հասկնամ որ դու խելացի աղջիկ մընես . քու մէջ հոգեկան դանձեր կան . ես այն համոզումը ունիմ որ ծնողացդ խորհուրդներուն կարօտ չես դու :

Տիկին Բրաբիոն այս ըսելով ելաւ նստած տեղէն եւ գընաց անանձնացաւ իր սենեակը :

Երբ Վերգլինէ առանձին մնաց . սրտաբուրդի ձայնով մը հեկեկեց . — Ո՛հ , մայրս . եթէ երբեք փրկութեան յոյս մը ունիմ , ան ալ մայրս է միայն : Եւ անշարժ մնաց երկար ատեն . արցունքէ կարմրած աչքերը մեքենաբար սեւեռած՝ իր շուրջը գտնուած առարկայներուն վրայ :

Դ

Անցաւ ամբողջ եօթնեակ մը : Աստուածածնայ տօնի յաջորդ կիրակի օրն էր . Հրանտ առաւօտուն կանուխ կանցնէր Վերգլինէի տան առջեւէն : Այսօր դժբաղդաբար երիտասարդը բողբոլին կերպարանափոխուած՝ իր նախկին վառվռուն շարժուացքը չունէր . կարծես թէ բան մը ճնշած էր իր սիրտը . իր վրայ կըտիրէր ընդհանուր վհատութիւն ընդհանուր թախծութեան հետ . այսօր անբացատրելի տագնապի մէջ կը գտնուէր :

Նոյն պահուն Վերգլինէ մտազբաղ եւ սխուր նստած էր տան առաջին յարկի պատշգամի մէջ , Հրանտ դեռ քանի մը քայլ պէտք էր առնուլ մօտենալու համար պատշգամին . ակնարկ մը ձգեց օրիորդի երեսին . նոյն ժամայն օրիորդը պատուհանէն վար թողուց ընկող մը եւ ցած ձայնով մը ըսաւ անոր . — Ընկողք ձեզի համար է եւ իրիկունը դարձեալ վերադարձուցէք ինձի : Երիտասարդը հագլու լսելի ձայնով իր շնորհակալութիւնը յայտնելէ յետոյ խոնարհեցաւ գետինը :

առաւ օրիորդի թողած ընկոյզը եւ չարունակեց ճամբան : Փողոցի անցորդներէն եւ Վերգինիի դրացիներէն ոչ ոք չաւսան սոյն գաղտնի գործողութիւնը :

Հրանտ չարունակելով իր ճանապարհը , զարտուղի եւ իրեն անձանօթ փողոցները կը մտնէր ու կելլէր ու չէր գիտեր թէ ո՞ւր կերթար : Երիտասարդը խորին յափշտակութեամբ հետաքրքրի էր իմանալ Վերգինիի առաւ ընկոյզի պարունակութիւնը . բաւական հեռացած էր ան , դուրս առաւ ընկոյզը , գաղտնապէս քանի մը անգամ դարձուց անիկայ ափին մէջ . իր աչքին դպաւ փոքրիկ ծակ մը՝ ուսկից կերեւէր սպիտակ թուղթը : Հասկցաւ օրիորդին խորագիտութիւնը . ընկոյզի միջուկը պարպած եւ անոր տեղը դրած էր փոքրիկ նամակ մը՝ որով իր սէրը պիտի յայտնէր անխորձ երիտասարդին : Մտադիր էր առնն դառնալ եւ այն տեղ ազատօրէն կարգաւ սիրոյ զգացմամբ գրուած այդ տողերը . բայց Հրանտ չլինալով զսպիւ իր հետաքրքրութիւնը , իր երկու մասներով սեղմեց ընկոյզը , կեղեւը երկու մասի բաժնուեցաւ եւ ընկաւ մէջէն թուղթի կտոր մը , որուն վրայ գրուած էին փոքրիկ տառերով հետեւեալ տողերը .

Ազնիւ Հրանտ .

« Սիրեցի քեզ . այս պատճառով գուցէ իմ բոլոր երջանկութիւնս , յոյս եւ ապագաս վտանգի ենթարկած ըլլամ . կեանքս ու մահս միմիայն քեզմէ կախեալ է . այս իրիկուն անպատճառ Ձիջթիլիի պարտէզը եկուր . ես մօրս հետ այն տեղ պիտի ըլլամ : Առանց երկնչելու ուղղակի մեր մեղանը գալերնիդ կը խնդրեմ : »

Մնամ քոյդ հոգևով եւ սրտով

Վերգինի

Նամակի ընթերցումը աւարտելէ յետոյ՝ ուրախութեան եւ տրամութեան հետ իրան ժպիտ մը երեւցաւ երիտասարդին դէմքին վրայ . նամակը անգամ մը եւս կարդաց վեր ի վերոյ եւ խկոյն դրաւ իր բաճկոնակի գրպանը , հիմա ալ չկարողա-

ցաւ իր որոշած տեղը երթալ , ուղեց ճամբան դէպի իր բնակարանը , ալ ուրիշ բանի վրայ չէր մտածեր . այդ քանի մը տող գրութիւնը գրուեց անոր մտածութիւնն ու հոգին . օրիորդի արտասանած քանի մը աննշան բառերը հրասուրբեցին երիտասարդին երեւակայութիւնը : Ինքն ալ կը փափաքէր երթալ որոշուած վայրը , տեսնուել խօսիլ անոր հետ . ասով գէթ իր խառվեալ սիրտը կարող էր հանդարտեցնել : Մինակ երթալ եւ այդ անձանօթ կիներու մօտը նստիլ անկարելի էր , որով որոշեց , երկար մտածութիւններէ յետոյ . թէ պէտք էր երթալ . . . իր մօրը հետ . այսպէս աւելի նպաստաւոր կըլլար իրեն , նախ կը ծանօթանար այդ ընտանիքին , եւ այս առթիւ բնականաբար փոխադարձ այցելութիւններ պիտի տային իրարու . այն ատեն Հրանտ ազատ ասպարէզ ձեռք բերելով իր ուզած ժամանակ համարձակօրէն իրաւունք պիտի ունենար այցելութիւն տալու անոնց՝ որով ոչ ոք պիտի մեղադրէր վնասքը , աս էր իր եղբրակացութիւնը եւ վերջնական որոշումը : Հիմա կըստատէր անհամբեր որ որոշուած ժամանակը գայ պարտէզ երթալու : Այն օրը Օգոստոս ամսուան տօթային օրերէն մէկըն էր , արեւը անխնայ կայրէր ամբողջ բուսականութիւնը , մէկ խօսքով՝ հրաբորոք օդը անտանելի էր , բնութեան ամէն թռչուններ դադրեցուցած էին իրենց քաղցր երգեցողութիւնը . դաշտային ծաղիկները իրենց գլուխը խոնարհեցուցած թիւնը . համայն բնութիւնը հետզհետէ կը մեռնէին ծարաւութենէ . համայն բնութիւնը լուռութեան մէջ էր . ոչ մէկ ձայն եւ ոչ մէկ շշուկ չէր լսուեր : Մարդիկ կը թափառէին ծառերու ստուերներու մէջ որպէս ուրուական , բնակարաններու մէջ ծածկուած մարդիկ ալ անհամբեր կըստատէին որ օդի սաստիկ ջերմութիւնը անցնի , եւ իրենք կարենան պարտէզ երթալ քիչ մը զովանալու եւ ազատ շունչ առնելու :

Հրանտ ամբողջ օրը անցուց իր տանը մէջ . ամէն կիրակի կէս օրէ ետքը . սովորութիւն ունէր քանի մը ընկերներով սըտոյտի ելլել . մայրը հետաքրքրութեամբ հարցուց տուն մնալուն պատճառը : Հրանտ օրուան սաստիկ ջերմութիւնը պատճառցոյց տուաւ եւ իրիկունը միատեղ պարտէզ երթալու առաջար-

կուժիւնն ըրաւ : Մայրը ընդունեց տղուն առաջարկը ամենայն սիրով . արդէն մեկնելու ժամանակը մտեցած էր . տիկին մայրը ելաւ պատրաստուելու համար եւ գնաց իր սենեակը :

Հրանտ ուրախութենէն չէր կրնար կենալ . իր մատաղ սիրտը կը խայտար , զգացումները կաւեւնային , այն օրը իր կեանքի ամէնագեղեցիկ եւ երջանիկ օրը պիտի ըլլար . անսահման ուրախութեամբ լցուած երիտասարդը՝ հրեշտակի պէս չքնաղ արարածը պիտի տեսներ . անոր հետ քաղցր ու հեշտագին վայրկեաններ պիտի անցնէր . միթէ այս բոլորը երջանկութիւն չէ՞ր համարուէր իրեն համար . — Վերջապէս բախտը հաշտուեցաւ ինծի հետ , վերջապէս պիտի կատարուի սրտիս բոլոր բերկրութիւնները , պիտի վայելեմ աշխարհէս հրապոյրը եւ կեանքի քաղցրութիւնը , բաւական է որ անգամ մը ծանօթանամ այդ ընտանիքի հետ . ալ անկից յետոյ Վերգինէի տան բոլոր դուռները բաց պիտի ըլլան առջեւ , եւ ոչ ոք պիտի կարենայ յանդգնիլ մեզ բաժնել իրարմ : « Հայրը բաւական հարուստ եւ ընդարձակ գործ ունեցող սեղանաւոր մըն է . իր գործերը կանոնաւորապէս յառաջ տանելու եւ աւելի ընդարձակելու համար ինծի պէս գործունեայ եւ հաւատարիմ մարդու մը պէտք պիտի ունենայ . վերջապէս օր մը զիս իրբեւ գրագիր կամ գործակատար իր քովը պիտի ընդունի » : Մինչդեռ անսիրտ երիտասարդը այս բոլորը կերեւակայէր կենդանի եւ փայլուն գոյներով , յանկարծ մայրը ներս մտաւ եւ խնայտուաւ թէ մեկնելու ժամը հասած էր :

Մայր եւ որդի իրենց տան դռնէն ելան եւ իրենց դանդաղ քայլերով սկսան յառաջանալ դէպի ժամադրութեան վայրը , գոր նշանակած էր Օրիորդը ընկողի մէջէն ելած նամակին մէջ : Ճամբան բարեմիտ մայրը խորհուրդ կուտար իր որդիին թէ չըլլայ որ արտաքոյ կարգի աւելորդ ծախքեր ընէ զբօսավայրը . իրեն համար գաւաթ մը սուրճ եւ կամ օշարակ մը բաւական ըլլալը կը հասկցնէր , խեղճ կինը երբեք չէր ուզեր որ իր որդին այդ տեսակ ծախքեր ընէ . ինչպէս որ կարելից եւ հաւատարիմ մայրերը այդ սովորութիւնն ունին եւ չեն փախաբիր որ չուայլութիւն ընեն իրենց գաւաղները :

Հրանտի մայրն ալ այդ կարգի կիներէն էր . որ կը խնայէր իր գաւաղը աւելորդ ծախքեր ընելէ :

Ե

Տակաւին քանի մը ժամ կար որ արեւը իր վերջին հրաժեշտ տար երկրիս կիսագնտին երբ Հրանտ եւ իր մայրը կը մտնէին Ձիֆթիկի պարտէզի երկաթէ վանդակափեղկերէն : Հրանտ իր ոտքը դրան սեմէն ներս դնելէն անմիջապէս յետոյ՝ սկսաւ շրջափրու ակնարկ մը ձգել խիտ կանաչագարդ ծառերու հովանիին ներքեւ նստած բազմութեան . կորոնէր բան մը որ ամենանուիրական էր իրեն , իր մագնիսական աչքերէն չէին վրիպեր մինչեւ խի ամենափոքրիկ առարկայները որ յաջանակաձեւ ճամբուն վրայ պտոյտ մը ըրին , եւ ա՜ն յայտնուեցաւ իր աչքերուն առջեւ իր փնտուածը՝ որ առանձնակի նստած էին կեդրոնէն քիչ մը հեռու մօրը հետ :

Երբ ատնը կանցնէին ուրուականի նման Վերգինէին առջեւէն : Օրիորդին մայրը շարժում մը ըրաւ որպէս վաղեմի ծանօթ . այդ խուլ եւ անհամարձակ հրաւէրը խնայն հասկըցաւ երիտասարդը եւ վայրկենապէս ամբողջ մը ցոյց տուաւ իր մօր : Երկու վայրկեանէն միացած էին իրարու՝ բարախող սրտերը մարմարէ սեղանի մը շուրջ :

Նախ երկու տիկիներ եւ յետոյ անոնց գաւաղները սկսան իրարու որպիսութիւնը հարցնել : Հրանտ իր մօր ներկայացուց երկու անծանօթուհիները այնպիսի գարմանալի ձեւով որ կարծես թէ անոնք վաղեմի ծանօթներ ըլլան :

Օրիորդը որ կըստատէր անհամբեր , լի հոգեկան քաղցր վրդովմամբ , իր սիրականին , հիմա երկուքը նստած էին իրարու դէմ , առաջին անգամ ուրախ եւ քաղցր ժպիտ մը յայտնուեցաւ աղջկան վարդագոյն շրթունքներուն վրայ , եւ իր մտրգարտանման սպիտակ ատամները կը տեսնուէին խօսակցութեան միջոցին՝ որ աւելի կը գեղեցկայնէր զինքը : Երկու տիկիներուն խօսակցութեան նիւթն էր տնային ներքին գոր-

ծերու վրայ . տիկին Բրաբիոն մերթ ընդ մերթ կը խօսէր Երանոս աղաի բնաւորութեանց առթիւ որ կը ներկայացնէր անիկա բարի եւ առաքինի անձ մը : Հրանտի մայրը խորին յափշտակութեամբ եւ զմայլմամբ մտիկ կընէր տիկնոջ պարծենկոտութեանց . իսկ ինքը գովելու արժանի բան մը չունէր բացի իր մէկ հատիկ զաւակէն եւ կուզէր ուրիշներէ ըսել իր որդիին վրայ գովաբանութիւն , առով ուրախութիւն կըզգար ան . իսկ կանացի բանբասանքներ ընելէ երբեք չէր ախորժէր :

Այսպէս երկու տիկինները ընդերկար տեսակցութեանէ յետոյ . տիկին Բրաբիոն հարցումներ ուղղեց երիտասարդին եւ համակրեցաւ անոր տուած պատասխաններէն՝ ուր պարծենկոտութիւն եւ ոչ ալ կեղծաւորութիւն կը նշմարուէին . ուստի սոյն համեստափայլ մօր եւ պարկեշտ երիտասարդին իր շնորհակալիքը յայտնելով ըստւ . — բաղդաւոր կը համարիմ ինքզինքս որ այս իրիկուն ձեզ տեսնելու եւ ծանօթանալու բաղդը ունեցայ :

— Փոխադարձաբար իմ խորին շնորհակալութիւնս կը յայտնեմ , տիկին , պատասխանեց Վարդուհի ամենայն քաղաքավարութեամբ , եւ ձեզմէ աւելի ես երջանիկ եղայ այսօր որ ազնիւ բարեկամուհի մընալ շահեցայ , թէպէտ եւ մենք բազմաթիւ ծանօթներ չունինք , բայց ունեցածնիս ալ ձեզի պէս ազնուական եւ բարձր դասակարգի պատկանող ընտանիքներ են :

— Եւ ես տիկին շնորհակալ եմ , աւելցուց երիտասարդը . որ ազնիւ զգացումներ կարտայայտէք մեր մասին :

— Մայրս , իր անկեղծ սրտի ճշմարիտ զգացումներն է որ կը յայտնէ , յարեց Վերդինէ , սաի պարտաւորութիւն մըն է , պարոն Հրանտ , զոր կը պահանջէ քաղաքավարութեան օրէնքը :

Երիտասարդը անընդհատ կը դիտէր օրիորդի շքեղութիւնըն ու պերճութիւնը եւ կը համակուէր իր սիրտը եւս քան զեւս անոր սիրովը : Ստեղծագործութեան այդ հրաշալի արարածը այսօր հազած էր բաց դեղնագոյն մետաքսէ թեթեւ շրջագոյն մը , կուրծքը զարդարուած էր ծաղիկներով , իր շիկագոյն մազերը սանտրած էր դէպի վերեւ եւ հիւսելէ յետոյ՝ ամիտիւմ էր գլխին գաղաթի վրայ : Այդ պատճառով

ազատ մնացած էր անոր սպիտակ բարձր ճակատը եւ կաթնաթոյր հիւանալի պարանոցը , մէկ խօսքով՝ չքնաղ օրիորդին ամբողջ տեսքը կը բուրբ տեսակ մը ջնաշխարհիկ բանաստեղծութեամբ՝ սրով խակոյն կը դիւթէր իր վրայ հայեացք ձգող ամէն անձնաւորութիւն : Վերդինէ ալ անհանդարտ՝ քաղցրիկ ժպիտը միշտ կը խաղար իր վարդագոյն շրթներուն վրայ եւ իր ամաքիչ անուշ հայեացքը գէթ բուրբ մը չէր հեռացներ Հրանտի վրայէն :

Առաջին անգամ իրարու հանդիպած երկու սիրահարներ կը խօսէին իրարու հետ աւելի սրտով քան թէ բերնով . եւ այսպէս երկուքն ալ հուստարտայէս կայրէին կը տօշորէին իրենց սրտին խորէն :

— Հրա՛նտ , եթէ տիկինը հրաման կուտայ . առէք օրիորդը եւ միատեղ պտոյտ մը ըրէք պարտէզին մէջ , ըսաւ երիտասարդին մայրը , նայելով տիկին Բրաբիոնի աչքերուն մէջ :

— Ի՛նչ ըսել է , տիկին , պատասխանեց Երանոս , ազաի կինը . եթէ Պ . Հրանտի ձանձրութիւն չըլլար կրնան պտոյտ մը ընել . եւ ես այս ստիկը շնորհակալ կըլլամ :

Երկու ախուր սիրտերը յանկարծ անասհման ուրախութեամբ լեցուեցան . Հրանտ ոտքի ելաւ եւ հրաւերի նշան մը ըրաւ օրիորդին՝ որ եւս կանացի յատուկ ամօթխածութեամբ հետեւելով երիտասարդին՝ խառնուեցան պարտէզի շուրջը պտոյտ ընող երկսեռ բազմութեան մէջ :

Առաջին անգամ Հրանտ համարձակութիւն ունեցաւ խօսիլ օրիորդի հետ , խօսակցութեան նիւթը բնութեան հրաշալիքներու վրայ էր , ցոյց կուտար իր սիրած ազջկան՝ պարտէզին ամենագեղեցիկ ծաղիկները որ սէր կը բուրէին :

Պարտէզի շուրջը պտոյտ ընող բազմութեան մէջէն երկու երիտասարդ Արգոսի աչքով կը դիտէին ծառերու մէջէն Հրանտը եւ Վերդինէն . այդ երիտասարդները մեծ ջանքեր ըրած էին օրիորդի հետ ծանօթանալու , բայց անոնք մինչեւ այն օրը չյաջողելով՝ իրենց բոլոր ջանքերը ապարդիւն մնացած էին . հիմա նախանձութիւնը իր բոլոր դժօրտային դոյնելով արթնցած էր անոնց սրտին մէջ . վաղուց կը ձանձնային

Օրիորդն ու Հրանտը : Բայց ուսկի՞ց ուր անոնք ծանօթացած էին իրարու , ա՛ն էր որ անհանդիսա կընէր երկու երիտաւարդները :

— Ես չուտով կը տեղեկանամ , ըսաւ մին , որուն սիրտը կը ծակէր նախանձը . եւ խտիոյն աներեւութացաւ :

— Պէտք է այս վայրկենիս ստոյգ տեղեկութիւն տանել , յորեկ երկրորդը չարամիտ ժպտաով մը :

Այս վերջինը կը պատկանէր բաւական հարուստ ընտաւանիքի մը . կալուածատէր եւ գոհարեղէնի վաճառականի մը որդին էր . հայրը կաշիատէր , կը շահէր եւ իր որդին կը վայելէր հարստութիւնը . դրօսասէր փճացնող որդին սովորութիւն չունէր գործի երթալ եւ իր ճակտի քրտամբը դրամ շահիլ . ամէն օր կայցելէր Պոլսոյ զանազան դրօսավայրերն ու շտաղուծեամբ կը վառնէր աշխատատէր հօր հարստութիւնը . մէկ խօսքով՝ կը վարուէր խղճի եւ աղնուութեան հակառակ : Իսկ միւս ընկերը որ մէկ ակնթարթի մէջ դեւի նման աներեւութացաւ , Հրանտի եւ Վերգինէի մասին ճշմարիտ տեղեկութիւններ հաւաքելու . ատ ալ գատարկագորտ երիտասարդ մընէր , առանց ո եւ է արհեստի տէր ըլլալով՝ ձեռնուռայն կը թափառէր այս կամ այն հարուստ երիտասարդ տղոց հետ , ու դրօսցնելով զանոնք միմտական ձեւերով՝ իր օրագահիլը կը հայթայթէր : Հիմա գտնելով քանի մը ծանօթներ , Հրանտը եւ Վերգինէն յոյց տալով՝ տեղեկութիւն խնդրեց : Ատոնցմէ մէկը որ Երանտո ազարի դրացիներէն էր , դուրսը վեր բարձրացուց եւ հայեացք մը թողլով իր շուրջը , պատասխանեց հեղձական կերպով . — Օ՛ օ՛ , ի՞նչ մեծ բաղդաւորութիւն , վախտաւորին աղջիկը աղքատ կնոջ որդւոյն հետ պոտոյտի եւ լըր է , յիրաւի այս երեւոյթը խիստ հետաքրքրական է , ասկից կարող եմ եզրակացնել թէ՛ օրիորդը սիրահարուած է երիտասարդին : Ե՛հ , բա՛րեկամ , ամէն մարդ սցալխի բաղդաւորութեան մը չարժանանար , աղջիկը ըստ բաւականի հարուստ , իսկ երիտասարդը չքաւոր : Երջանի՛կ ամուսնութիւն :

Գատարկագորտը իր բարեկամին այս խօսքերը լսելէ յետոյ՝ կայծակի արագութեամբ թռաւ , գնաց իր ընկերոջ քով եւ իր հաւաքած կարծիքները գուժեց անոր : Երկուքը միա-

սին շանթահարուած ընկան երկաթէ նստարանի մը վրայ եւ , իրենց կատաղի բարկութիւնը զրգռելու համար , սկսան սարսափելի կերպով օդի խմել . քանի մը վայրկենի մէջ մեծ քանակութեամբ ոգելից ըմպելիք սարսեցին մինչեւ որ ուղեղին տկարանալով՝ բոլորովին անզգայ վիճակի մատնուած մտցան ամեն ինչ :

9

Իրիւուն էր , արեւը դողդոջուն կը մանէր իր օթեւանը . վերջապէս կարմիր հրագոյն ներկերով երկնքի վրայ կը նըկարագրէր հազարաւոր կախարդական սրտկերներ :

Հրանտ եւ Վերգինէ պարտկոյն մէջ երկար ատեն շրջագայելէ յետոյ՝ դարձան իրենց ծնողացը քով : Երկու տիկիններ մեկնելու կը պատրաստուէին , բայց Վերգինէ նշան ըրաւ իր մօրը որ քիչ մը եւս համբերէ : Տիկին Բրաբիոն ընդունեց օրիորդի առաջարկը , եւ նոյն վայրկենին ժամանակ շահելու դիտաւորութեամբ խօսակցութեան նիւթ մը մէջ տեղ բերելով՝ սկսաւ կանացի հարցումներ ուղղել Հրանտի մօրը . եւ սոյն առիթէն օգուտ քաղելով երկու սիրահարեալները՝ նորէն սիրաբանութեան սկսան :

Մտոցանք ըսել թէ Հրանտ եւ Վերգինէ բաւական կոկիկ գողցիներէն կը խօսէին , ուստի սկսան այդ լեզուով , որ ներկայ եղողները չհասկնան անոնց խօսակցութիւնը :

— Կը յուսամ թէ մեր այս առաջին տեսակցութիւնը եւ բարեկամութիւնը սկիտի շարունակուի ասկից յետոյ , ըսաւ օրիորդը համեստութեամբ : Հրանտ առանձին համակրութեամբ մը նայելով օրիորդի երեսը՝ պատասխանեց . — Մեր բարեկամութեան շարունակութեանը եւ տեսական ըլլալու վախաբող եմ , օրիորդ , իմ սէրս եւ առ քեզ ունեցած հաւատարմութիւնս անկեղծ եւ ճշմարիտ են . բայց բան մը կայ որ ինձի հիմակուրէն անհանգստութիւն կը պատճառէ :

— Կը խնդրեմ , ձեզի անհանգստութիւն պատճառող կէտը բացատրեցէք , աւելցուց Վերգինէ :

— Կը ստակամ օրիորդ բացատրութիւն տալու , վասն զի այդ կէտը ուղղակի կիներու կը վերաբերի . եւ այդ պատճառով չեմ ուզեր որ վերաւորեմ ձեր փափուկ սիրտը :

— Այն ատեն միայն զիս վերաւորած կըլլաք , պարոն , երբ ձեր մտատանջութիւնները գաղտնի կը պահէք ինձմէ . իմ սկզբունքս է միշտ անկեղծ ըլլալ եւ կը սիրեմ հաւատալ որ դուք ալ անկեղծութիւնը կը յարգէք , ուստի կը խնդրեմ բացատրեցէք ձեր մտքը որ կարենամք զիրար հասկնալ :

Երիտասարդը Վերգինէի ազդեցիկ խօսքերէն խղճահարուելով , տխուր հայեացք մը թողուց իր սիրականին վրայ , եւ երկչառ համարձակութեամբ շարունակեց . — Օրիորդ , ինձի անհանգստութիւն պատճառաւ կէտը սա է թէ , կիները ընդհանրապէս փոփոխամիտ են . երբ մէկը անոնց հրապուրիչ խօսքերէն կը գրաւուի եւ գերի կըլլայ , յանկարծ օր մը երիտասարդի վտահալութիւնը եւ իր սիրուհւոյ վրայ ունեցած հաւատքը ի գերեւ կելլէ , ու այսպէս ստակալի աղետքի պատճառ կըլլայ այն փոփոխամիտ կիներ :

Բողեական լուսթեմէ ետքը՝ երիտասարդը կրկին շարունակեց . — Ես ուրիշ փաստեր ալ ունիմ կիներու փոփոխամիտ ըլլալը հաստատելու . գլխաւորաբար ձեզի նկատմամբ ալ շատ կասկածներ կրնամ ունենալ մեր սիրոյն տեւական չըլլալուն առթիւ : Մտիկ ըրէ՛ք օրիորդ , դուք գեղեցիկ եւ միանգամայն հարուստ էք . ճոխութիւնը , փառքը եւ երջանակութիւնը կրնան ձեզ օր մը սիրադրութ ընել . իսկ գաղով ինձի՛ ես փառազուրկ , աղքատ եւ անպաճոյճ վիճակի մէջ երիտասարդ մը եմ . դուցէ ժամանակէ մը ետքը , դուք զիս լքանէք եւ աւելի բարձր դասակարգի պատկանող երիտասարդ մը սիրէք : Հիմա ձեզի կը թողում այն դատողութիւնը թէ վերջը ի՞նչ կը լինի վիճակս : Իմ այս ըսածներս բնական է , չըլլայ որ յուզուիք , սիրելիդ իմ Վերգինէ . ի՛նչ որ ճշմարիտ է , ի՛նչ որ արդարացի է՝ ան կը խօսիմ ես :

Օրիորդը՝ որ խորին ուշադրութեամբ մտիկ կընէր երիտասարդին խօսքերը , լի հոգեկան զմայլմամբ պատասխանեց .

— Ձեր խօսքերը , ձեր դատողութիւնները այն սաստիճան ճշմարիտ եւ անկեղծ են որ ոչինչ պիտի կարողանամ պատաս-

խանել . դուք կը գանգատիք ձեր աղքատութեան վրայ . կը յիշեցնէք ինձի իմ ճոխ ու հարուստ վիճակս , բայց ներքեցէք ըսելու թէ սէրը երբեք յարաբերութիւն չունի ոսկիին եւ արծաթի հետ . այդ բոլորը կրնայ մէկ ժամուան մէջ ոչնչանալ , կրնայ սպառիլ , իսկ անկեղծ սէրը կը մնայ միեւնոյնը առանց ո՛ր եւ է փոփոխութեան . սիրոյ իտէալը այնպիսի արտ մըն է որուն առջեւ ամեն անգամ կը խնարհին մարդիկ : Այո՛ , սիրելի բարեկամս , ես ալ կը խոստովանիմ թէ կիներ ի բնէ փոփոխամիտ արարած մըն է , թուչնոյ նման մէկ ճիւղէն մուտը կը թուչի . Այդ կարգի կիները նախապէս չը սիրելով այն անձը , իբր բազդախնդիր չարագործ , «կը սիրեմ գեղը» խօսքը յաճախակի կրկնելով չարաչար կը խաբեն հասարակաց մէկ անդամը , եւ ահա կը տեսնես որ քիչ ատենէն կիներ առիթ կուտայ որ զինքը սիրող ու պաշտող անձնաւորութիւնը բաժնուի իրմէն : Խեղճ երիտասարդը չի կարենալով բացատրութիւն պահանջել անկից , վհատեալ եւ սրտաբեկ կը հեռանայ , ուխտելով որ ալ կին մը կամ աղջիկ մը չը սիրէ . դարձեալ կըսեմ թէ այդ կարգի պատկանող կիները , ընդհանրապէս , ազէտ եւ անբարոյական արարածներ են , որոնք կը սիրեն կեղծ յափշտակութեամբ : Ես բողբոլմին կատեմ այդպիսիները որոնց կեանքի խորհուրդը միմիայն ստութիւնն ու խաբէութիւնն է :

Վերգինէ այն համառօտ ձտը խիստ ազդու լեզուով արտասանեց . խօսած ատենը՝ պայծառ դէմքին վրայ կարտայայտէր իր սրտի բոլոր յուզմունքը . Օրիորդը , այդ գոյութեան մէջ կարելի էր նկատել զինքը դժբաղդութեան տխուր պատկերը՝ սիրոյ եւ գեղեցկութեան բոլոր վսեմութեամբ :

Տիկին Վարդուհի զարմանքով մտիկ կընէր եւ կը հիանար օրիորդի գաղղիներէն արտասանութեանը վրայ՝ , եւ հետզհետէ իր համակրութիւնը կուելնար . — Կը մտղթեմ որ իր նման գեղեցիկ եւ լեզուադէտ ամուսին մը ունենայ . ըսաւ Հրանտի մայրը , ցած ձայնով տիկին Բրարլոնի :

— Ծնորհակալ եմ , այդ ձեր ազնիւ զգացումն է , պատասխանեց Վերգինէի մայրը :

Հրանտ ոտքի ելաւ մեկնելու համար , միւսներն ալ հետեւեցան անոր , եւ յամրաքայլ կերթային :

Handwritten note: ամուսիններ

Ճամբան՝ ընդհատուած խօսակցութիւնները կրկին շարու- նակուեցան Հրանտի եւ Վերգինէի մէջ . տիկիները բաւական յառաջացած էին : Գիշերային խաւարը հեռոջետէ կը թանձ- րանար . բուսիներ ելլելու դեռ բաւական ժամանակ կար . այս անգամ դարձեալ օրիորդը կը խօսէր , նա անուզողակի կը բողո- քէր երիտասարդին այն բառի համար թէ «կիները փոփոխա- միտ են» . Հրանտ անկարող էր պատասխանել . արդէն այդ- չափ արդարացի պաշար չէր կարող գտնել իր մտքին մէջ եւ չէր դադարէր ներողութիւն խնդրել :

Երանոս աղաի տան մօտեցած էին , երբ օրիորդը վերջա- ցուց իր խօսակցութիւնը , եւ իր աչքերէն գլորեցան արցուն- քի քանի մը խօշոր կաթիլներ իր սպիտակ թշերուն վրայ : Նոյն ժամայն՝ երիտասարդը զգաց անոր արցունքին ջերմ կա- թիլները . իր շրթունքները շարժեցան անմեղ ժպիտով մը , եւ խորհրդաւոր համբոյր մը գրօջմեց օրիորդի գեղեցիկ դէմքին վրայ գիշերային մթութեան մէջ :

Այդ խորհրդաւոր խաւարի մէջ ուխտեցին զիրար սիրել մշտնջենասպէս , եւ յաւիտեան չբաժնուիլ իրարմէ :

Այդ համբոյրը արդարեւ այնպիսի բացառիկ համբոյր մըն էր՝ զոր երիտասարդի շրթները յաւիտեան չզոյտի դրօշմէին տարբեր այտի մը վրայ , ուրիշ համբոյր մը :

Տիկին Բրաբրոնի ծառան կսպասէր տան դրան մէջ : Տեսնելով իր տիրուհին , կոշտ ձայնով իմաց տուաւ Երանոս աղաի որ ստորին յարկի փոքրիկ սենեկի մը անկիւնը նստած՝ օգի կը խմէր : Օրիորդը իր մօրը մօտենալով ականջին վախաց թէ հիւրերը ներս հրաւիրէ ու Երանոս աղաի ներ- կացայնէ : Տիկինը կատարեց դատեր առաջարկը , եւ հրաւիրե- լով զանոնք՝ տարաւ վաշխառուի նստած սենեակը : Երբ մայր եւ որդի սենեկէն ներս կը մտնէին , աղան առաջին անգամ անտարբեր կը շարունակէր բազուսի արարողութիւնը , եւ երբ սենեկին մէջ աղմուկ մը լսեց՝ այն ատեն իր ուշադրութիւնը դարցուց անձանօթներուն վրայ : Օրիորդը առաջ անցնելով՝ տիկինը եւ որդին ներկայացուց , Երանոս աղան իր մօտէն վեր առաւ փոքրիկ թիթեղեայ տուփ մը՝ որուն մէջէն դուրս ա- ռաւ ակնոց մը եւ իր վիթխարի քթին վրայ գետեղելով , ակ-

նորկ մը ձգեց հիւրերուն վրայ : Գաւաթ մը օգի ալ խմելէ յետոյ՝ բարի դալուստ մագթեց եւ որպիսութիւններն հարցուց :

Տիկին Բրաբրոն վափաք յայտնեց հիւրերուն որ ամէն անգամ այցելութիւն տան , առարկելով թէ իրենք՝ մայր եւ աղջիկ են . տանը մէջ մինակ են , կը նեղուին եւայլն եւայլն :

Երանոս աղան . որուն գլուխը բաւական լեցուած էր օ- ղի շոգիով . այս անգամ ակնոցին վրայէն նայելով ըստ .

— Շանրմ , մենք այս տեղ չորս պատի մէջ մնացեր ենք , ձեզի նման դրացիներ տնինք , դանկ օր մը չէ՞ք հրամայեր որ տեսութիւն ընենք , իրար հասկնանք : Գիտեմ Պոլսեցիները քիչ մը սայղքը մարդիկ են , չեն ուզեր որ անհանգստութիւն պատճառեն . մենք սափսեքուն ծառաներ ենք , այդպէս սովորութիւններ չունինք եւ կարեւորութիւն չենք տար : Տունը ձերն է , երբ որ ուզէք հրամայեցէք :

Երանոս աղաի սոյն խօսակցութեան միջոցին , ծառան մատուցարանի (Թէփսի) մը վրայ դրած սուրճ բերաւ , հիւրե- րուն հրամայուց : Վաշխառուն կրկին խօսքի սկսաւ :

— Տիկին , այս երիտասարդը ձեր որդի՞ն է :

— Այո՛ , եթէ Աստուած պահէ :

— Շատ սուրբի , արհեստը ի՞նչ է :

— Վաճառականի քով դրադիլ է :

— Չօրսածիդ հայ է թէ ֆրէնկ է :

— Հայ է , մանիֆսթաւրօյի վաճառական է պատասխա- նեց Հրանտ :

Երանոս աղան օգիի գաւաթը լեցնելով , իր հարցումը շարունակեց . — Ֆայիզի հաշիւները դժժ է կընէք :

— Այո՛ , տոկոսի հաշիւներն շատ դիւրաւ կարող եմ կա- տարել :

Մաշալլան , Աստուած հաստատ պահէ :

Երանոս աղան ուրիշ հարցումներ ալ ընելու կը պատ- րաստուէր , երբ տիկին Վարդուհի ոտքի ելաւ եւ մեկնելու հը- րանան խնդրեց :

— Կերթա՞ք , կամքը ձերն է . երթա՞ք բարով , նորէն հրամայեցէք . ըստ անքաղաքավար կերպով , տուանց նստած տեղէն շարժելու :

Հրանտ եւ մայրը վերջին անգամ շնորհակալութիւն յայտնելով մեկնեցան . գոհ մնալով նոյն օրուան զբօսանքէն :

Օրիորդը կրկին պատուիրեց երիտասարդին որ յաճախակի այցելէ :

Հրանտ գլուխը խոնարհեցնելով խօստացաւ ազջկան եւ խօսոյն հեռացաւ .

Նոյն ժամայն լսելի եղաւ օտար ձայն մը :

— « Դուք կը խօստանաք ձեր սիրով ցկեանս հաւատարիմ մնալ միմեանց . բայց ես այս վայրկեանէս կերզեում որ երբեք չը պիտի վայելէք այդ բաղդաւորութիւնը » ըսաւ եւ աներեւութացաւ մթութեան մէջ :

Դա գիշերային չար ոգիին ձայնն էր :

Ե

Անցան քանի մը շաբաթներ . Հրանտ ալ ընտանեցած էր Վերգիլնէի հետ . երկու ընտանիքներ ջերմ սիրով կապուած էին իրարու . ժողտարձ այցելութիւններ եւ գիշերային հաւաքումներ տեղի կունենային , եւ շատ գիշերներ ալ Հրանտ ստանելով օրիորդը իր հետ , պտոյտի կելլէր : Երանտ աղան տեղեկութիւն չունէր անցքերուն վրայ . ամեն իրիկուն , ըստ սովորութեան , կանուխէն գլուխը օղիով տաքցնելէ յետոյ կը ճաշէր եւ վերջին պատուը բերանը՝ անկողին կը մտնէր : Եթէ այդ նախապաշարեալ խիստ բնաւորութեան տէր գաւառացին գլխանար որ իր ազջկան հետ երիտասարդ մը գիշերային խաւարի մէջ կը թափառի՝ սիրաբանութիւններ ընելու , խօսոյն կարգիլէր անոր մուտքը իր ընտանիքի մէջ : Երանտ աղան որչափ որ իր բնաւորութեամբը վայրենի էր , միեւնոյն ժամանակ պատուոյ նախանձախնդրութիւնը կը պահպանէր իր մէջ , որպէս զի ընտանեկան անպատուութիւն մը չը ծագի . խորին եւ դառն ատելութիւն ունէր դէպի անբարոյակամութիւնը : Այդ մասին գովելի էր իր յատուկութիւնը :

Օրիորդին մայրը ամէն անգամ դիւրութիւններ կուտար իր

ազջկան . Հրանտի հետ տեսակցութիւն ընելու մասին . ծանօթ էր ամէն գաղանիքներուն . մայրական սիրով կամուորապէս կօգնէր իր զաւակին , որպէս զի վայելէ ուրախութեան եւ սիրոյ ժամերը :

Լուսնկայ գիշեր մը . Հրանտ եւ Վերգիլնէ նստած էին Երանտ աղաի տան պարտիզի ծառերու խորին ստուերի տակ եւ սիրոյ քաղցրիկ թուփեր կանցնէին : Երիտասարդը ամէն անգամ իր սիրուհին տեսնելուն՝ անոր վրայ կը տեսնէր նոր թարմութիւն մը , նոր չքնաղութիւն մը , հրապուրանք ու հրաշալիք մը , եւ ամէն ատեն նորանոր ուխտեր կընէին իրարու հաւատարիմ մնալու :

Տիկին Բրաբիոն այն իրիկուն չէր երեւար , երկու սիրահարներու հոգեգմայլութիւնը իր ներկայութեամբ չխանդարելու եւ անոնց անհանգստութիւն չը պատճառելու համար . այս իրիկուն կանուխէն անկողին մտած էր :

Լուսինը մերթ ընդ մերթ կը մտնէր ամպերու բեկորներու տակ եւ գիշերային խաւարը կը թանձրանար , երբեմն ալ այդ արգելիչ ամպերը փարատուելով լուսինը՝ կերեւէր եւ իր դունատ լցոյց կը սփռէր աշխարհի վրայ :

Երկու ամուսնեքը սովորականէն աւելի ուրախ եւ զուարթ էին , մանկահասակ օրիորդը երիտասարդի քաղցր խօսքերէն յախշտակուած՝ անբացատրելի ուրախութիւն զգաց եւ թուլացաւ ինկաւ երիտասարդին գիրկը :

Երիտասարդը խորշելով օրիորդին յուզմունքէն , ողորմելի կերպարանք մը ստացաւ , կարծես կաշխատէր խոյս տալու այն արարածէն որուն պատճառով գուցէ վրասուէր բարոյական տեսակէտով . խղճահարութեան զգացումը կը տանջէր զինքը , պէտք է հեռանալ ըսաւ մտովին , եւ հրաման խնդրեց օրիորդէն մեկնելու : Ժամանակը բաւական անցած էր , Վերգիլնէ չընդդիմացաւ , եւ երիտասարդը համբուրելով իր սիրականին ձեռքը՝ ուրուականի նման անհետացաւ մութին մէջ :

Հինգշաբթի օր մը երբ Երանտ աղան խանի սենեակը նստած պայմանաժամը անցած վճարելի մուրհակները կարգի կը դնէր , իր սենեակին դուռը ձանձալով բացուեցաւ , եւ սենեակը կրեւաց եօթանասուն տարեկան անձ մը արեւելեան

տարազով : Այս մարդը իր բարեւը տալէն յետոյ եկաւ նստեցաւ վաշխառուին դիմացը բզկտուած օթոցի մը վրայ :

— Բարի եկար , աղա՛ թորոս , խեր է անշուշտ հոս դաւլուդ պատճառը . եղբա՛յր , բոլորովին մոռացաք ձեր վաղեմի բարեկամը . գտնէ միտտեղ կերած խմած օրերնիս միտքը բերելով եկուր , տեսութիւն մը ընենք . ադ ի՞նչ անտարբերութիւն է , հիջ չես ըսեր թէ սա մարդը մեռա՞ւ , կորա՞ւ , ի՞նչ եղաւ . այսպէս է մարդկութեան օրէնքը . յարեց Երանոս աղան խորամանկ նայուածք մը թողլով նորեկին վրայ :

— Պէ՛ ճանրմ , մեր գլուխէն փորձանքը պակաս չըլլար . ճշմարիտ , հաւատացէք որ գլուխ քորելու ժամանակ չունիմ , Ֆայիզնուծին ըսածդ անանկ գործ մըն է որ եթէ պարտատէրը խօսկալամիջ չընես , փորըդ չի կշտանար . ձեռքովդ կուտաս սակիները եւ յետոյ ստքովդ կերթաս հաւաքելու . սնտուկ մը թէմէսիկ ունիմ . մեր ընկեր եղած ժամանակէն մնացած բաւական մուրհակներ մինչեւ այսօր անվճար կը մնան :

Երանոս աղան ընդամիջելով անոր խօսքը՝ հարցուց . — Օհանդ ի՞նչ կընէ , շատոնց է չեմ տեսած զինքը . պէտք է որ ան աշխատի այդ գանձելի մուրհակները մաքրել , փոխարէնը ստանալով :

— Այն խեղճն ալ կաշխատի , գիշեր ցորեկ առնելիքնուրուն ետեւէն կը վազէ . եթէ ան չըլլայ , ես բան մը չեմ կարող ընել :

Օհան վաշխառու թորոսի որդին էր , ըստ բաւականի խորամանկ եւ վաշխառուի արհեստին մեջ ճարպիկ . գրեթէ բոլոր վաշխառուները կը գերադասեցիր իր անխղճութեամբն ու անպնդուութեամբը մեծ հարստութիւն դիզած էր . ախողջ դաւառացի հայ պանդուխտները գրաւած էր իրեն , որոնց երբ դրամ պէտք ըլլար՝ կը դիմէին Օհանի , եւ անիկա խիղջ կը կատարէր անոնց խնդիրքը , պահանջուած գումարը դրկելով պանդուխտներու ընտանիքին , եւ բաւական էր որ անգամ մը աշխատասէր մշակին քթէն բռնէր , ալ անկից յետոյ պարտաւոր էր անիկա աշխատիլ միշտ Օհանի հաշիւին :

— Այս տարի Օհանը հայրենիք պիտի խրկե՞ս , հարցուց Երանոս աղան :

— Ի՞նչ գործ ունի հայրենիք , կինը մեռնելէն իվեր՝ ա՛լ հայրենիքի անուեր չի տար , այս տեղ ամուսնանալ կուզէ . շխտակը ես հաւանութիւն չեմ տար որ Պոլսեցի կնոջ հետ ամուսնանայ , պատճառը գիտես . դու ալ այս տեղ ամուսնացար եւ գլուխդ փորձանքի հանդիպեցաւ : Չեմ գիտեր ինչո՞ւ մեր բնաւորութիւնը չի յարմարիր Պոլսոյ կնիկներուն բնաւորութեանց :

— Եթէ հէլալ կաթ ծծող աղջիկ մը գտնես այս տեղ , գէշ չէ . բայց տիխաթ ընելու է որ ազնուականի գաւակ ըլլայ :

— Շիտակը այս բանին համար է որ այսօր քեզի մօտ եկայ . դու մեր հին բարեկամն ես , հեմշէրի ըլլալէ զատ տասն եւ ութ տարի մէկ գաւաթէ ջուր ենք խմեր քեզի հետ . Օհանը որչափ որ իմ գաւակս է , ձերն ալ կը համարուի . դու զինքը խիտ մօտէն կը ճանչնաս , անոր բնաւորութիւնն ու ճարպիկութիւնը ամէնուս ծանօթ է :

Դուք այդ մասին անհոգ եղիք , ես սիրով կաշխատիմ ձեր որդւոյն համար ազնուական աղջիկ մը գտնել , պատասխանեց Երանոս աղան կեղծ ժպիտով մը :

— Ուղ ըլլաք , ես գիտեմ որ այսպիսի բարիքներ կընէք , եւ արդէն դիւրութիւններ ունիք . որովհետեւ դուք այստեղ ընտանիքի տէր էք . շատ ընտանիքներ , շատ աղջիկներ կը ճանչնաք : Եղբայր , մենք խանի քէօշէն մնացած մարդիկներ ենք : Այսպիսի կեանքական խնդիրի մը մէջ ձեզի նման բարեկամի մը միայն կրնամ հաւատարմութիւն ընել :

Երանոս աղան քանի մը վայրկեան խոր մտածութեան մէջ խնկաւ , եւ րոպէական լուութենէ յետոյ հարցուց . — Օհանը տուն փեւայ երթալ կուզէ՞ , թէ ոչ ամուսնանալէ յետոյ զատ բնակութիւն պիտի հաստատէ :

— Տուն փեւայ ինչո՞ւ պիտի երթայ , փառք Աստուծոյ մենք աղքատ չենք , մեզի համար ամօթ բաներ են երթալ ուրիշ տունը նստիլ եւ անոր հացը ուտել . գիտէք որ մեր երկրի մէջ այսպիսի սովորութիւններ չունինք : Այս տեղ երբ մէկը ամուսնանայ , խիղջն տուն փեւայ երթալը կառաջարկէ , որպէս զի իր ապագայ սպրուստը ապահովէ . ո՛չ , ո՛չ , մենք

միայն աղջիկ մը կուզենք . թող մերկ ըլլայ , ազքատ ըլլայ , հոգ չէ . միայն թէ պատուաւոր մարդու աղջիկ ըլլայ :

Երանոս աղան , աղա Թորոսի սոյն խօսքերէն քաջալերուելով , յանկարծ խորհուրդ մը ծնաւ իր մտքին մէջ թէ Օհանի կնուծեան համար իր աղջիկը առաջարկէ . — Եթէ յաջողիմ , կըսէր մտքէն , այն ատեն գործս աւելի ընդարձակ պիտի ըլլայ , Օհանը թէ՛ հայրենակից է ինծի եւ թէ՛ արհեստակից : Ես քանի մը տարի եւս պիտի կարենամ շարունակել գործս . խոր ծերութեանս ատեն ան պիտի օգնէ ինծի . անկից աւելի յարմար փեսայ ես չեմ կարող գտնել . խսմէթը ոտքս եկած է , չիխայցունելու համար՝ անգամ մը Թորոս աղան առաջարկեմ , տեսնենք ի՞նչ արդիւնք կունենայ . եթէ յարմարինք , սոյն ատեն բազումը պիտի համարիմ ինքզինքս : Երբ մէկ կողմէն Երանոս աղան սոյն երեւակայութիւններով կը դառաղեցնէր իր զառամեալ ուղեղը , միւս կողմանէ աղա Թորոսը՝ այդ ամենախորամանկ գաւառացին գուշակած էր անոր մտածութիւնը . արդէն այսօր եկած էր իր հայրենակցի մօտ՝ ուղղակի անոր աղջիկը իր սղուն կնուծեան ուղեւրու . բայց իր անձնասիրութիւնը թոյլ չէր տար որ համարձակէր այդ առաջարկութիւնն ընելու , վախնալով թէ իսկոյն կը մերժուի իր առաջարկը . հիմա առիթը այնպէս բերած էր որ Երանոս աղան՝ աղջկան հայրը պիտի առաջարկէր ծեր վաշխառուին , թէ ինքը պատրաստ է իր աղջիկը տալ կնուծեան Օհանին :

— Երանոս աղա , այդ որչա՞փ մտածեցիր իմ փոքրիկ մէկ առաջարկութեանս վրայ , զարմանալի բան , եթէ իմ որդւոյս աղջիկը ուզէի , այն ատեն ի՞նչ պիտի ընէիր :

Երանոս աղան ծերուկի սոյն խօսքերէն համարձակութիւն առնելով , իր կնծիւններով պատած ճակատը շօշափեց ու ըսաւ .

— Ի՞նչ պիտի ընէի , այն բանը Աստուծոյ հրամանաւ է . պիտի տայի աղջիկս , Օհանըդ իմ սիրած մարդն է :

— Ծնորհակալ եմ . այդ ձեր ազնուութիւնն է . հիմա խնդիրը պարզուեցաւ . հիմա անկեղծօրէն խօսինք եւ իրար չըխաբենք պատասխանեց աղա Թորոսը , եւ մէջքի գօտիէն դուրս աւաւ քթախտալ արծաթէ տուփը եւ երկու անգամ այդ սեւ

փոշին երկու մատներուն մէջ փոքրիկ բլուր մը ձեւացնելով՝ քթին քաշեց ու սկսաւ խօսիլ . — Այսօր ես եկայ ուղղակի ձեր համեստուհի աղջիկը խնդրել որդւոյս կնուծեան համար . բայց չիտակը ըսելով այս առաջարկութիւնս ընելու համարձակութիւն չունեցայ . քանի որ կը խօստանաք , մենք ալ այս կիրակի Օհանի հետ կուգամք ձեր տունը եւ վերջնականապէս նշանախօսութիւնք կը կատարենք երկուստեք համաձայնութեամբ , եւ քիչ օրէն ալ հարսնիքը կընեմք փառաւորապէս ու գործը կը վերջանայ : Եթէ այս բոլորը կընդունիք , հիմակուրէն , ինծի վերջնականապէս խօսք տուէք :

— Կնդուելիմ ձեր առաջարկը , ըսաւ Երանոս աղան դողդոջուն ձայնով . գործը վերջացած համարելով , կիրակի օր հրամայեցէք ձեր որդւոյն հետ :

Երկու վաշխառուներու սիրտը լեցուեցան անսահման ուրախութեամբ . քանի մը փայլուն խօստուճներ եւս ուղղեցին իրարու : Աղա Թորոսը շուտով իր որդւոյն հասցնելու համար սոյն տեսակցութեան արդիւնքը , աճապարանօք մեկնեցաւ , խրոխտալով իր յաջողութեանը վրայ :

Երանոս աղան ուրախութեանը չափ չիկտր , ան ալ կասկածաբէր սոյն բարի լուրը տանելու իր կնոջ . բայց վաշխառուն չէր գիտեր թէ այսօրուան հապճեպով իր տուած որոշումը պիտի մերժուեր վերգինէի կողմանէ : Հիմա մտաւորական զարգացմամբ օժտուած , կեանքի սրայմաններուն ծանօթ կան փափուկ եւ նագելի արարածը բռնի պիտի կառելին կաշկանդէին ամուսնական կապով , կոշտ , վերջին աստիճան տգեղ եւ ամէն զգացումներէ զուրկ անձնաւորութեան մը հետ : Այդ անկարելի պիտի ըլլար անշուշտ : Բնական է որ օրիորդը բողբջիր այդ ընտրութեան դէմ : Տեսնենք այդ ծանրակշիւ խնդիրը ինչպէս պիտի լուծէին իրենց մէջ :

Երանոս աղան իր սրտի բերկրութենէն եւ անբացատրելի ուրախութենէն ալ չկրցաւ զբազլիլ չվճարուած մուրհակներու խնդիրով . կրկին լեցուց այդ մրտած թղթի կտորները իրենց յատկացեալ տոսրակները եւ դրուաւ երկաթէ արկղի մը մէջ , եւ մինչ ինք հազարաւոր եւ խառնափնթոր երեւակայութեան մէջ էր , նոյն ժամայն քանի մը գաւառացի կապալներ սեւ

եակէն ներս մտան վաշխառուէն փոխ դրամ ուզելու, բայց անիկա ամեն ինչ զոհելով խնայ տուաւ, թէ ալ արկղը գոցած է եւ մեկնելու պատրաստուած. ուստի հետեւեալ օրուան թողուց դրամական փոխատուութիւնը:

Պանդուխտները մեկնեցան գլուխնին ծռած:

Անցաւ քանի մը վայրկեան: Վաշխառուն չնայելով իր տարիքոտ հասակին, նապաստակի սէս նստած տեղէն վեր թռաւ. աղա թորոսի այս օրուան առաջարկութիւնը այն աստիճան գրաւած էր իր հոգին՝ որ անոր երեւակայութեանը մէջ իր փեսացուէն ուրիշ բան մը չկար. կարծես իր ամբողջ էութիւնը այդ մարդուն հետ կապուած ըլլար: Սենեակը գոցեց եւ ածապարանքով իր քայլերը ուղղեց դէպի կամուրջ շոգենաւ նստելու համար:

Ը

Կէս օրը անցած էր ճիշտ երկու ժամ, Երանոս աղան ահագին տոպրակ մը ի ձեռին՝ տանը փողոցին դռնէն ներս մտաւ: Տիկինը որ տնային գործերով զբաղած էր, լսեց իր ամուսինին գալը, եւ սանդուղներէն վար իջաւ այդպէս կանուխ գալուն պատճառը հասկնալու համար: Երանոս աղան սովորութիւն ունէր, տանը դռնէն ներս մտնելու ժամանակ զարմանալի աղմուկով իր գալուստը կիմացնէր տանը մէջ գլուխուղներուն. կարծես մուտենիկ մընէր որ դռնէն ներս կը մտնէր բարձրաձայն աղաղակելով: Խոհարարը դիմաւորելով, աղան ձեռքի տոպրակը առաւ: Երբ դրաստի բեռը թեթեւնայ, կըսկսի խաղալ. նայնպէս ալ Երանոս աղան սրտի բերկրութենէն սկսաւ կատակներ ընել. հողիւ կրցաւ ինքզինքը բռնել. եթէ ոչ փողոցէն պիտի գուժէր աղջկանը ամուսնութեան խնդիրը Օհանի հետ:

Նոյն ժամայն տիկինը վրայ հասնելով հարցուց. — Այսօր ինչո՞ւ սովորականէն աւաջ եկար. արդեօք բա՞ն մը պատահեցաւ, հիւանդացա՞ր, ի՞նչ եղար:

— Փառք Աստու, ինչո՞ւ հիւանդ ըլլամ. բան մընալ

չունիմ. պատասխանեց Երանոս աղան՝ իր դունաւոր թաշկի-նակովը երեսի քրտինքը սրբելով:

— Այսչափ կանուխ վերադարձդ առաջին անգամն է որ կը տեսնեմ. աւելցուց տիկինը, եւ կատակաւոր ակնարկ մը ձգեց ամուսինին վրայ. երկուքը միատեղ մտան Երանոս աղաի սենեակը: Կինը անհամբեր կըստիպէր որ շուտով բացատրէ կանուխ դառնալուն պատճառը:

Երանոս աղան ախորժելի ժպիտով մը բռնեց իր կնոջ ձեռքէն եւ շրջահայեաց կերպով մը ըսաւ. — Գիտե՞ս, Բրա՛բիտն, այսօր որչափ ուրախ եմ. բովանդակ կեանքիս մէջ երբեք չէ պատահած ինծի այսօրուան զգացած ուրախութեանս չափը. ահա, այս պատճառաւ է որ այս իրիկուն կանուխ դարձայ սենեկէս:

— Բայց կաղաչեմ, շուտով ըսէք ձեր ուրախութեան շարժառիթը: Տիկինը անհամբերութեամբ կը փախաքէր լսել իր ամուսինն աւետարներ լուրերը:

Վաշխառուն տգեղ դէմքին վրայ երեւաց դիւական ժպիտ մը. իր բերանը մօտեցնելով տիկնոջ ականջին ըսաւ. — Այսօր Վերգինէս եկան կնութեան ուղեցին:

— Ո՞վ է ուղղը եւ որո՞ւ համար:

— Մեր հայրենակիցներէն աղա թորոսի որդւոյն Օհանի համար:

— Ի՞նչ պատասխան տուիր:

— Ամենայն ուրախութեամբ ընդունեցի թորոս աղաի առաջարկը, եւ յառաջիկայ կիրակի օրուան համար հրաւիրեցի զիրենք որ նշանը բերեն ու լմնցնենք գործը:

Երանոս աղաի խօսքերը սարսափահար ըրին Բրաբիտնը, եւ իր սրտին յեղակարծ բարախումէն ինկաւ աթոռի մը վրայ: Երկիւր տեսնելով իր կնոջ յուզուած դէմքը, սկսաւ բարձրաձայն նախատալի խօսքեր ուղղել: Կինը ողբալի ձայնով ըսաւ. — Ի՞նչ ըրիր դու, մէկ հատիկ աղջկանդ մահուան պատճառ պիտի ըլլաս: Գիտցիր որ այս ամուսնութիւնը անկարելի է: Գոնէ անգամ մը ինծի հետ խորհրդակցելու պարտաւոր չէ՞ր դու. քառասուն եւ հինգ տարեկան այրի մարդու մը կնութեան տալ տանն եւ եօթ տարեկան աղջիկ մը. ես իբրեւ մայր ի՞

բաւուճք ունիմ արգիլելու այդ անբնական եւ ծայրահեղ ա-
մուսնութիւնը . վաղը գնա՛ , անմիջապէս ազա թորոսդ գտի՛ր ,
եւ առանց մտածելու , տուած խօստուումդ ետ առ :

— Ի՞նչ , տուած խօստուումս ետ առնե՛մ , գոչեց Երանոս
աղան իր յատուկ կատաղի ձայնով , իմ հայրենակցիս առջեւ
խայտառակ ըլլա՛մ . երբեք , երբեք , ես այդպիսի վատութիւն
չեմ ընդունիր . իմ առածս առած է , տուածս ալ՝ տուած :

— Ուրեմն դու կը փախաքիս որ աղջիկդ մեռնի :

— Թո՛ղ մեռնի աղջիկս , բայց ես խոստմնադրուծ չեմ
կարող ըլլալ , ըսաւ վաշխառուն ամենայն պաղարիւնութեամբ .
վասն զի ամէն գործի մէջ միօրինակ էր իր անտարբերութիւնը ,
որդիական եւ ընտանեկան սէր եւ գութ նշանակութիւն չու-
նէին իր առջեւ , ուստի սոյն մահու եւ կեանքի խնդրին մէջ
ալ ոչ զաւակի ժպիտը եւ ոչ ալ կնոջ արցունքը կարող էին
գրաւել անոր քարացած սիրտը : « Թո՛ղ մեռնի աղջիկս » բա-
ռերը ճշմարիտ ասպարոյց մընէին անոր խտտարտութեանը ,
տիկնոջ ալեկոծուած կուրծքէն դուրս կը թուչէին անընդհատ
մայրական հառաչանքներ : իր բոլոր գորութեամբ կը մաքա-
ռէր իր վայրենացած էրկանը դէմ . — Անկարելի է որ այդ
ամուսնութիւնը կատարուի , ըսաւ տիկինը . ես ամէն ինչ պի-
տի գոհեմ , որպէս զի ձեր ամբարտաւանութիւնը ջանջախեմ ,
մենչեւ իսկ աղջիկս առնելով ինծի հետ , պիտի հեռանամ քեզ-
մէ . իմ անգոր թեւերուս մէջ պիտի պաշտպանեմ զինքը , այն
ատեն դու չպիտի կարենաս յանդգնել կործանիչ խուրհուրդ-
ներդ ի գործ դնել . մէկ հատիկ աղջկանս սիրոյն համար , անոր
ասպազայ երջանկութեանը համար , ես պատրաստ եմ մինչեւ
անգամ մեռնիլ :

— Բայց , պէտք է զխոնաք որ երբ իմ կամքիս կը հա-
կառակիք , մնասք դուք պիտի կրէք , գոչեց վաշխառուն գա-
զանային բարկութեամբ . եթէ իմ ընտրած անձը չպիտի ըն-
դունիք , այն ատեն աղջկանս ուրիշի մը հետ ամուսնութիւնը
բողոքովին պիտի արգիլեմ , դուք ալ երբեք համգիտ չպիտի
ըլլաք , ընտանեկան սոսկալի երկպառակութիւնը անպակաս
պիտի ըլլայ այս տանը մէջէն . իբրեւ օտար պիտի նայիմ ձեր
վրայ . ահա այս է վերջնական որոշումս , մտածէ՛ , մինչեւ

վաղ առաւօտ շատ ժամանակ ունիք : Այս բոկով Երանոս ա-
զան ինքզինքը սենեկէն դուրս նետեց եւ գնաց պարտէզին
մէկ անկիւնը նստաւ : Նոյն ժամայն Վերդինէ վերնայարկէն
վար իջնելով տիկնոջ հարցոց իր հօր բարկութեան պատճա-
ռը : Մայրը ոչինչ չը պատասխանեց . անկիւ վերջին ատի-
ճան յուզուած էր : Օրիորդը շփոթած կրկին եւ կրկին հար-
ցոց երկպառակութեան շարժառիթը : Մայրը , փոխանակ
պատասխանի , բռնելով օրիորդի ձեռքէն տարաւ իր սենեա-
կը եւ մի առ մի պատմեց անոր նոյն օրուան անցքերը ,
որ տեղի ունեցեր էին իր հօր եւ ազա թորոսի մէջ :

Օրիորդը երբ լսեց այս գուժկանը , կարծես փոթորիկ մը
պայթեցաւ սրտին մէջ , եւ կուրծքին տրտիւնէն շնչարգել
ինկաւ գունաթափ մօրը ծնդացը վրայ :

Քանի մը վայրկեան մայր եւ աղջիկ մնացին լուռ եւ ան-
բարբառ : Ապա դժբաղք օրիորդը ուշաբերելով , ջաւագին
ակնարկ մը նետեց տիկնոջ երեսին եւ յուզուած ձայնով ըսաւ .

— Հրէշը՛ , հիմա կը հասկնամ թէ ան հայր կոչուելու հան-
գամանքներէ զուրկ մէկն է . բայց թող դիտնայ որ իր նպա-
տակին երբեք չպիտի կարողանայ հասնիլ այդ միլեւանդ եւ
նախապաշարեալ հայրը . պէտք է դիտնայ եւ համոզուի թէ ,
ինչ միջոցներ ալ գործադրէ մեր վրայ , դարձեալ անկարելի
պիտի ըլլայ բաժնել զիս իմ սիրած երիտասարդէն . անկարող
է մեր երկուքի սրտերը իրարմէ անջատել , այս վայրկեանէս
սկսեալ իբրեւ հայր չեմ կարող նայիլ անոր , կը խորշիմ ան-
կից Ո՛հ , մայր իմ , այս ի՞նչ անբաղգութիւն է որ պա-
տահեցաւ մեզ :

— Աղջիկս , կարծես թէ մեր ձակտին վրայ դրօշմուած
անէճք մը կայ որ անդադար կը հալածէ մեզ :

— Շատ ճշմարիտ է այդ , պատասխանեց Վերդինէ հա-
ռաչելով եւ այդ անէճքը մենք կը ժառանգենք դարձեալ այդ
մարդուն պատճառով : Հաւատացէք , մայր իմ , որ մեր կե-
րած հացը քրտինքով շաղխուած է , վաշխառուի մը զաւակը
ըլլաւ անբաղգութիւն կը համարիմ , հազարաւոր մարդոց
ձակտի քրտինքովը շահուած դրամի մէկ մասն է որ մեզ կը
անուցանէ : Հայրս յախշտակելով անթիւ պանդուխտ մշակիւ-

բու. քրտինքին արդիւնքը, հարատւացած ու փարթամացած է : Համազուէ, մայր իմ, որ այդ ողորմելի մարդոց բերնէն աւանկձքէ վատ ուրիշ խօսք չելլեր, եւ անշուշտ այդ արդարացի անկձքները մեր գլխուն վրայ կը թօթափին : Եթէ այս ամէն ճշմարտութիւնները զխնայիր ու զգայիր, այն ատեն քու խիղճդ ալ իմինիս պէս անհանգիստ պիտի ըլլար . դու ալ պիտի ատէիր այս անիծեալ կեանքը : Ո՛հ, իցի՛ւ թէ իր ապրուստը ազնիւ միջոցներով հայթայթող անձի մը զաւակը ըլլայի, այն ատեն ճակատարաց պիտի կարենայի պարծենալ . իսկ հիմա երբ կը մանեմ ամբոխի մը մէջ, ամօթն ու արհամարանքը կը պաշարէ զիս, ամենուն երեսը մեղապարտի նման չեմ կարող ազատօրէն նայիլ, վասն զի ամէն ոք ծանօթ է, ամէն ոք գիտէ թէ մենք ո՛րու շնորհիւ կապրինք : Մինչեւ ցարդ կը փախաքէի բացատրել քեզի այս բոլոր ճշմարտութիւնները, բայց մանկական հպարտութիւնն ու կանացի եսականութիւնը թոյլ չտուին ինձի ընել այս սարսափելի խոտտովանութիւնը, եւ ահա առիթը եկաւ որ այդ հպարտութիւնը խորտակեմ, կեղծ ու խաբուսիկ մտիթարութիւններէ հրաժարելով ճշմարտն ու արդարը խօսիմ : Հիմա ես հաշտուած եմ խղճիս հետ . ալ եւս այդ սոսկալի մտածութիւնները չեն ալեկոծեր խորտակուած սիրտս . ա՛հ, մայր, եթէ դու իմ սիրտս քննելու ըլլայիր, անոր մէջ պիտի գտնէիր դառնութիւն, ցաւ եւ անբուժելի վէրքեր :

Տիկին Բրաբլոն բոլորովին ապշած վիճակի մէջ մնացած մըտիկ կընէր օրիորդին խօսքերը . իր ականջներուն չէր հաւատար որ այդ խօսքերը արտասանողը իր հարազատ աղջիկն է . իր աչքերը խոնարհած համարձակութիւն չունէր նայելու օրիորդի երեսը . վասն զի այդ բոլոր իրական խօսքերը կը պատկանէին իր ամուսնին, իր քսան եւ մէկ տարուան անբաժան ընկերին : Տիկինը ընդհատելով աղջկան խօսակցութիւնը ըստ . — Ալ բաւական է աղջիկս, ի՞նչ կարող ենք ընել . գիտեմ իր բնաւորութեան վայրենութիւնը . ես մինչեւ վաղ առաւօտ վերջնականապէս որոշում մը պիտի տամ, հակառակ պարագային միատեղ կերթանք եղբօրս տունը եւ ժամանակ մը այն տեղ կը մնանք : մինչեւ այն ատեն կը համազուէ թէ իր ըրածը

անիրաւութիւն է . դու մի՛ վշտանար, մի՛ յուզուիր, սիրելի աղջիկս, այս բոլորը կանցնի . ճմեռուան դառնաշունչ օրերէ ետքը դարնան կենսաբեր օրերը կուգան . գիշերային խաւարի կը յաջորդէ առտուան պայծառ արշաղոյսը : մարդոց կեանքի մէջ եւս այսպիսի օրերու եւ եղանակներու փոփոխութիւններ կըլլան սովորաբար :

Տիկնոջ մտիթարական խօսքերը փոքր ինչ հանդատացուցին Վերգինէի սիրտը :

Այս վիճաբանութիւններով բաւական ժամանակ անցուցած էին Երկինը թողլով օրիորդը մեկնեցաւ, իրիկուան ճաշի սեղանը պատրաստել տալու խոհարարին :

Վերգինէ միայնակ մնալով, դառն մտածութեանց մէջ ընկզմեցաւ . իր հօր արարքները սրտին վրայ խիստ ծանր տպաւորութիւն ունեցան : Օրիորդը ալ համազուած էր թէ՛ հայրը իր նիւթական շահերուն համար կը զոհէր իր աղջիկը . ըստ բաւականին մտաւորական զարգացումներով օժտեալ օրիորդի մը համար դժուար էր Օհանի նման տարիքոտ մէկու մը հետ ամուսնանալ . ամուսնական կեանքի պայմանները քիչ թէ շատ ծանօթ էին իրեն :

Երանոս ազան ժամերով պարտէզի անկիւնը կը կենար : Գիշերային խաւարը հետզհետէ կը տարածուէր աշխարհի վրայ . վաշխառուն յափշտակուած էր խառնափնթոր մտածութիւններով, միջոցներ կը խորհէր թէ ի՞նչպէս պիտի կարենայ յաջողցնել իր աղջկան ամուսնութիւնը Օհանի հետ : հիմա դատարկ գլուխը զբաղեցուցած էր տեսակ մը անհեթեթ երեւակայութիւններով . մինչեւ իսկ յանձն պիտի առնուր իր բոլոր ունեցած հարստութիւնը թողուլ իր աղջկան, միայն թէ անիկա ընդունէր հօր առաջարկութիւնը :

Տիկինը խաւարի մէջէն դանդաղ քայլերով մօտեցաւ իր ամուսնին եւ նստաւ անոր գլխացք :

Վաշխառուն հանդարտօրէն հարցուց . — Ի՞նչ ըրիր, յաջողեցար Վերգինէն համազուէ :

Այս խօսքին վրայ Տիկին Բրաբլոն ակնկառոյց վայրկեան մը լուռ կենալէ յետոյ ըստ . — Դուք հայր չէ՞ք կարծեմ Երանոս աղա, եւ երբեք ձեր սրտին մէջ բոյն դրած չէ հայրա-

կան զգացումը . դուք ոսկին միայն պաշտած էք , ձեր սիրան ու հոգին միայն անիկա կը ճանչնան : Ներեցէք համարձակութեամբ , սիրելի ամուսինս , եթէ խրատելու յանդգնութիւնը կուենեամ . նայեցէք անգամ մը հայելոյն մէջ ձեր դէմքը եւ նկատողութեան առէ՛ք ձեր ազայ հասակին կայտառութիւնն ու հիմակուան տարօրինակ փոփոխութիւնը :

— Ի՞նչ եմ եղեր , կնիկ , ի՞նչ պակասութիւն ունիմ :

— Ի՞նչ ես եղեր . ո՞ր է մանկութեանդ թարմութիւնը , ո՞ր է երիտասարդութեանդ տոկունութիւնը . գիտե՞ս որ հիմա քեզի իշխողը ձերութիւնն է , տկարութիւնն է . սեւ մազերէն ետքը ձերմակ մազեր , խի ձերմակէն ետքը գերեզման :

Երանոս ազա երբ լսեց իր վիճակին վերջնական փոփոխութիւնը բուն խի իր կնոջ բերնէն , սաստիկ զայրացաւ եւ դէմքը խոթոսելով բացազանչեց . — Ինչ շատ հեռու է գերեզմանը . ես տակաւին շատ երջանիկ օրեր պիտի տեսնամ՝ քանի որ սակի ունիմ :

— Ահաւասիկ , ոսկիին փայլն է որ քու աչքերդ կը շլացնէ . ժամանակդ եկած է ամուսինս . անձնատիրութիւնդ փայփայտ անձերու շղջըրթութիւններէն մի՛ խաբուիր . քու երջանկութիւնդ ընտանիքիդ մէջ փնտռէ , քեզ խիստ սիրով պատուող աղջկանդ արտին մէջ փնտռէ . ան է վերջին օրերուդ մխիթարութիւնը , թող որ ոսկին ոսկիին հետ ամուսնանայ , պատանին պատանիի , եւ երիտասարդը երիտասարդի հետ : Արդ , ձեր ամուսնական սրտումը անտեղի է եւ անկարելի . եւ թէ դուք ալ այս մասին լրջօրէն խորհիք , իրաւունք պիտի տաք անոր Օհանը իբր ամուսին չընդունելուն . — ձեր դիւրագրգիւ բնաւորութիւնը տեղի կուտայ այսպիսի երկպառակութեանց : Միթէ աւելի լաւ չըլլա՞ր որ մենք երկու հաւատարիմ ամուսիններ անձայն եւ անչռուկ խորհրդակցիք , իրար համուզենք եւ ըստ այնով՝ գործը հրապարակենք : Ամուսնութիւնը այնպիսի սուրբ բան է որուն մէջ ծնողաց միջամտութեան հարկ չիկայ , եթէ այսպիսի պարագաներու մէջ մեր աղջկան վրայ բռնութիւն բանեցնենք , այն ատեն ծնողական պարտականութիւնները չարաչար գործածելով դժբաղդ եւ տակը շանիկ ամուսիններու թիւը աւելցնելու պատճառ կուտանք :

Այսու ամենայնիւ , մեր վերջին օրերուն մէջ հազարաւոր նախատիք ու անէծքներ լսելով՝ գերեզման պիտի մտնենք : Երանոս ազան ապաւթեամբ մտիկ ընելէ յետոյ , խոր մտածութեան մէջ լինիւ . վայրկեանական լուսթիւն մը տիրեց երկուքի մէջ , եւ վերջապէս սկսաւ խօսիլ վաշխառուն իր կնոջ հետ բաւական մեղմութեամբ . — Տիկին , ես սիրոյ զգացումներէ զուրկ աւարկաց մընեմ . ի՞նչ որ տեսած եմ՝ ծնողքէս՝ նոյն շաւղով պէտք է ընթանամ . մեր երկրի սովորութիւնները տարբեր են , այնտեղ հայր մը կատարեալ իրաւունք ունի իր աղջիկը ամուսնացնել իր ընտրած մարդուն հետ . այդ մարդը թէ՛ երիտասարդ եւ թէ՛ տարիքոտ ըլլայ , աղջիկը չէ՛ կարող դիտողութիւն ընել . ի՞նչ քակ է . դեռատի օրիորդ մը ամուսնութեան վրայ իր սեփական կարծիքը յայտնէ՛ . ես այստեղ կը տեսնեմ եւ կը լսեմ՝ այսպիսի անկարգութիւններ : Ա՛խ , ա՛խ , եթէ վերգիւնէն մեր ազա Թորոսին որդւոյն հետ ամուսնանար , շատ երջանիկ պիտի ըլլար . այսօր այդ մարդը տասը հազար ոսկի տէր է . ես խիստ մտէն կը ճանչնամ զանոնք եւ երբ այդ տասը հազար ոսկին միտքս կուգայ , կարծես թէ հոգիս մէջ կրակ կը ձգեն . այդ ոսկիները մեր աղջիկը պիտի վայելէ եւ օր մը ամբողջութեամբ տէր պիտի ըլլայ . բայց երբ անիկա ոսկիի յարգը չի ճանչնար , այն ատեն միտքը թէ՛ ինքը եւ թէ՛ ես կրելու անբազդութիւնը կուենեամ :

— Գիտեմ , սիրելիս , յարեց տիկին Բրարին , դու կատարեալ իրաւունք ունիս . բայց մեր աղջիկը այդ կարգի մարդու մը հետ ամուսնացնելու դժուարութիւնը կայ :

— « Արին ձեր ի գլուխ ձեր » , ըսաւ վաշխառուն եւ ոտքի ելլելով դնաց ձաշի սենեակը , եւ սկսաւ օղի խմել , որպէս զի ատով կարենայ մխիթարուի :

Իսկ վերգիւնէն իբր սրտի յուզումէն առանձնացած էր իր սենեակը , առանց ճաշելու :

Այս իրիկուն Երանոս ազաի տան մէջ պատահած ընտանեկան երկպառակութիւնը դարձեալ ծածկուեցաւ . նոյն գիշերային մթութեան մէջ :

Թ

Սոյն եղևութեան անցած էր քանի մը օր : Շարաթ առաւօտեան արեւը չձագամ՝, ալա Թորոսը եկած էր Երանոս աղաի նստած խանի դրան մէջ կըսպասէր անոր գալուն : Ինչպէս որ մենք նախապէս ծանօթացուցինք ընթերցողաց ազա Թորոսի անապիւ բնակորութիւնները, այդ զգուելի արարածը տեսնողին վրայ խիստ անախորժ սպաւորութիւն կը թողուր . խորամանկութիւնը այնչափ յառաջ տարած էր, որ եթէ մէկը ի՛նչ դործի մէջ ալ անոր ծուղակը իյնար, կորուսալ մտաւորաւ էր : Այս առաւօտ ալ եկած էր ան իմաց տալու որ հետեւեալ օրը նշանաւորութեան համար պիտի գային : Դաւնիւթելու մէջ զիրար դերազանցող այս երկու դերակատարներուն միակ շարժառիթն էր այդ անմեղ աղջիկը :

Երանոս աղան գլուխը կուրծքին վրայ ծռած, սեւ սաթէ համրիչը ձեռքը՝ որուն հատիկները շուտ շուտ իրարու ետեւ կը քաշէր . մտնելով խանի դռնէն՝ առանց ուշադրութիւն դարձնելու Թորոս աղաի վրայ, դնաց : Հազիւ թէ բացած էր իր սենեկին դուռը, եւ ահա յայտնուեցաւ Թորոս աղան :

— Աղա Թորոս կարծեմ դիչերը քունդ չէ տարեր, ըսաւ Երանոս . այսչափ կանուխ քեզ այստեղ տեսնելուս կը զարմանամ :

— Պէ՛ ճանրմ, այդ ի՞նչ զարմանալի մարդ ես, պատասխանեց Թորոս աղան, Աստուծոյ բարեւը բերանս թողուցիր :

— Ի՛նչեմախմ, առաւօտները քիչ մը Թիմիզուժիւն ունիմ այս պատճառով բարեկամներս կը վշտացնեմ, ըսաւ Երանոս աղան անսովոր ժպիտով մը, եւ սենեկէն դուրս ելլելով խանի սրճարարին հրամայեց որ երկու գաւաթ խաչի բերէ : Եւ դարձեալ եկաւ նստաւ իր աեղը : Հիմա կը մտածէր թէ ի՛նչ կերպով իր ահաճութիւնը յայտարարէ աղջկանը մասին : Թորոս աղան մէջքի գօտիէն հանեց կարճ ծխափող մը, լեցուց ծխախոտով, դողդոջուն ձեռքերովը արեթը վառեց եւ դրաւ ծխաքարչի (լուլ) վրայ . քանի մը անգամ հետ-

դէտէ քաշեց ուժովը եւ թանձր մուխով լեցուց սենեակը : Նոյն ժամայն սրճարարը փոքրիկ թիթեղէ մատուցարանի մը վրայ հրամայուց սուրճի գաւաթը . քանի մը բօսկէ առաջ մը՝ ուսյլապատ դէմքը սպայծառացաւ . Թորոս աղան կը գտնուէր այն սեասի հոգեկան բերկրութեան մէջ որ իբր թէ ալ իրազործած էր իր կէտ նպատակին, այսինքն այս ամուսնութեան սաթիւ Երանոս աղա կողոպտուած եւ անոր ոսկիները իր ոսկիներուն վրայ բարդուած :

Երանոս աղան թէպէտ եւ սովորութիւն չունէր իր սենեակը այցելող ծանօթներուն եւ բարեկամներուն սուրճ հրամայել . բայց այսօր բացառութիւն կը համարուէր, մինչեւ իսկ սրճարարը զարմացաւ, եւ երբ սուրճը տալով դուրս կելլէր, ըսաւ մտովին . — անպատճառ Երանոս աղաի մեռնելը մօտեցեր է, որ այսօր իր բարեկամներէն միոյն սուրճ հրամայուց :

Սուրճերը խմեցին, Թորոս աղան շարժուելով նստած սեղէն, բազմեցին վրայ ծալապատիկ նստաւ . իր օձի խորամանկ աչքերը կիսաբաց՝ ըսաւ . — Երանոս աղա, վաղը կիրակի է . անշուշտ անցած օրուան ինձի տուած խոստմունքիդ վրայ հաստատ ես :

— Ի՞նչ խոստմունք, պատասխանեց վաշխառուն, այն ձեւով որ իբր թէ ոչինչ չէր յիշեր :

— Եղբայր, այդ ի՞նչ մոռացկոտ մարդ ես եթէ իմ ցտրիքս ունենայիր, բոլորովին ցնորած վիճակի մէջ պիտի ըլլայիր . ես ճիշդ վաթսուն տարի առաջ Վանէն Պօլիս եկած եմ, եւ մինչեւ այս վայրկենիս կը յիշեմ թէ սոքիս արեխները ո՛ւր ձգած եմ . դու երկու օրուան անցքերը չես կարող յիշել, մտածէ եւ պիտի յիշես բոլորը :

Երանոս աղան քանի մը վայրկեան կեղծ մտածութեան մէջ ինկաւ . — Պէ՛տք է ուրանալ, որպէս զի կարենամ այս մարդուն ձեռքէն ազատել օձիքս, ըսաւ մտովին . եւ դառնալով Թորոս աղաի պատասխանեց . — Այո՛, հիմա կը յիշեմ մեր անցած օրուան խօսակցութեան նիւթը . կարծեմ ձեր ապառիկներուն վրայ էր, այսինքն թէ ի՛նչ կերպով պիտի հաւաքէինք անվճար մնացած մուրհակներու դոււմարները : Եղբայր այս խնդրոյ սաթիւ վերջնական որոշում մը տալու ենք :

Թորոս աղան ընդհատելով վաչխառուին խօսքը , բարիւթեամբ ըսաւ . — Ի՞նչ ապառիկ , ի՞նչ մուրհակ , դու խենթեցեր ես կարծեմ : դուք վաղուան համար խօսք չառելք ինձի :

— Այո , ճշմարիտ է կրկնեց Երանոս աղան , կիրակի օրուան համար խոտապայ ձեզի սրպէս զի մուրհակներու գործը . . .

— Դարձեալ մուրհակ , դուայ ծերուկը . եւ կոտորի՛նստած տեղէն վեր թուաւ Երանոս աղաի վրայ յարձակելու դիտաւորութեամբ :

— Մի՛ բարիկանաք , եղբայր . ես ցնորած չեմ . փառք Աստու խելքս գլուխս է . այդչափ դիւրաբորոք մի ըլլաք , դարձեալ կը կրկնեմ , անցեալ օր այս տեղ ինչ որ խոտապայ ձեզի , նոյնը պատրաստ եմ կատարելու . նախ սէտք է որ դուք ձեր հիմակուան կիրքերը բոլորովին փարատէք եւ յետոյ սկսինք մեր գործին :

Թորոս աղան վայրկեանական լուսթենէ ետքը պատասխանեց մեղմօրէն . — Բարեկամ , դուք հինգշաբթի օր չխոտապա՞ցա՞ք այս տեղ որ ձեր աղջիկը իմ որդւոյս Օհանի հետ սխտի ամուսնացնենք . եւ վաղը , որ կիրակի է , Օհանը եւ ես միաստեղ նշան սխտի բերելնք ձեր տունը . ահաւասիկ ձեր խոտամուկը . եթէ կուրանաք , առ ուրիշ խնդիր :

— Ադ ի՞նչ խօսքեր է որ կրնէք . ես առաջին անգամն է որ ձեր բերնէն աղջկանս եւ ձեր զաւկին ամուսնութեան մասին բառեր կը լսեմ : Ե՛րբ , մեղա՛յ :

— Դուք ձեր խորամանկ խօսքերով կը զայրացնէք զիս , ըսաւ Թորոս աղան . այդ ի՞նչ զգուելի մարդ ես եղեր դու . եթէ ձեր ամէն գործի մէջ այս տեսակ ուրացութիւններ եւ խորդախութիւններ ի գործ կը դնէք . այն ատեն մարդ կոչուելու արժանի չէք դուք :

— Բայց համբերութիւնս կը հոտցնես , կարծեմ իրաւունք չունիս այս տեսակ նախատալի խօսքեր ուղղելու ինձի . եթէ գառամեալ մէկը չըլլայիր դու , ես ճիշդ այս վայրկեանիս կը ջախջախէի գլուխդ , բայց ցնորած մարդու մը վրայ յարձակիլը առաքինութիւն չէ :

Թորոս աղան բարիւթենէն չլրնալով համբերել , ելաւ կանգնեցաւ , եւ թքնելով Երանոս աղաի երեսը՝ մեկնեցաւ :

— Ազատեցա՛յ , միմայ Երանոս եւ մուրհակները պարունակող ստորակը իր առջեւ դնելով բացաւ եւ սկսաւ կարգադրել զանոնք՝ ամէն մէկուն վճարելու պայմանաժամը նըշանակելով ուրիշ տեսարակի մը մէջ :

Հիմա այդ դանձելի հաղարաւոր սկիի օրինաւոր մուրհակներու մէջ կորսնցուցած էր իր խելքն ու միտքը . ալ խապառ մուսայաւ Թորոս աղաի եւ իր մէջ պատահած այն բոլոր անցքերը . մուսայաւ նաեւ խորամանկ ծերունիին նախատինքները , մեկնելու ատեն իր երեսին թքնելը . կարծես սչինչ չէր պատահած իրեն : Արդան բաղէներ որ թշուառ մարդ մը երբ իր ունեցած վշտերու եւ սրաի դառնութեանց մէջ խորատուուած է , պահ մը երբ փոքր մխիթարութեան նշոյլ մը կը ծագի , յանկարծ կը մտնայ իր կեանքի թշուառ դրութիւնը , կողեւորի եւ ինքզինքը աշխարհիս ամենէն երջանիկը կը համարի : Ահա այս վիճակի եւ դրութեան մէջ կը դանուէր վաչխառուն : Իսկ անգին Թորոս աղան կուխակը վրէժխնդիր ըլլալ իր ունեցած բոլոր դժոխային ճարտիւթեանց շնորհիւ :

Թորոս աղան վաչխառուի սենեկէն մեկնելով ուղղակի գնաց իր սենեակը ուր որդին Օհանը կըտպասէր անհամբեր բարեյաջող լըրերու :

— Ի՞նչ բրիք , հայր . վերջացուցի՞ք գործը , հարցուց Օհանը :

— Ո՛չ , պատասխանեց հայրը , ստատիկ վշտացած :

— Այդ չէ կարելի , կրկնեց Օհան զարմացմամբ . մի՞թէ անցած օր սիրով չէր ընդունած ձեր առաջարկութիւնը :

— Անցեալ օր ընդունեց , բայց այսօր ուրացաւ իր խոտամուկը :

— Պատճառը չյայտնե՞ց ձեզի հայր :

— Ոչինչ չյայտնեց , պատասխանեց Թորոսը :

— Ուրեմն այդ անիրաւը ծաղրեց մեզ : Այս խնդիրը լուսթեամբ վերջացնելը մեր անուան անպատուութիւն է :

— Ի՞նչ կարողենք ընել :

— Շատ բան կարող ենք ընել , պատասխանեց Օհանը ան-

սովոր ժպտաով մը , եւ սարա շարունակեց . Հայր , պատուց պարաքը պատուով կը հատուցուի . կամ պէտք է մեր հարստութիւնը ոչնչանայ եւ կամ Երանոսի հարստութիւնը , այսպէս պիտի կարողանա՞նք վրէժ լուծել :

— Ի՞նչ կերպով պիտի կրնանք մեր վրէժը լուծել այդ անիրաւէն , հարցուց ծերունին անբացատրելի հետաքրքրութեամբ մը :

— Այդ պաշտօնը ես յանձն կառնեմ, պատասխանեց Օհանը իր յատուկ պարծենկոտութեամբ : Դուք լաւ դիտէ՛ք որ մենք դարաւոր տոհմային ատելութիւն մը ունինք այդ անիծուած գերդաստանի դէմ , եւ ահա առիթը եկած է մեր անոնց հետ ունեցած հաշիւը կարգադրելու : Դու սպահով եղիր որ պիտի յաջողինք , Երանոս աղան իր սխալը պիտի հասկնայ այն առտեն , միայն երբ արդէն մենք մեր վրէժը լուծած ըլլանք այդ ընտանիքէն :

— Տէրը յաջողէ . ըսաւ ծերունին դիւային ժպտաով մը . եւ ծխափողը լեցուց կաղզուրելու համար իր խանգարուած ուղեղը . վայրկեանական լուսթեմէ յետոյ՝ շարունակեց ծերունին .

— Որդե՛հ , եթէ այդ մարդուն ճակատագիրը հատուցեր է դինքը հիմակուան յաջող ու փայլուն ասարկեցի մէջ , հաւատա՛ որ դարձեալ այդ ճակատագիրը կարող է հասցնել անիրաջ քաւորութեան ամենայեալին աստիճանը :

— Գիտե՛մ , այդ բոլորը պիտի կատարուի , եթէ մենք չը գլանանք մեր աշխատութիւնները . կրակի մը բոցերը սաստկացնելու համար փչել պէտք է . Օհանը այս բառերը արտասանելու միջոցին իր դիւական աչքերը՝ որ լի էին չարամտութեամբ , կրակի պէս կը բոցավառուէին , անոր նեղ եւ խորամանկ աչքերը արդէն կը յայտնէին թէ առաքելութեան բոլորովին զուրկ մէկն էր ան . մարգասկրութիւն ըսուած բանը օտար էր այդ մարդուն համար եւ արդէն իր պընձագոյն դէմքը կը կըրէր իր վրայ անգթութեան բոլոր գծագրութիւնը :

— Օղոր՛ւլ , մեր պատճառով ո՞վ երջանիկ եղեր է որ Երանոս աղան թշուառ չըլլայ , ըսաւ սղա թորսը ծաղրական ձեւով մը . մենք այն տեսակ ծառի մը պատուին ենք որ մեզմէ ճաշակողը իսկոյն կը թունաւորուի :

— Դուք սպահով եղիք , քիչ ժամանակէն պիտի տեսնէ՛ք այդ մարդուն վիճակը :

— Շատ սպրիտ , ո՛րդեակ . աւելցուց թորսը : Օհանը պայմանաժամը լրացած քանի մը վճարուելիք մուրհակներ ձեռքը՝ հեռացաւ սենեկէն :

Ժ

Երկու վաշխառուներուն մէջ ծագած սաստիկ վիճաբանութիւնները , անհամաձայնութիւնները եւ վերջին բոլոր անցքերը ծանօթ էին տիկին Բրաբիոնի եւ աղջկան : Տիկինը արդէն գուշակած էր թէ այդ մարդիկը թշնամանալով՝ ամէն անազնիւ միջոցներ պիտի ի գործ դնեն իր ամուսնին դէմ , իրենց անցաջողութեանց պատճառով անշուշտ օր մը այդ բախտախնդիր եւ նախանձոտ վաշխառուն իր բոլոր անգթութիւնները պիտի թափէր այդ ընտանիքի դիտուն , որպէս զի կարենայ ձգել զանոնք կորստեան անդունդի մէջ : Տիկին Բրաբիոնի երեւակայութեան մէջ կը պատկերանար այդ ամէնը եւ այդ բոլոր խորհրդածութեան մէջ կորսուած էր իր մտքը :

Շատ անգամ իր ամուսինը պատմած էր թէ՛ ինքը թշնամի է թորսի հետ , իր հայրը թշնամի էր անոր հօր հետ եւ նոյնպէս իր պապը թշնամի եղած է անոր պապի հետ . այդ երկու ընտանիքներու մէջ ատելութիւնը անցած էր սերունդէ սերունդ , հիմա աղա թորսը ելած էր Երանոս աղաի առջեւ որպէս հօր ախայեան մը , այդ մարդուն առջեւ չընկճուելու համար՝ անոր դիտաւորութիւններն ու ձեռնարկութիւնները ի գերեւ հանելու միջոցներ խորհել պէտք էր : Այս մասին տիկնոջ ցաւերը անդարմանելի էին . իր մտատանջութեան ազատելու համար՝ միակ միջոց մը կար այսինքն՝ իր աղջիկը Օհանի կնութեան ապ , այն ատեն անոր բոլոր վայրենի եւ գազանային անգթութիւնները պիտի հարէին ու պիտի ոչնչանային գեղեցիկ վերգինէի սիրոյ առջեւ :

Վերգինէ այդ բոլոր եղելութեանց ծանթ էր . մայրը

պատմեց իր աղջկան , եւ իրիկունը աղջիկը պատմեց Հրամանին իրենց առանձնութեան ասեն :

Եթէ կուզես կիներուն սիրելի ըլլալ , հաղորդէ անոնց ո՛ր եւ է դազանիք մը . Հրաման այդ ճարպիկութիւնը ունեցաւ : Աղջիկը իր սրտի բոլոր դասնութիւնները կը թափէր երիտասարդին առջև . թէ ինչպէս հայրը բռնի ամուսնացնել ուզեր էր Օհանի հետ , եւ ինքը բողբոջելով մերժած էր այն անբնական ամուսնութեան դէմ եւայլն :

Վերգիւնէի խօսքերը խիստ անախորժ սպաւորութիւն ունեցան Հրամանի վրայ . երկու սիրահարեալներ իրարու գիրկ ընկան , լաց եւ արցունք , համարցր եւ ծիծաղ , բոլորը միախառնուեցան իրարու հետ :

Նրխասարգը կը հասկնար դժբաղդ աղջկան այն տխուր եւ յուսահատական խօսքերու խնասար . օգնութիւն կ'անկեալէր անուղղակի :

— Օրիորդ . դուք ինձի միայն սա ըսէք , ո՞վ է այդ անձը եւ ո՞ր կը բնակի :

— Կարճեմ անոնք բնիկ Վանեցի են , յարեց Վերգիւնէ , եւ վաշխառութեամբ կը սրարտպին . ես այս իրիկուն իսկ կարող եմ մանրամասնօրէն տեղեկանալ ատոնց մասին եւ առատ պաշար հաւաքելով՝ վաղ առաւօտ կիմացնեմ ձեզի :

— Եթէ յաջողիք , շնորհակալ պիտի ըլլամ այդ մասին . ըսաւ Հրաման . ես պիտի ջանամ այդ մարդոց կարծիքը եւ դիտաւորութիւնը խնանալ , դուք ամենքնիդ ալ հանդիստ եղիք , ես պիտի սջնչացնեմ այդ մարդոց բոլոր յոյսերը . անոնց դէպի ձեզ ունեցած՝ ատելութեան պատճառը՝ ձեր հայրն է . այո՛ , յանցաւորը ան է որ իր սիրելի աղջկան բախտը ուզեր է կապել այդ դարձելի մարդուն հետ . առանց մտածելու առանց խորհելու երբ մարդս գործի մը կը ձեռնարկէ , սովորաբար հետեւանքը անցածող կըլլայ . հիմա ես ձեր հօր գործած սխալը պիտի ուզդեմ , կերելի թէ այդ չտրամիտ մարդիկը սովորութիւն ունին սրտոր ջուրի մէջ ձուկ սրտալ :

— Օրիորդը իր խորին շնորհակալութիւնը յայտնեց երկտասարդին :

Հրաման համբուրելով աղջկան ձեռքը՝ մեկնեցաւ :

Անցան քանի մը օր ալ առաւօտ մը սեւեր հաղած կին մը համակրելի կերպարանքով մտաւ Թորոս աղանին խանի սենեկը : Թերունին բացակայ կը գտնուէր այդ ժամուն . միայն իր որդին Օհանը նստած դրասեղանի գլուխը հաշիւներով կը գրագէտ : Տիկինը ամօթխածութեամբ բարեւեց Օհանը . որ ուշագրութիւն դարձնելով անխարի մը ձգեց կնոջ վրայ եւ , անքաղաքավար , փոխաթէ փոքրիկ աթոռակ մը ներկայացուց անոր առանց բռն մը արտասանելու . կարծես կոչա մարդուն լեզուն կաղուեցաւ : Տիկինը շնորհակալութիւն յայտնելով նստաւ աթոռակին վրայ , Օհանէն քիչ մը հեռու :

Տիկնոջ դէմքը բաւական գրաւիչ էր . թէպէտ եւ անոր տարիքը քառասունի մօտեցած , բայց դարձեալ իր երխասարդական թարմ գեղեցկութիւնը կը պահէր :

Օհանը շիրնալով գիտնաւ . գողտնի , քանի մը անգամ հետզհետէ նայեցաւ կնոջ երեսին եւ հաշիւները շիրնալով շարունակել , սուքի ելաւ եւ քանի մը թուէ վերջ մօտենալով կնոջ հարցուց . — Երեցէք աիկին , ի՞նչ բանի համար եկած էք այս սեւ . կարճեմ այս առաջին անգամն է որ այս սենեակը կը մանկք . ճշմարիտը ըսելով չճանչցայ ձեզ :


— Պա՛րոն կը խտատվանիմ թէ ձեզի համար անձանօթ մէկն եմ , եւ սովորաբար , մարդիկ իրարու հետ ծանօթացնելու համար՝ առիթ մը կը ներկայանայ :

Օհանը շիրնալով հասկնալ կնոջ բառերը , քաջատասխանեց . — Իւրեմն դուք հօրս ծանօթ պէ՛տք է ըլլաք :

— Ո՛չ , պարոն . ձեր հայրն ալ չեմ ճանչցար , իմ սցսօր ձեզի ներկայանալուս պատճառը պարզապէ՛ս ձեր մեծապատուութեան խնդիրը մը ունենալու է . եթէ ըսուենիք , զիս յաւելչա երախտապարտ պիտի ընէք :

Օհանը երբ խնայաւ թէ կինը խնդիրը մը ընելու եկած է . համարձակութիւն ունեցաւ խօսակցութեան ձեւը փոխել , յուսալով որ պիտի կարենայ մտերմութիւն հաստատել անոր հետ եւ քննիծաղ մը ցոյց տալով հարցուց . Ամուսին չունի՞ք դուք տիկին :

— Ո՛չ , պարոն . ամուսինս մեռած է :



— Քանի՞ տարեկան էք, տիկին, կրկնեց Օհան, ձեռքերը իրար շփելով :

— Երեսուն եւ եօթ տարեկան եմ, պատասխանեց կինը :

— Ինչո՞ւ կրկին չէք ամուսնացեր, դեռ երկուստարդ էք : Զաւակներ չունի՞ք :

— Այո՛, միայն մանչ զաւակ մը ունիմ՝ յարեց ողորմելի ձայնով . որուն համար եկած եմ խնդրելու ձեզմէ որ զինքը ընդունիք ձեր քով գրագրութեան պաշտօնով :

Օհանը բողբեկական մտածութենէ ետքը պատասխանեց .

— Տիկին, ճշմարիտ է որ մենք գրագրի մը պէտք ունինք . բայց այցելու գրագրի մը, այսինքն օրը իրկու ժամ աշխատութիւն պէտք է ունենայ . որովհետեւ մեր գործերը այնչափ ընդարձակ չեն վաճառականներու պէս : Եթէ փոքրիկ ամաթոշակով մը գո՛հ կըլլա՞յ . կրնանք ընդունիլ զինքը :

— Դնորհակալ եմ, պարոն, շատ բարեօրոտ էք եղեր, ուրեմն վաղը կը զրկեմ որդիս . ըսաւ կինը եւ պատրաստուեցաւ մեկնելու :

— Կեցի՛ք, տիկին . այս առթիւ առաջարկութիւններ ունիմ ձեզ ընելու . նախ եւ առաջ երբ մէկը վաճառականի մը քով մտնել ուզէ այս տեսակ պաշտօնով . չօրպանիմ իրաւունք ունի գննութեանէ անցնել նորեկ պաշտօնեան : Մեր գործը շատ փափուկ է . ձեր որդին պէտք է հմուտ ըլլայ տոկոսի հաշիւներուն : Թուաբանութեան կնճառ գործողութիւնները կրակի պէս կատարելու է : Երկրորդ, ձեր որդին պարտի վկայագիր մը ունենալ ի ձեռին, իր բարոյականի եւ ամենապատուաւոր մէկը ըլլալուն մասին : Երրորդ, հրապարակի առաջնակարգ եւ ծանօթ վաճառականներէ երաշխաւոր մը ապաւարտաւոր էք, որով պիտի գիտնանք թէ ձեր որդին պատուաւոր եւ հաւատարիմ մէկն է : Եթէ մեր այս առաջարկած պայմանները ընդունի եւ կարողանայ գոհացնել մեզ, վաղ առաւօտ կրնայ գալ եւ ստանձնել իր պաշտօնը :

Տիկինը՝ Օհանի առաջարկութիւնները լսելէ յետոյ՝ համարձակութեամբ պատասխանեց . — Պարոն, ապահով եղիք որ ձեր բոլոր առաջարկութիւնները որդիս ընդունելի յետոյ,

պիտի յաջողի նաեւ գոհացնել ձեզ, իրմէ սրահանջուած երաշխաւորութիւնները տալով :

— Ուրախ կըլլամ, տիկին . ըսաւ Օհանը . մենք կը փափաքինք որ այդ տեսակ որբերու պաշտպան ըլլանք, քրիտոսնէական պարտաւորութիւն է այդ կարգի անպաշտպան երկուստարդներուն օգնելը : շատեր մեր պատճառով դրամ շահած եւ գործի աէր եղած են . կը յուսամ որ ձեր որդին ալ յառաջանայ :

Օհանը իրեն յատուկ պարծենկոտութեամբ եւ փայլուն խոստումներով տիկնոջ համակրութիւնը գրուել կուզէր . սիրտը անբարոյական անհուն զգացմամբ լեցուեցաւ եւ աւելի մտանալով կնոջ, դողդոջուն ձայնով մը ըսաւ . — Ո՛ւր կը բնակիք տիկին :

— Իւսկիւտար, որդիս ձեզի ցոյց կուտայ :

— Աս շատ անգամ Իւսկիւտար կերթամ աղաւթի գոնձակը եւ երբեմն ուշ մնալով բարեկամներու հիւր մնալ կըստիպուիմ . կը յուսամ թէ ձեզի ալ զլսու ջաւուրութիւն կուտանք . ըսաւ Օհանը, առանց անչնալու :

— Մեր տունը ձերն է, երբ կուզէք կը հրամայէք պատասխանեց տիկինը, եւ աւելցուց . « Ձեզի պէս աղտուական անձնաւորութիւն մը երբ իր այցելութեամբ կը պատուէ մեր աղքատիկ բնակարանը, ասի սրտախ կը համարիմ ես » :

Օհանը՝ այդ այլանդակ մարդը երբ լսեց կնոջ բերնէն այդ քաղցր ու իրեն նպաստաւոր խօսքերը, հրապուրուեցաւ եւ սկսաւ սլուլուլ զուշակութիւններ ընել անոր մասին . իսկոյն հաղար ու մէկ սասանայական մեքենայութիւններ յղացաւ մտքին մէջ . մտեցաւ դրամ արկղին, բացաւ, ստիպով լի քսակ մը հանեց եւ մեքենարար պարպեց դրամ հաշուելու սաստակի վրայ : Օհանը կնոջ ցոյց տալ կուզէր իր հարատւութեան աստիճանը, եւ խորամանկը ասով կուզէր աւելի գրաւել կնոջ համակրութիւնն ու սիրտը . կրկին դուրս ստաւ արկղէն քանի մը լեցուն քսակներ, դարձեալ իրարու ետեւ աղմկալի դղրդիւնով պարպեց զանոնք : Ահնը կը հատկաւ Օհանի այդ ձեւակերպութեանց պատճառը, եւ անապրեր իր աչքերը ուրիշ կողմ դարձուցած էր մինչեւ որ Օհանը գործու-

դուժիւնը վերջացուց եւ քսակները նորէն զեռեղեց դրամ-
արկղի մէջ եւ կղտցեց :

Տիկինը սաքի ելաւ եւ հրաման ուղեց մեկնելու : Օհանը
մօտենալով, կնաջ ձեռքը ուժգին սեղմեց իր կոշտ ձեռքերով,
եւ ըսաւ . — Տիկին, վաղը անարատառ գրկեցէք ձեր որդին,
որպէս զի շուտով իր պաշտօնի գլուխը անցին :

— Շատ լաւ : Ճշմարտը ըսելով ես բառեր չեմ կարող
դանել շնորհակալութիւնս յայտնելու ձեզի այն բարութեան
մասին՝ որ դուք յանձն առիք որդւոյս ապագային համար :

— Այդ մեր պարտականութիւնն է, յարեց Օհանը : Կը
յուսամ թէ ոչ միայն ձեր որդին, այլ դուք ալ գոհ պիտի
ըլլաք մեզմէ :

Տիկինը մեծ դժուարութեամբ կրցաւ ազատել իր փա-
ւուկ ձեռքերը Օհանի պողպատի սլէս ձեռքէն, եւ գլուխ խո-
նարհեցնելով մեկնեցաւ : Օհանը յախշտակուած, կնաջ ետե-
ւէն նայելով, ըսաւ մտովին . — Ահա, ինձի համար վերջապէս
գտայ յարմար որս մը . առեկի լաւ է այս գեղեցիկ կնաջ հետ
ժամանակ անցնել քանի՜ օրինաւորապէս ամուսնանալ :

Անագին վաշխառուն շատ կը սխալէր իր գուշակութեանց
մէջ այդ կնաջ մասին . այդ կինը ամօթխած, բոլորովին հեռի
լիտի անհամեստութենէ . սրբիւնեւ եւ միանգամայն պատուոյ
նախանձախնդիր էր . եթէ Օհանի սլէս հաղարներ ըլլային,
դարձեալ չպիտի կարողանային յաջողիլ այդ կինն մղբերցնել
եւ անոր համեստութիւնը արատել : Տիկինը շատ լաւ կը
ձանձնար այդ կարգի մարդոց բնաւորութիւնը . իր որդւոյն
թախանձանքին վրայ՝ եկած էր այդ պաշտօնը խնդրելու :

Ընթերցողը արդէն ծանօթ է այդ կնաջ հետ . Հրանտի
մայրը՝ Կարգուհին էր անիկա :

Տիկին Վարդուհի վաշխառուի սենեկէն մեկնելէ երկու
ժամ յետոյ, ազա թորոսը եկաւ : Օհանը անտահման ուրա-
խութեամբ սրտամեց եղելութիւնը տարբեր եղանակով : Հայրը
նոր դարգիր մը առնելու մասին գիտողութիւն մը չըբաւ, ո-
րովհետեւ Օհանը իր հայրը այնպէս համոզեց թէ, այդ գրա-
գիրը սաշտօն պիտի ունենայ անուղղակի դերակատար ը-
լլալ Երանտս ազատէ վրէժ առնելու գործին մէջ : Խորամանկ

վաշխառուն, Երանտը ոչնչացնելու եւ անոր վնասներ հաս-
ցնելու ձեռնարկութեան մէջ . Հրանտը գործիք ընելով անոր
օգնութեամբ իր նպատակին պիտի հասնէր : Հրանտը արդէն
գիտնալով որ այդ մարդիկը վնաս մը պիտի հասցնեն Երանտս
ազաի ընտանիքին, այդ պատճառով . թախանձանքով սլէսք
եղած հրահանգը իր մօրը տալով զրկած էր Թորոսի սենեակը՝
իրեն համար գործ խնդրելու, որպէս զի ինքը կարողանայ
ազատ մուտք ունենալ անոնց քով եւ այսպէս մօտէն տեղե-
կութիւն ստանալ կատարուելիք խորհրդակցութեանց եւ դա-
ւադրութեանց Երանտս ազաի դէմ :

Հրանտը չէր գիտէր որ այդ մարդոց գիտատրութիւնն
էր զինքը իբրեւ դերակատար գործածել այդ խնդրոյ մէջ :

Թորոս ազան անբացատրելի ուրախութիւն կըզգար, երբ
Օհանը վաղուս խօսքերով իր ծերունի հօր ուշադրութիւնը կը
գրաւէր . իր սասանայական ճարտիկութիւնները ի գործ դը-
նելու պատմութիւնը կընէր : Ծերունի վաշխառուն զգացած
ուրախութենէն՝ իրարու ետեւ կը լեցնէր իր ծխախոտը եւ
բողբ ուժով կը քաշէր լեցնելու իր մաշուած թոքերը այդ
թուճաւոր մուխով, որպէս զի կարողանայ արթնցնել իր թըմ-
րած ուղեղը :

Այդ ի՞նչ հաճոյք էր զոր կըզգար այդ գերեզմանի դու-
ռը մօտեցած ծերունին . եթէ քանի մը հազար ոսկի նուիրէին
անոր, այդչափ ուրախ, այդչափ երջանիկ չպիտի ըլլար . իր
փառքը, իր հաճոյքը ուրիշի մը թշուառութեան մէջ պիտի
գտնէր, նախանձ ու չարութիւն իր սրտի սովորական բերկ-
րանքները կը համարուէին :

— Ո՛րդեակ, ըսաւ ծերունին, անգամ մը տեսնեմ Երա-
նտս ազաի անկումը : Գիտցիր որ ուրախ սրտով պիտի մեռնիմ :

— Ատիկա պիտի կատարէ որդիդ, պատասխանեց Օհանը :

ԺԱ.

Որոշուած օրը, կէս օրէն երկու ժամ առաջ, Հրանտը
գնաց ներկայացաւ Թորոս ազաի : Հայր եւ որդի անհամբեր

կըստատէին անոր դալատեանը . նախ ծերունի վաշխառուն հրամայեց նստիլ՝ երկտասարդին ցոյց տալով փոքրիկ աթոռակ մը :

Նորեկ գրագիրը քաղաքավարի նստաւ :

Թորոս աղան հարցուց . — Ի՞նչ է ձեր անունը :

— Հրանտ . պատասխանեց երկտասարդը :

— Մահանուննի՞դ , աւելցուց ծերունին :

— Հայրապետեան :

— Ո՞ր վարժարանը կարդացեր էք :

— Ճեմարանի շրջանաւարտներէն եմ . աւելցուց Հրանտ :

— Անշուշտ վկայական ստացեր էք :

— Այո՛ , պատասխանեց երկտասարդը , եւ գրականէն հանելով իր ուսման վկայագիրը ներկայացուց Թորոս աղան : Վաշխառուն ակնոցը զետեղեց քիօն վրայ , երկար ատեն վարանելէ յետոյ հաղիւ կրցաւ քանի մը բառ հեզել : Օհանը ատենելով անոր ձեռքէն վկայագիրը , կարդաց եւ բացատրեց պարունակութիւնը : Յետոյ ծերունին քանի մը տոկոսի վերաբերեալ թուաբանական գործողութիւններ սաւաճարիկեց : Երկտասարդը գրասեղանին մօտենալով , թղթի կտորի մը վրայ սկսաւ իրեն սաւաճարիւած գործողութիւնները կատարել եւ ամենայն ճշդութեամբ պատասխանել :

— Շատ լաւ , հիմա ըստ օրինի ձեզմէ երաշխաւորութիւն մը կը պահանջեմ . ըսաւ Թորոս աղան :

— Պատրաստ եմ այդ մասին ալ գոհացնել ձեզ , պատասխանեց Հրանտ : Փափաքելի է ինծի ամէն կերպով ապահովցնել ձեզ՝ իմ պատուաւոր եւ հաւատարիմ մէկը ըլլալուս մասին , եւ ասի ո՛չ միայն ինծի պատիւ կը բերէ , այլ եւ ձեր անուան :

Օհանը մօտենալով , իր հօր ականջին քանի մը բառեր վրսփսաց անլսելի , եւ կրկին հեռացաւ :

— Տղաս , շաբաթը երեք օր պիտի գաս . մեր տուած դրամները իր տոկոսներով հանդերձ տետրակի մէջ պիտի արձանագրես . օրը երկու ժամ պիտի աշխատիս , մնացեալ ժամերը ազատ ես . շաբաթը երեք անգամ . օրը երկու ժամ աշխատելու փոխարէն՝ ո՞րչափ ամսական կը պահանջէք :

Երկտասարդը բոլորական մտածութենէ ետքը ըսաւ . — Դուք զիտէք , սղա . ի՛նչ որ վճարէք , ես շնորհակալ պիտի ըլլամ . ամսականիս մասին ես իմ սեփական կարծիքս չեմ կարող յայտնել . ինչպէս որ նախապէս իմ փախաքս յայտնեցի ձեզի , ես կուզեմ հաւատարմութեամբ ծառայել . նիւթական վարձատրութենէ աւելի յարգելի է ինծի համար բարոյական շահը :

Հայրապետեանի խորհրդաւոր խօսքերուն իմաստը Թորոս աղան չկարողացաւ հասկնալ : Անբարոյական ցեխի մէջ ապականուած այդ անազնիւ մարդը . երկտասարդի խօսքերը տարբեր կերպով հասկնալով ըսաւ . — Ես երբեք չեմ ցանկանար առանց վարձատրութեան մարդ աշխատցնել իմ քովս . դուք պէտք է բացարձակ որոշէք ձեր ամսականի քանակութիւնը : Եթէ գործիս դայ , կընդունիմ : Ես անիրաւութիւն սիրող մարդ չեմ :

Երկտասարդը իր խօսքերուն աւելի դիւրհասականալի ձեւ տալու համար պատասխանեց . — Սղա , դուք սխալ հասկցաք իմ միտքս . ըսել կուզեմ թէ՛ նախ պէտք է տեսնէք իմ աշխատութիւնս եւ յետոյ արժանաւոր թոշակ մը որոշէք :

Օհանը կրկին մօտեցաւ հօր ականջին եւ ըսաւ . — Պարոն Հայրապետեանը օրինաւոր կը խօսի . ես հասկցայ անոր միտքը . դուք վերջին անգամ հրաման ըրէք անոր որ վաղը այցելէ եւ գործի սկսի :

Օհանի խօսքերուն վրայ՝ ծերունին Հրանտի դառնալով ըսաւ . — Վաղը գործի պիտի սկսիք . քեզ տեսնեմ , ո՞րդեակ . աշխատէ որ գործունէութեամբք մեր համակրութիւնը գրաւես : Մարդ մը իր ամէն գործի մէջ ճարտիկ եւ միանգամայն ուղիղ ըլլալու է . առեւտրական ասպարէզի մէջ եղող մարդը ո՞րչափ ազնիւ , ո՞րչափ ուղիղ ըլլայ , պէտք է որ գործառնութեան մէջ օրինաւորութենէ չլրիպի : Նիւթական շահը մարդուս կենցաղավարութեան օգտակար պայմաններուն ամենազլխաւորն է . մանաւանդ մեր արհեստի մէջ , բարեազրտութիւնը՝ կարեկցութիւնը երբեք օգտակար չեն ըլլար եւ կորուստ կսպառնան : Կանխապէս կը յիշեցնեմ ձեզի այս բոլորը , որպէս զի դաղափար ունենաք մեր գործի , մեր արհեստի նկատմամբ :

Հրանտը կանգնած մտիկ կընէր մարդկութեան կեղտն համարուող այդ մարդուն արտասանած խօսքերուն : Բարեկրտ երիտասարդը սոսկալով կը հասկնար վաշխառուի դատողութիւնները . իր կեանքի մէջ առաջին անգամ կը լսէր այդ տեսակ խրատները , որ կարծես թէ կայրէին անոր փափուկ սիրտը . նա զգալով իր զգացած հոգեկան վրդովմունքը պատասխանեց . — Ես ամենայն սիրով կընդունիմ ձեր օգտակար խրատները , եւ կը խոստանամ գործել միշտ յօգուտ ձեր շահերուն :

— Ողջ ըլլա . ուրախ եմ որ մեր շահերը պաշտպանել կը խոստանաս :

Հրանտը շնորհակալութիւն յայտնելով հեռացաւ . եւ ի վերջոյ զգաց սարսափելի սոսկում մը երբ մտաբերեց վաշխառուին առաջարկութիւնները : Ինչպէս յանցաւոր մը , յանկարծ զգաց խզճի խայթը . հոգեկան խորին խռովութեան մէջ կորսուած երիտասարդը՝ դառն ատելութիւն մը զգաց իր սրտին մէջ դէպի այդ խարդախ անձնաւորութիւնները . քանի մը բոպէ առաջ թորոս աղախ ներկայութեան անոր բերնէն լսած խօսքերէն քաջալերուած էր . իսկ հիմա վրէժիւնդրութեան կիրքը կը բորբոքէր զինքը : Ատոնց մասին Հրանտի մտածութիւնները անսահման էին . — Դուք իմ ձեռքով չարիք հասցնել կուզէք ըսաւ . այն ընտանիքին՝ զոր ես կը պաշտեմ . բայց ապահով եղիք որ չը պիտի յաջողիք իրականացնել ձեր չար դիտաւորութիւնները : Ես պատրաստ եմ պաշտպանել այդ անտէր ընտանիքը :

Երիտասարդը մտնելով իր պաշտօնատեղին՝ գնաց նստաւ գրասեղանին գլուխը եւ սկսաւ առօրեայ հաշիւներով պարապիլ :

Իրիկունը Հրանտ հանդիպեցաւ իր սիրուհւոյն . երիտասարդը ալ ընտանեցած էր Երանոս աղախ ընտանիքին հետ . անոր մուտքը ազատ էր այդ տանը մէջ : Պատմեց տիկին Բրաբլտի նոյն օրուան բոլոր անցքերը . թորոս աղախ հետ ունեցած խօսակցութիւնները , անոր անաշխիւ խրատները եւ նաեւ անոնց քով այցելու գրագրի պաշտօն ստանձնելը եւ իր դիտաւորութիւնները :

Տիկինը զարմանալով Հրանտի ճարպիկութեանը վրայ՝ ըսաւ . — Սիրելի Հրանտ . կը գովեմ ջանքերդ . ճշմարիտը ըսելով բաղդաւոր կը համարիմ ինքզինքս որ ձեզի պէս հաւատարիմ ու անկեղծ բարեկամ մը ունեցայ : Բայց ինչպէս յաջողեցար այդ կարճ ժամանակամիջոցի մէջ , անոնց քով պաշտօն ստանելու :

— Տիկին , ձեր ամուսնի մասին՝ այդ մարդոց ունեցած չար դիտաւորութեանց մօտէն ծանօթանալու համար , անհրաժեշտ էր պաշտօն մը ստանձնել , ըսաւ երիտասարդը : Նախ մայրս զրկեցի թորոս աղախ սենեակը , որ ինձի համար պաշտօն մը խնդրէ : Բարեբաղդաբար փոխանակ ծերունին տեսնելու , անոր որդին Օհանը մինակ կը գտնէ սենեկին մէջ , այդ անբարոյական ապականուած մարդը տեսնելով մօրս գեղեցկութիւնը , խսկոյն կը յախշտակուի , եւ խեղճ կնոջ մեռած սիրտը իրեն դբաւելու յուսով , անոր առաջարկութիւնը ամենայն սիրով կընդունի , եւ հետեւեալ օրը իմ երթալս կիմացընէ : Ես այս առաւօտ անձամբ ներկայացայ . երկուքին ներկայութեանը քննութենէ անցնելով , վերջապէս ընդունուեցայ . եւ վաղըքնէ սկսեալ անոնց շարժումները դէպի ձեր ամուսինը պիտի կրնամ քննել ու տեղեկանալ . յոյս ունիմ որ ժամանակին պիտի խնայամ ամէն բան ձեզի խնայնելու , եւ դուք ալ Նրանոս աղախ պատուիրեցէք որ զգայլ կենայ այդ մարդոց ծուղակը չլցնալու համար :

— Ո՛հ , պարոն . ըսաւ տիկինը . ձեր այդ ծառայութեանց փոխարէնը ինչով պիտի կարողանամ վճարել :

— Տիկին , մարդասիրական պարտականութիւն մըն է զոր պիտի կատարեմ , պատասխանեց Հրանտ . դուք հանդիստ եղիք եւ միանգամայն կը խնդրեմ որ ուրիշի մը չյայտնէք այս եղելութիւնները , մինչեւ իսկ առ այժմ ձեր ամուսինը նաեւ պէտք չէ որ խնայ . չըմահայեաց ըլլալ պէտք է որպէս զի կարողանանք դիւրութեամբ ամէն բան խնայալ ժամանակին :

Տիկին Բրաբլտն խօսքի սկսելու պահուն , յանկարծ վերգինէ քմիծաղով ներս մտաւ . տիկինը վայրկենապէս փոխեց իր խօսակցութեան նիւթը . օրիորդը ուշադրութիւն չըբաւ այդ մասին եւ տեսնելով որ դաղտնի կը խօսակցէին , ներս դուրս խնդրելով հեռացաւ :

Տիկին Բրաբրոն նորէն ընդհատուած խօսքը շարունակելով հարցուց . — Այդ մարդոց մեզի դէմ ունեցած նպատակը կարո՞ղ ես գուշակել :

— Այո , անկասկած գիտեմ թէ , անոնք ձեր ամուսնի թող կողմերը գտնելով , անոր նիւթապէս եւ բարոյապէս փնասելէ ուրիշ նպատակ մը չունին . անոնք ուզողակի Երանոս աղաի հարստութեան հետ դործ ունին , եւ ասոր ճշմարիտ ստացոյց եւ շարժառիթ կրնայ ըլլալ , վերջին անգամ պատահած ամուսնական խնդիրը . սյսինքն , եթէ Օհանը յաջողէր ձեր դատեր հետ ամուսնանալ , պէտք էր հաւատալ որ Երանոս աղաի հարստութիւնը ձեռք բերելու համար էր . եւ քանի որ ձեր կողմանէ մերժուեցաւ այդ ամուսնութիւնը . անոնք տարբեր եղանակով պիտի ջանան փճացնել ձեր հարստութիւնը : Եւ թէպէտ այս եղանակով անոնք ո եւ է շահ մը չը պիտի ունենան , բայց միայն թէ Երանոս աղան պիտի սնանկանայ , եւ այդ անիրաւ մարդիկ ալ իրենց նպատակին հասած պիտի ըլլան :

— Շատ ճշմարիտ է ձեր ըսածը , պատասխանեց տիկինը . լաւ գուշակեր էք այդ բոլորը , Աստուած աւելցնէ ձեր տաղանդը որ յաջողիք պաշտպանել մեզ այդ մարդոց գաղտնի փրէժանդրութենէն :

Երիտասարդը բաժնուելով տիկին Բրաբրոնէն , սենեկէն դուրս ելլելու պահուն՝ հանդիպեցաւ օրիորդին . բռնեց ասոր ձեռքը եւ համակիր սեղմելէ յետոյ՝ հեռացաւ :

Տիկինը օրհնութիւնը մեծ տալաւորութիւն գործեց Հրանտի մանկական սրտի վրայ . իր հոգեկան տաղնապը դէթ վայրկան մը հանգիստ չէր թողուր դժբաղը երիտասարդին սիրտը : Երանոս աղաի ընտանեաց երջանիկ ըլլալու խնդիրը սաստիկ կը յուզէր զինքը . ճամբան իր միակ մտածութիւնը ատ էր միայն : Հազիւ թէ մտայած էր իր տանը , գիշերային մթութեան մէջ աչքերը բարձրացուց դէպի երկինք , ուխտեց Թորոսի եւ Օհանի չար գործիք չըլլալ , առաքինութեան սիրով լցուեցաւ իր փափուկ սիրտը , եւ ամէն ինչ թաքնուեցաւ գիշերային մթութեան մէջ :

ԺԲ

Հրանտ Թորոս աղաի քով ստանձնած գրադրութեան պաշտօնը կը շարունակէր . անցաւ ամբողջ եօթնեակ մը , եւ չը կարողացաւ գուշակել ո՛չ մէկ բան , ոչ մէկ շարժում Երանոս աղաի եւ անոր ընտանիքի նկատմամբ : Խեղճ երիտասարդը սաստիկ կը բարկանար . գիշեր ու ցորեկ անբացատրելի անհանգստութեան մէջ կը տանջուէր . առաւօտ մը երբ իր սփորական այցելութիւնը ըրաւ . Թորոս աղան իսկոյն մեկնեցաւ , սենեկի մէջ միայն Օհանն ու Հրանտը մնացին :

Երիտասարդը գրասեղանին առջեւ նստած կաշխատէր հաշուական խնդիրներով :

Օհանը՝ մտենալով երիտասարդին , ըսաւ . — Պա՛րոն Հայրապետեան , այսօր ձեզի ամենակարեւոր խօսելիքներ ունիմ . դուք ձեր հաւատարմութիւնը ցոյց պիտի տաք իմ ընելիք առաջարկութեան եւ հրամաններու ճշդիւ գործադրութեանը մէջ :

Հրանտ գրիչը թողլով ձեռքէն , պատասխանեց . — Հրամայեցէք . պատրաստ եմ ձեզի լսելու :

— Դուք անշուշտ կը յիշէք ձեր հաւատարմութեան եւ գաղտնապահութեան խտտումները :

— Այո՛ , ինչ որ խտտացայ , նոյնը պիտի կատարեմ :

— Շնորհակալ եմ , պատասխանեց Օհանը , եւ մեքենապէս դրաւ անոր մօտի մէջ հինգ ոսկի . — Առ այժմ առէ՛ք այս հինգ ոսկին , հայրս հրամայեց ինձի որ վճարեմ ձեզի այն փոքրիկ գումարը փոխարէն ձեր հաւատարիմ ծառայութեան :

Հրանտը շնորհակալութիւն յայտնելով ընդունեց ոսկիները եւ դրաւ գրասեղանի վրայ :

Օհանը շարունակեց իր խօսքը . — Պ . Հայրապետեան . դուք անշուշտ կը ճանչէք լաւ կնիք փորագրող մը :

— Կնիք փորագրող շատեր կան . միայն թէ ես կարող եմ գտնել անոնց ամենէն ճարտարը . պատասխանեց Հրանտ կեղծ բարեմտութեամբ :

Նոյն ժամայն Օհանը գրապանէն հանեց ի վաղուց գրուած մուրհակ մը . բացաւ թուղթը՝ որուն սրարունակութեան ներքեւը կնիքուած կնիքը ներկայացուց գրագրին ըսելով . — Կը տեսնէ՞ք այս կնիքը :

— Ա, յո՛ւ , պատասխանեց երիտասարդը , հայերէն փորագրուած է :

— Կրնա՞ք կարդալ այդ անունը . կրկին հարցուց վաշխառուն :

Հրանտը մուրհակը առնելով ուշադրութեամբ նայեցաւ կնիքին վրայ , եւ ըսաւ . — « Էծուկենց Երանոս » 1852 թուականին է փորագրուած :

— Ճիշտ է , պատասխանեց Օհանը . հիմա ես ձեզի կը յանձնեմ այս թուղթը . դուք առանց վայրկեան մը վարանելու պէտք է գտնէք փորագրիչ մը եւ այս կնիքը նոյնութեամբ շինել կուտաք . որչափ դրամ որ պահանջէ յանձն առէք վճարել մեր հաշուոյն . բայց պէտք է զիտնաք որ այս գործը գաղտնի պիտի մնայ մեր երկուքի եւ փորագրիչի մէջ . ինչպէս որ գիտեք , այսպիսի խնդիրներու մէջ մարդս գաղտնասալահ եւ միտնգամայն շրջահայեաց ըլլալ պարտաւորեալ է :

— Իսկ եթէ վտանգ մը պատահի՞ , աւելցուց երիտասարդը :

— Ինչ սր ալ պատահի ես եմ պատասխանատու , դուք այդ մասին կատարեալ ապահով եղիք :

— Շատ լաւ . ես վաղ առաւօտ պատասխան կը բերեմ ձեզի ըսաւ . հիմա հրաման տուէք ինձի որ երթամ ձեր հրամանները կատարելու :

— Գացէ՛ք , պա՛րոն . յաջողութիւն կը մտղթեմ ձեզի :
Հրանտ առնելով մուրհակը . գրապանը զետեղեց ու հեռացաւ :

Քանի մը վայրկեան ետքը Թորոս ազան սատանի արագութեամբ սենեակ մտաւ եւ հարցուց իր որդիին . — Ի՞նչ ըրիր , յաջողեցա՞ր թէ ոչ :

— Ա, յո՛ւ . մինչեւ վաղ առաւօտ թերեւս պատրաստ կըլլայ Երանոս աղաի կնիքի ուրիշ մէկ օրինակը նոյնութեամբ . պատասխանեց Օհան դիւական փայտով :

— Ուրախ եմ . յարեց ծերունին , ալ համոզուեցայ թէ այդ անիծածի օճակը պիտի յաջողինք քանդել :

— Ի՞նչ կը կարծես դու , ինձի Թորոսեաց Օհան կըսեն . եթէ ես այդ անիրաւ Երանոսին արիւնը տգրուկի պէս չը ծըծեմ , թող քու որդիդ չըլլամ : « Հարազատ որդի գնմանութիւն հօր բերէ » կըսէ Սուրբ Աւետարանը :

Օհանի արտասանած վերջին բառերը խիստ ուրախութիւն պատճառեցին խորամանկ ծերունիին . նոյն ժամայն անոր աչքերուն մէջ փայլեցաւ տեսակ մը լոյս , զոր կարելի էր տեսնել անօթի դայլի աչքերուն մէջ միայն :

Որչափ կուրախանային այդ երկու չարագործները : Բայց Հրանտի զգացած ուրախութիւնը աւելի մեծ էր . անիկա բաժնուելով Օհանէն , անմիջապէս զնոյց գտաւ ծերունի հրեայ փորագրիչ մը . Երանոս աղաի կնիքով դրոշմուած փոխարկներ վճարուած հին մուրհակը ներկայացուց արհեստաւորին , եւ նոյնութեամբ կնիք մը փորագրելը պահանջեց :

— Կերեւի թէ խնկարան կնիքնիդ կորսնցուցած էք , հարցուց հրեան :

— Ա, յո՛ւ , պատասխանեց երիտասարդը :

Ծերունին ակնոցը դրաւ քթին ծայրը , երկար առնն մուրհակի կնքին վրայ նայելէ յետոյ ըսաւ . սատանայի ճարտիկութիւն պէտք է ասոր ճիշդ մէկ օրինակը շինելու համար :

— Ձեր արհեստի մէջ ունեցած բոլոր տաղանդը այս գործի մէջ ցոյց պիտի տաք , պատասխանեց Հրանտ :

— Լաւ . ես ասոր նոյնութեամբ կը պատրաստեմ , ըսաւ փորագրիչը . երկու ժամէն եկէք առէք :

— Ես այտակ կըսպասեմ մինչեւ որ դուք կը պատրաստէք , որովհետեւ հայրս կնքելու մուրհակներ ունի , պատասխանեց Հրանտ :

Հրեան խնդրի փոքրիկ տուփէ մը մանրացոյց ապակի մը հանեց . ձուլուած պղնձէ կնիքը , սեղմեց երկաթէ գործիքով եւ յետոյ ապակին մտանցնելով աչքերուն՝ սկսաւ փորագրել « Էծուկենց Երանոս » բառերը :

Ծերունի հրեան խիստ կարճ ժամանակամիջոցի մէջ կարողացաւ պատրաստել կնիքը , եւ առաջին փորձը կատարելու

համար, սովորակ թղթի կտորի մը վրայ կնքեց. յետոյ յաջողութեան ժպիտով ներկայացուց Հրանտի :

Երիտասարդը ուրախութեամբ առաւ կնքուած թուղթը, մուրհակի ներքեւ գտնուող կնիքի հետ բազդատեց թուղթը, եւ փորագրուած կնիքը դրաւ իր գրպանը ու ըսաւ. — Ըս'ւ է, ի՞նչ պիտի վճարենք ձեր աշխատութեան համար :

— Որդեակ, ինչ որ տաք, շնորհակալ կըլլամ. յարեց ծերունին :

Հրանտ կէս գաղղիական ոսկի դրաւ արհեստաւորին սեղանին վրայ, ու աներեւութացաւ . . . :

Հրեան գարմացաւ որ, այդ փոքրիկ աշխատութեան փոխարէն, երիտասարդը կէս գաղղիական ոսկի տուաւ. իր բոլոր կեանքի մէջ այս առաջին անգամն էր որ սպտակեցաւ իրեն այդպիսի մէկը : Ծերունին դարձեալ չը կտակածեցաւ ու եւ է խարդախութեան մը մասին :

Հրանտ, այդ նոր փորագրուած կնիքի վրայ անշնորհաբար երկու հորիզոնական գիծ շինեց զմեկի ծայրով, ի վերջոյ Նրանտո աղաի խակական կնիքէն զանազանելու ազգացոյց մը ունենալու համար ի ձեռին. եւ ի հարկին այդ գիծերով պիտի ապացուցանէր կնիքի շինծու ըլլալը :

Հետեւեալ օրը սուսուտուն կեղծ փորագրուած կնիքը տարաւ յանձնեց Օհանի : Չարագործը առանց ուշադրութիւն դարձնելու Հրանտի շինած նշանագծերուն, կնիքը դրաւ գլորպանը եւ շնորհակալութիւն յայտնելով քանի մը ժամ առանձին մնալու պէտք ունենալը ըսաւ :

Հրանտ մեկնեցաւ եւ գնաց խանի սրճատունը նստաւ :

Հիմա երկու վաշխառուներ զիրար տագրալելու եւ կործանելու միջման մէջ էին. Օհանը խորամանկ եւ խաբէրայ անձնաւորութիւն մընէր. խակ երանտո աղան այն առաւելութիւնութիւնը ունէր որ իր բնաւորութեան մէջ ունէր աղին յատկութիւններ. օրինակի համար, երբ մէկը անկարող էր վճարել իր պարտքը, անմիջապէս վաշխառուի եւ պարտատիրոջ մէջ համաձայնութիւն մը կը դոյացնէր. կը դադրէր տոկոս տուտի վրայ բարդելու, եւ միայն իր տուած մայր գումարը կը պահանջէր անկից. վճարելու դիւրին սրայմաններ կուտար

անոր եւ այլն, եւ այլն : Երանտո աղաի բնաւորութեան եւ յատկութեան այս լաւագոյն կողմերը աշխատող մշակ հասարակութեան ծանօթ էին. անկիւս ժամանակի համաձայն իր գործունէութեան ձեւերը կը փոխէր, հանդամանքներու համեմատ աւելի օգտակար միջոցներ կընծայէր իրեն դիմողներուն. բարեսրտութեան դիմակի ներքեւ՝ հասարակութեան մէջ բարի մարդու համբաւը հանած էր, այս պատճառով իր շահերը միշտ արդիւնաւոր կըլլային :

Թորոս աղան, Հրանտի մեկնելէն մէկ ժամ յետոյ, սենեակ գալով իմացաւ կնիքի յաջողութեան լուրը : Խորհրդակցութեամբ, Թորոս աղա եւ Օհան որոշում տուին Հրանտի ձեռքով Երանտո աղաի կողմանէ վճարուելիք կեղծ մուրհակ մը գրել տալու : Օհանը դուրս ելաւ, կոչեց Հրանտը, ծերունի Թորոսը հրամայեց գրագրին որ 500 ոսկիի փոխանակագիր մը գրէ եօթն օրէն վճարելի պայմանաժամով :

Երիտասարդը անցնելով գրասեղանի գլուխը, սիսաւ գըրել : — Որո՞ւ կողմանէ պիտի ստորագրուի այս փոխանակագիրը, հարցուց Հրանտ, առանց իր գլուխը վեր վերցնելու :

— « Էձուկենց Երանտո աղաի կողմանէ », պատասխանեց Թորոս աղան : Երիտասարդը շարունակեց իր գրութիւնը, եւ քանի մը վայրկեանէն վերջացնելով, փոխանակագրին սխառնակութիւնը ներկայացուց ծերունիին :

Թորոս աղան սուս մուրհակը գրագրին ձեռքէն. եւ յետոյ ակնարկով մը հասկցուց իր որդւոյն թէ գրագրին բան մը վճարել պէտք է : Օհանը վայրկենապէս ձեռքը գրպանը մըացուց եւ դուրս հանեց քանի մը փայլուն ոսկիներ, եւ ապա մտանալով երիտասարդին, ըսաւ .

— Պա՛րոն Հայրապետեան, ձեր հաւատարիմ ծառայութեանը մասին շնորհակալ եմք. առ այժմ ընդունեցէք մեր փոքրիկ նուէրը. հեազհետէ կըստանաք մեր կողմանէ աւելի մեծ գումարներ : Երբ Օհանը ձեռքը կերկնցնէր Հրանտին՝ ոսկիները տալու, անկիւս առանց շարժում մը ընելու, բացասական կերպով գլուխը շարժեց :

Օհանը, չկարողացաւ հասկնալ անոր լուրթեան պատճառը. կարծեց թէ Հրանտը այդ քանի մը ոսկիները անբաւա-

կան կը համարէր . կրկին ձեռքը դրսւանին մտեցուց , քանի մը հաս ալ հանեց , ոսկիները բազմապատկեցան : Երիտասարդը իր վրայ ո եւ է կասկած չըհրաւիրելու համար , շնորհակալութիւն յայտնեց եւ ստացաւ ոսկիները : Հրանտի սիրտը դժոխային , բարկութեամբ լցուեցաւ , իր բոլոր աշխիւ զգացումները խեղդեւ կը ջանար վաշխառուներու ներկայութեան , եւ երկար ատեն չը կրնարով կենալ այդ սենեկի մէջ , հրաման խնդրեց մեկնելու :

— Գացէ՛ք , ըսաւ ծերունին :

Հրանտ սենեակի դռնէն ելաւ : Հազիւ քանի մը քայլ առած էր Օհանը հասնելով անոր ետեւէն ըսաւ . — Զեղի հետ ուրիշ խօսելիքներ ունիմ , պա՛րոն Հայրապետեան , բայց հիմա ժամանակ չունիմ . իրիկունը պիտի դամ ձեզի հիւր ըլլալու , այնտեղ երկարորէն կը խօսինք :

Բորբոքուած երիտասարդը զտելով իր բարկութիւնը , կեղծ ժպիտով մը սրտասխանեց . — Եթէ այցելէք մեր աղքատիկ բնակարանը , շատ շնորհակալ պիտի ըլլամ . հրամայեցէք կապտեմ այս իրիկուն :

— Անպատճառ պիտի դամ , աւելցուց Օհանը . բայց կը խնդրեմ որ ձեր տանը հասցէն շնորհ ընէք ինձի տալու :

Հրանտը մեքենայէս թուղթի մը վրայ գրեց իր տան հասցէն , սուսա Օհանի ու բաժնուեցաւ :

Նոյն ժամայն խորամանկ Օհանի դէմքին վրայ երեւաց ուրախութեան ժպիտ մը . հիմա անհամբեր կըստատէր որ օրն իրիկուն ըլլար . որպէս զի երթար Հրանտի տունը՝ իր խայտառակ սէրը յայտնելու տիկին Վարդուհայ :

Արդէն երիտասարդը գուշակած էր այդ հրէշի միտքը , թէ ի՞նչ պատճառաւ կուզէր հիւր մնալ գիշեր ատեն իր տունը . — Ինչպէս որ պէտք է այս գիշեր ես կը խայտառակեմ քեզ , ըսաւ ինքնին . դու եկո՛ւր . ես ամենայն սիրով պիտի ընդունիմ . բայց զգուշացիր , չըլլայ թէ մօրս պատուոյն դէմ մաքառելու ելլես :

Ժ Գ

Իրիկուն էր :

Հազիւ 40-45 տարեկան անձ մը . թուխ դէմքով , վիթխարի քթով , կարճ շրթունքներով , երկայն ու դուրս ցցուած ականջներով , մեծ փորով եւ սապատով , կամուրջէն նաւակ մը նստած կուգար դէպի Իւսիլուտար . չափազանց այլանդակ դէմք մը ունէր այս անձաւորութիւնը . զինքը տեսնողին վրայ անախորժ տպաւորութիւն մը կը թողուր :

Նաւարարը . իր յաճախորդի շատախօսութեան ձանձրացած , անընդհատ կը թիտափարէր , գլուխը աջ եւ ձախ դարձնելով անդադար :

Ընթերցողը անըւշա դուշակեց թէ՛ այդ անձը վաշխառու թորոսի որդին Օհանն էր :

Օհանը ելլելով Իւսիլուտարի նաւամատոյցը , ծանր եւ անհաւատար քայլերով , սկսաւ երթալ դէպի Հրանտի բնակավայրը : Փողցոցներէ անցնելու ժամանակ մեծ փորը դուրս ձքաւ , քիթը դէպի վեր բարձրացուցած , անդադար կը նայէր այս եւ այն կողմը տեսնելու համար ծանօթ դէմք մը :

Հրանտը այս իրիկուն շատ կանուխ տուն եկած էր , մայրը լսելով այդ անբարոյական կեղտոտութեան մէջ ապականուած մարդուն գալուստը , սարսուռ մը զգաց իր ամբողջ մարմնովը . յանկարծ միտքը ինկան այն օրուան անցքերը եւ խօսակցութիւնները որ տեղի ունեցան իր եւ Օհանի մէջ , երբ դացած էր որդւոյն պաշտօն խնդրելու . տիկնոջ մշտած խիճակը բնաւորութիւնը յանկարծ մոսշլեցաւ ամպամած երկնքի նման :

Երիտասարդը զգալով խղճալի մօր հոգեկան ներքին յուզումը , սկսաւ մի առ մի բացատրել այն բոլոր եղելութիւններն ու խարդախութիւնները որ տեղի ունեցան Երանտս աղաի դէմ : Երիտասարդը շարունակելով իր խօսքը , ըսաւ . — Մայր , իմ այս ախուր պատմութեանս մէջ ուրախալի բան մը կայ . վատաչ եղի որ այս մարդիկը չպիտի յաջողին իրենց խարդախութիւններն ի գործ դնելու . այս վայրկենիս անոնք կը կարծես

թէ յաջողած են , բայց ես պիտի յայտնեմ անոնց այն ամէն խարդախութիւններն ու կեղծիքները որ հետզհետէ կը կատարուին Թորոս աղաի եւ իր սրբւոյն կողմանէ : Օհանի այս իրիկուն մեզի հիւր դալուն մէջ մենք պիտի ունենանք մեծ յաջողութիւններ . ասոնք ինքնին ներկայացած առիթներ կը համարուին , որոցմէ ես շատ օգուտներ պիտի կարողանամ քաղել :

— Բայց ես կը սոսկամ այն անբարոյական մարդու ներկայութենէն . ան արդէն ցոյց տուաւ իր դարձելի անձ մը ըլլալը այն օրը , երբ ես ներկայացայ առաջին անգամ :

— Ճշմարիտ է , պատասխանեց Հրանտ . ես այդ կարգի մարդոց կեանքը քիչ ժամանակի մէջ շատ լաւ ուսումնասիրած եմ . վաշխառուները մեծ մասամբ բարի պտուղ մարդիկներ են . Օհանը գուցէ այս իրիկուն իր կեղտոտ նորատակին հասնելու համար՝ մեր տունը հիւր պիտի ըլլայ , եւ երբ մեր ընտանեկան պատիւը արատելու փորձեր ընէ , այն ատեն ես պատրաստ եմ իր արժանաւոր պատիժը տալ անոր :

Մայր եւ որդի հազիւ իրենց խօսակցութիւնը վերջացուցած էին , յանկարծ դրան առջեւ յայտնուեցաւ Օհանը , եւ բաղկեւելով փողոցի դուռը , ներս մտաւ : Երիտասարդը դիմաւորելով առաջնորդեց անիկա ընդունելութեան սրահը :

Տիկինը դբաղած էր խոհանոցի մէջ . այդ պատճառով չը ներկայացաւ Օհանին : Քանի վայրկեան ետքը վաշխառուն Հրանայեց որ օդին բերեն :

— Ներեցէք , մեր տանը մէջ օդի պահել սովորութիւն չունինք , ըսաւ Հրանտ . որովհետեւ ոչ ես եւ ոչ ալ մայրս այդպիսի ըմպելիքներ կը գործածենք :

— Բայց ես վարժուած եմ ամէն իրիկուն քանի մը դաւաթ օդի գործածել . առանց անոր անկարելի է որ գլխերները քնանամ , պատասխանեց Օհանը , եւ գրպանէն մէճիտ մը տուաւ երիտասարդին որ երթայ օդի դէնէ :

Հրանտ տեսնելով Օհանին հրամայական ձեւերը , կը դայրանար , կուզէր այս իրիկուն դուռն թափել իր բոլոր դաւանութիւնները որ ծանրացած էին անոր սրտին վրայ . բայց նպատակ մը կար որ կատարէր զինքը գտնել այդ դաւանու-

թիւնները , անմիջապէս դրոյցիլն տղուն հետ բերել տուաւ շիչ մը օդի , եւ մատուցարանի վրայ դնելով բերաւ : Օհանը երբ տեսաւ լեցուն շիչը , դէմքը սլոյծառայցաւ ուրախութեան արտայայտումով եւ մէկը միտին ետեւ սկսաւ խմել քանի մը դաւաթ օդի :

Երբ անոր գլուխը սկսաւ քիչ մը տաքնալ , ըսաւ Հրանտի . աղաս , սա օդին առանց ընկերի չերթար , ուստի եթէ կարելի է , ինձի քիչ մը բան ճարելիք :

Հրանտ ցրտագիմութեամբ մը ըսաւ . — Ի՞նչ կուզէք :

— Ի՞նչ պիտի ուզեմ , թիժու մութու բան մը . կամ ճիւթ սպասուղ մը :

Հրանտ բարկութիւնը զուգելով դուրս ելաւ . եւ ուժգին դուռը գոցեց : Մայրը որ այս միջոցին կերակուրի դործը ըմնցուցած էր , ներս մտաւ բայց դրան սաստիկ բաղիւխներ արդէն լած ըլլալով չիտխած բտաւ . — Ներեցէք . արդեօք Հրանտն էր դուրս ելնողը :

— Այո՛ , սիրելիս . հիմա կը դառնայ կուգայ , նստեցէք , հոգնած կերելիք . ձեզի օդի մը տալ կը վայել ալ :

— Ներեցէք չեմ գործածեր :

— Գիտեմ թէ օդի գործածելու սովորութիւն չունիք . հիւրի մը կողմանէ դաւաթ մը օդի ընդունելը կարծեմ յարգանք մը մատուցանել է . հետեւաբար համարձակութիւն տալ նուաստիս որ ուզածիս պէս չարժիտ . ուստի կը խնդրեմ որ , ի սէր հիւրընկալութեան , ընդունիք այս փոքրիկ դաւաթը :

Վինը քաղաքավարութեան դէմ չգործելու համար . առաւ դաւաթը եւ իր յարգանքը մատուցանելով , քանի մը կաթիլ շրթունքին տարաւ եւ նորէն իրեն դարձուց :

Օհան ուրախութենէն շիտխած . — Սնուշ ըլլայ խաշիլս . ըսելով , ձեռքը թուշին տարաւ , եւ ալ կարծելով որ աղատ դուարձանալու ժամանակն է . թեւէն քաշելով կուզէր որ քովը նստի : Սակայն կինը իր պատիւին կատարեալ նախանձախնդիր մէկը ըլլալուն , անխոհեմութեամբ մէկդի հրեց , քանի մը նախատական խօսքեր ուղղելով : Այս միջոցին դուռը զարնուեցաւ . կինը բարկութեամբ դնաց դուռը բացաւ . եւ երբ

մայր ու աղայ միասին սենեկէն ներս մտան , Օհան ոտքի վրայ կեցած սենեկէն դուրս ելլելու վրայ էր : Խոկոյն սանդուխէն վար իջաւ , եւ առանց մնաս բարովի , դուռը բացաւ ու ան- ճայն մեկնեցաւ :

Ժ Գ

Տեսարանական այս յեղակարծ փոփոխութեանը վրայ Հրանտ վայրկեան մը խորհելէ յետոյ , մօրը դառնալով ըսաւ . — մեր մեքենային անիւներուն պայտէս յանկարծ խորտակուիլը աղէկ չեմ տեսներ : Այս միջոցին ժամը գիշերուան երկուքը կը զարնէ :

Օհան տաք գլխով կը քայլեր . անընդհատ կը քայլեր , բայց ուր երթալիքը չէր գիտէր : Այսպէս թանձրամած մութին մէջ դերթէ 6-7 վայրկեան քայլելէ յետոյ , ըսաւ խորովի . — Ո՞ր կերթամ ես . գիշեր է . կրնայ ըլլալ որ մէկ փորձանքէն աղա- տելով ուրիշ փորձանքի մ'ալ հանդիպիմ . ուստի խոհեմու- թիւնը ձեռքէ ձգելու չէ : Եւ յիշողութիւնը ամիտութեամբ , միտքը եկաւ թէ այն կողմերը բարեկամ մը , աւելի ճիշդը ըսելով պարտապան մը ունէր , եւ քանիցս անոր տունը յաճախած էր ժամանակով . ստակ պահանջելու համար : Ուստի առանց հե- տեւանքը կանխաւ գուշակելու , փողոցէ փողոց անոր տունը կը փնտռէր , առանց մտածելու թէ անոր ալ սիրտը քանիցս վիրաւորած էր երբեմն , անխղճաբար չափազանց սուկոս պա- հանջելով : Վերջապէս յաջողեցաւ գտնել , ուշադրութիւնը ը- րաւ նայեցաւ որ նոյն իսկ այն տունն էր . եւ ըստ երեւութիւն բաւական ալ հիւրեր ունենալու էր : Վասն զի տանը մէջ լու- սավառութիւն մը ուրախութիւն մը կերեւար : Արգարեւ մին- չեւ դրանը առջեւ եկաւ . բայց չը համարձակեցաւ դուռը զարնել . Խոկոյն յիշեց թէ այդ դրան առջեւ ո՛րչափ աղաչած ու պաղտատած էր այդ տանուտէրը պայմանաժամ խնդրելու համար : Բայց հետուէն ոտքի ձայներ լսելով « Ի՛նչ կըլլայ թող ըլլայ » ըսաւ . դուռը զարկաւ : Խոկոյն գեղադէմ՝ աղջիկ մը աշտանակ ի ձեռին դուռը բացաւ , եւ յանկարծ այս հըրէ-

չադէմ մարդուն կերպարանքը տեսնելով ետ գնաց քանի մը քայլ . բայց քաղաքավարութեան դէմ չգործելու համար ամ- փոփեց ինքզինքը եւ հարցուց . — Զո՞վ կը խնդրէք :

— Գէորդ աղան . պատասխանեց Օհանը :

— Շատ աղէկ . կանչեմ ըսած միջոցին՝ արդէն Գէորդ աղան վար կիջնար , ըսելով . — Ո՞վ է ան :

— Ես եմ , Գէորդ աղա , օտարական չէ , ըսաւ . եւ անտարբեր սկսաւ դէպի սանդուղը յառաջանալ . եւ շարու- նակեց խօսքը . — Այս գիշեր դուրսը մնացի . չգիտեմ թէ գիւ հիւր կընդունի՞ր թէ ոչ :

Գէորդ աղան անյիշաչար դէմքով պատասխանեց . — Հրամայեք բարեկամ , այս գիշեր տանս մէջ դու գաղխուլութեամբ շատերը ինծի հիւր եղած են , հիւր մըն ալ թող աւելի ըլլայ , հրամայեք . եւ դէպի հիւրերուն սենեակը առաջնորդեց : Բազ- մութիւնը երբ տեսաւ այս անհեթեթ մարդուն ներս մտնելը , կոշտ տպաւորութիւն մը ըրաւ ամենուն սրբտին մէջ . թէպէտ եւ չըզլացան իրենց քաղաքավարական յարգանքները յայտնել . բայց առ երեստ ընդմիջեցաւ առժամանակեայ կերպով իրենց զուարճալի կատակները . իսկ Գէորդ աղա , հանդէսը ոգեւո- րելու համար , այլ եւ այլ ուրախարար խօսքեր ուղղեց քանի մը երիտասարդներու՝ որ սկսան դարձեալ զուարճութեան : Իսկ ինքը Օհանի հետ խօսքի բռնուեցաւ հասկնալու համար թէ Ի՛նչ դիպուածով գիշեր ժամանակ դուրսը մնացած էր :

Օհան այն գիշերային անակնկալ ճախողութենէն եւ ներ- կայ բարեյարմար զուգադիպութենէն այնչափ այլայլած . այն- չափ խռոված էր որ առանց Գէորդ աղաի հարցումներուն պատասխան մը տալու , առժամանակեայ առանձնութիւն մը խնդրեց : Զինքը քովի փոքրիկ սենեակը առաջնորդեց , եւ սուրճ երկը տալու համար դուրս ելած միջոցին , ըսաւ . — Կաղաչեմ , Օհան աղա , ձեր տանը պէս վարուելու համար ամէն ազատութիւն ունիք :

— Շնորհակալ եմ , Գէորդ աղա . ձեր այս մարդասիրա- կան գործը երբեք չպիտի մոռնամ :

— Մարդասիրական գործ մը չէ՛ , այլ պարտականութիւն մը բարեկամի առ բարեկամը . ըսաւ ու դուրս ելաւ :

Օհան քառորդ ժամու մէջ հազիւ իր սրտին բախումը դադարեցուց :

Գեղարդէմ աղջիկը սուրճը բերաւ եւ դուրս ելլելու միջոցին , մտաւ Գէորդ աղա եւ բարի գալուստ մաղթելէ յետոյ , որախառնութիւնը հարցուց : Օհան որչափ որ հանդարտօրէն պատասխան կուտար , բայց միտքը դբաղած էր այն եղելութեան վրայ , ուրիշ երջանկութեան լոյս մը նշմարել կը կարծէր : Օհանի դէմքին դժագրութենէն հասկցաւ թէ մեծ փոթորիկ մը անցուցած էր զլիսէն . գիտեր նաեւ թէ սուրճը առանց ծխախոտի չէր խմեր , ուստի խօսքը ծխախոտին վրայ դարձնելով ըսաւ . — Կարծեմ ծխախոտ կը գործածէք . բարեկամ :

— Այս գիշեր բնութեանս հակառակ վարուող բացառիկ մարդ մըն եմ , պատասխանեց Օհան : Շնորհակալ եմ , ձենէ հիւրընկալութիւն մը խնդրեցի , եւ դուք անյիշաչարութեամբ զիս իբր բարի ազգական մը ընդունեցիք :

— Ատոնք , ըստ իս , աւելորդ խօսքեր են , ըսաւ . ես հիմա կուզեմ որ ձեր զլիսէն անցածը ինձի պատմէք . դուք յուսախաբուութեան մը գոհ գացած էք . այնպէս կերելի : Նս քաջ գիտեմ թէ դուք միշտ ձեր աւանդական սովորութիւնները կը պաշտէք , եւ անկէ մագի չափ շեղիլ չէք ուզեր : Ահաւասիկ մէկ օրինակն ալ վաճնցի Երանոս աղան է , կուզէ եղեր որ իր աղջիկը իր հայրենակիցներէն ծերուկ սյրիի մը տայ , մինչդեռ աղջիկը Հրանտ անունով Պոլսեցի երիտասարդ մը կը սիրէ :

Օհան երբ Հրանտ անունը լսեց , մէկէն ի մէկ կերպարանախոսեց եղաւ , եւ առաւել անոր խօսքերուն ուշադիր ըլլալով , հարցուց . — Ի՞նչ , Հրանտ այդ աղջիկը՞ կը սիրէ :

— Այո՛ , պատասխանեց Գէորդ աղա անտարբերութեամբ . եւ սակայն Օհանի շարժումըն մակարերեց թէ յարաբերութիւն մը պիտի ըլլայ՝ իրեն ու Հրանտի միջեւ , ուստի համառօտիւ ըսաւ թէ — Այսօր ահաւասիկ երկպառակութիւնը պակաս չէ՛ տանը մէջ :

Երկուտեք վայրկենական լուռութիւն մը տիրեց . մին կսպասէր խօսքին շարունակութեանը , եւ մըւսը սոյն նիւթին վրայ նոր լուր մը առնելու : Օհան անհամբեր տիրող լուռութիւնը խզելով , ըսաւ . — Շարունակեցէ՛ք . եղբայր , շարունակեցէ՛ք :

— Շարունակելու բան մը չիկայ . ահաւասիկ այսչափ : Գիտես արդէն թէ կիները այս տեսակ լուրերու հետաքրքիր են . ես այսչափը իրենցմէ լսեցի . իսկ եթէ դուք ասկէ աւելի մանրամասն տեղեկութիւն ունիք , դուք պատմեցէ՛ք , ըստ որում երկուքնիդ ալ միեւնոյն քաղաքէ էք :

Այն ատեն Օհանը մեծ եւ խոր հառաչանք մը արձակելով ըսաւ : — Իրաւունք ունիք , եւ քանի որ քեզ եղբայր անուանեցի եւ քանի որ դուք զիս այս գիշեր անոխակալութեամբ հիւրընկալեցիք , պէտք է որ ես ալ սրտիս գաղտնիքը բացարձակապէս յայտնեմ ձեզի : Բա՛րեկամ , այդ ձեր յիշած Հրանտ մեր գրագիրն է :

— Ձեր գրագիրը՞ . . . պատասխանեց Գէորդ աղա :

— Այո՛ , մեր գրագիրը . երեսէն համեստ տղայ մը կերեւէր : Մայրը քանի մը ամիս առաջ եկաւ աղաչեց որ իր որդին իբր գրագիր ընդունինք : Մենք ալ թէ՛ անոր թշուառ վիճակին եւ թէ՛ դատարկաշրջիկ տղուն բարիք մը ընելու համար , ընդունեցինք : Այս միջոցին երկու երիտասարդ ներս մտան , եւ ամենայն խոնարհութեամբ ակնոտի վրայ նստան : Օհան անտարբեր շարունակեց իր պատմութիւնը . — Այս խորամանկ տղան չարաթ մը երթեւեկելով եւ մեր գործերը ուշադրութեամբ ու կանոնաւոր կարգադրեց . մենք ալ մեծ համարում ունեցանք իր վրայ , սիրեցինք մեր գաւկին պէս , եւ հետզհետէ մեր առեւտրական գաղտնիքները սկսանք իրեն հաղորդել : Հայրս , որ քանի մը փոխանակագրեր ունէր այդ Երանոս աղաի կողմանէ . 15-20-30 օրուան վճարելի . այս փոխանակագրերուն հետ քանի մը այլոց մուրհակները , դիպուռածով մը այս ամենը այրած մոխիր դարձած էր , եւ ինքն ալ սոյն եղելութիւնը իմացած ըլլալով ուրացած է :

Պէտք է գիտնալ որ , այս պարագային միջ Օհան ինքզինքը անմեղ ցոյց աալու համար , պատմութիւնը կը խեղաթիւրէր , եւ մերթ ընդ մերթ ալ սուտեր կը յերկրէր : Երկու երիտասարդ ալ այս հետաքրքիր պատմութեան վախճանին կը սպասէին , եւ Օհան խօսքին թէլը առանց կորսնցունելու , շարունակեց . — Հայրս ու ես , այս կորուսեալ փոխանակագրերուն դարման մը տանելու համար , բաւական ժամանակ-

ի վեր կը խորհէինք , եւ քանի որ Հրանտի վրայ ալ կատարեալ վստահութիւն ունէինք , որ եւ ճշմարիտը խօսելով ճարտարիկ եւ հեռատես մէկն է . կեղծ կնիք մը փորագրել տալու երբեք չըրկածեցանք . եւ լիովին վարձատրեցինք : Բայց եւ այնպէս յայտնի բանէ է որ այսուհետեւ այդ կեղծ կնիքին վրայ ալ երբեք վստահութիւն չունինք :

Յանկարծ այդ երկու երիտասարդներէն մին հարցուց անհամբեր . — Այդ Հրանտը ձեր գրագիրն էր :

— Տարակոյս չկայ :

Այս միջոցին երկու երիտասարդի մէջ հծծիւն մը սարգեցաւ , եւ Օհան կրկին շարունակեց . — Այսօր փախստական պարտապան մը փնտրուելու համար Հրանտի հետ այս կողմերը եկանք . բայց թող որ մեր աշխատութիւնը իդերեւ ելաւ , ժամանակն անցած ըլլալով ստիպեց որ իրեն հիւր ըլլամ այս գիշեր : Սա ալ պէտք է նկատուածեան առնել որ իրիկունները քանի մը գաւաթ ուրի կը գործածեմ . ուստի Հրանտին կանխաւ ծանուցի ուրի գործածելը . որով ինքն ալ նոյնը պատրաստած էր : Երբ տուն դարձանք , մայրը սովորական քաղաքավարութեամբ ընդունեց զիս . յետոյ Հրանտ դուրս ելաւ տան համար պէտքեր հոգալու . եւ մայրն ալ կարծեմ կերակուր պատրաստելու համար վար իջած էր : Մինչեւ ան ատեն ես 5-6 գաւաթ ուրի պարպեցի , երբ մայրը չգիտեմ ինչ պատճառով վեր ելաւ եւ բազմոցին վրայ նստաւ , ես ալ , քաղաքավարութեան դէմ չըգործելու համար , գաւաթ մը ուրի հրամցուցի . « հրամէ սիրելիս » ըսելով : Այս « սիրելի » բառը ըստ որում մեր գաւառական սովորութիւնն է . նոյնը այս կնոջ ալ կրկնեցի . բայց ինքը այլ եւ այլ մտքերու երթալով , ինծի դէմ անպայել խօսքեր ուղղեց : Ես ալ չլինալով համբերել , իսկոյն վար իջայ . բայցի դուռը , մեկնեցայ լաւեւայն եւ գրեթէ չունջալ այս սանը մէջ առի :

Գէորգ աղա պատմուածք մտքին մէջ քանկցաւ դարձնելէ յետոյ . — Այդ պատմութեան մէջ թիւրխնացութիւն մը կայ ըսաւ , ո՛չ թէ բոլորովին ստուծիւն :

— Այս գործը բուն իսկ աղբիւրէն կրնամ տեղեկանալ . ըսաւ երիտասարդներէն մէկը :

— Ես այս մարդուն գործը դիւրացնելէ յետոյ , ըսաւ միւս երիտասարդը . կնիքին մէջ ալ եթէ կրկին խարդախութիւն մտած է , իմ բարի ընկերս կրնայ սրագրել առանց վարձատրութեան մը սպասելու . հետեւաբար Հրանտէն վրէժ առնելը մեր անհրաժեշտ պարտականութիւնը պիտի ըլլայ այսուհետեւ :

— Բարեկամ , դուք ալ կարծեմ Հրանտի դէմ մասնաւոր ատելութիւն մը ունիք , ըսաւ Օհան , կեղծ միամտութեամբ . եւ մասամբ իւր սրտէն , ի նպատակ իրեն , Հրանտի դէմ դիտակալութիւն ունենալուն , աղաչական ձեւով մը խնդրեց փորագրիչ երետասարդէն որ վաղը իր սենեակը հրամայէ :

Երիտասարդը սիրով ընդունեց իր խնդրիքը : Օհան տեսնելով որ իր սիրահարական ձեւակերպութիւններուն կոշտութիւնները յողս կը ցնդին . հետեւաբար Հրանտի սիրահարութեանը դէմ օրինաւոր հակառակորդ մը կը գտնէ . եւ սրտին մէջ անպատում ուրախութիւն մը գգալով , խնդրեց տանուտէրէն որ երթայ հանգչի :

Գէորգ աղա իրեն համար պատրաստուած անկողին մը ցոյց տալով մասնաւոր սենեկի մէջ եւ բարի գիշեր մաղթելով , հեռացաւ . . . :

Ժ Ե

Այս երկու երիտասարդները որ , ինչպէս իվեր անդր յիշեցինք , Չիֆթ լիկի պարակցին մէջ շրջագայողներն էին . շուրջարար ժամանակ անցնող եւ իր հօրը հարստութիւնը հետզհետէ փճացնող անձին անունն էր Տօնիկ . իսկ միւսը , որ կատարելագոյն հացկատակ մընէր , ճարտար փորագրիչ մը , բայց ծոյլ մընէր , եւ անունն ալ Թովմաս :

Թովմաս միշտ Տօնիկի հետ ժամանակ կանցնէր , խեղճատակութեան մասին ալ վարպետ էր : Ուստի Օհան երբ իրեն նշմատենեակը մտաւ պատկելու . Թովմաս եւ Տօնիկ նոյնպէս եւ Գէորգ աղա հանդիսականներուն սրահը գային . ուր Թովմաս Օհանի ազեղ դէմքը , յառաջքողերը որովայնը եւ սապատող կուզիլը ձեւացնելով , բազմութիւնը կը զուարճացնէր :

մանուսնդ իր տգեղութեամբը , դաւառական լեզուով ըրած քաղաքավարութիւնները , երբ թովմաս ճշգրտութեամբը կատարեց , ամենքը զարմացան մնացին : Վասն զի սա յատկութիւնն ալ ունէր այդ երկտասարդը որ տեսածը խիոյն իր ձեւակերպէր նոյնութեամբ եւ լսածը մտքին մէջ իր սպաւորուէր : Սակայն Տօնիկ որ այս միջոցին առաւել զուարթ եւ ուրախ երեւնալու էր . ընդհակառակը , տխուր եւ մտածկոտ էր . ուստի թովմաս անոր տխրութիւնը նկատողութեան առնելով քովը դնաց եւ ըսաւ . — Ուստի է այդ տխրութիւնը . մի՛ գուցէ խեղիատակ ձեւակերպութիւններս ձեզի տհաճութիւն պատճառեն :

Այս միջոցին միւս հանդիսականները թուղթ խաղալու բաղձանք յայտնեցին , ուստի տանուտէրը Տօնիկն ալ հրաւիրեց թղթի խաղի , բայց անիկա չընդունեց , արդէն թովմասի հետ խօսքի բռնուած ըլլալով , շնորհակալութեամբ մերժեց . եւ թովմաս դառնալով ըսաւ . — Եղբայր , վրէժխնդրութեան ժամը հասած է կարծեմ , քանի որ այսօր Օհանի պէս սեղանաւոր մընալ մեզի կուսակից է :

— Ատոր տարակոյս չկայ , ըսաւ թովմաս . չգիտեմ թէ այդ աղջկան հետ ժամանակ անցնել կուզե՞ս թէ ամուսնանալ :

— Ժամանակ անցնել միայն եւ Հրանտը արտաքսել բոլորովն այդ տնէն :

— Եթէ այդպէս է , վրէժխնդրութեան միջոցները շատ դիւրին են . ուստի այս օրէն եւ այս վայրկեանէն ուրախ եւ զիք , զուարճացէք , եւ ձեր զուարճութիւնը կուզեմ որ յարատեւ ըլլայ . ի՞նչ բանի պիտի ծառայէ մեր բարեկամութեան , մեր ընկերութեան արգասիքը . եթէ ձեզ տխուր տեսնեմ : Արդէն ես մտքովս յատակադիծ մը պատրաստած եմ . Հրանտի միայն անմեղութեան զէնքը չպիտի կրնայ ինքզինքը պաշտպանել եւ մեր մտքորահետ բաւդին մէջ փրկութեան ուղին գտնելու՝ յուստիսարութեամբ տարապարհակ վարուելով , հուսկ ուրեմն իր կորստեան յենակէտին վրայ պիտի տեսնէ՞ Վերգինէ որ Տօնիկի հետ իր զուարճանայ . արդ մի՛ ընդհատեր ձեր զուարճութիւնը ունայն խտկումներով . թո՛ղ ինձի այդ խտկումները , ասիկա իմ բաժինն է . թղթախաղը

իւր սիրէք . անցիք սեղանին գլուխը , եւ երբեք թող չվրդովի ձեր սիրտը , քանի որ կապրի թովմաս :

Այս ատիւիչ խօսքերէն բաւական խորախուսուելով Տօնիկ , ոտք ելաւ եւ թղթասեղանին մօտեցաւ խաղացողներուն ճարտարութիւնը դիտելու : Այս պահուն տանտէրը թովմասի մօտենալով որ առանձին էր , ըսաւ . — Ձեր խօսակցութեան նիւթը Հրանտի վրայօք էր կարծեմ :

— Այո՛ , պատասխանեց թովմաս :

— Ես ալ այնպէս մակարերեցի եւ իր յուսամ թէ Տօնիկ Հրանտի սիրահարութեանը խոչնդոտ մը ըլլալ կուզէ :

— Այո՛ , այնպէս է , կրկին պատասխանեց թովմաս :

— Հետեւաբար Հրանտէ վրէժ լուծելով անոր տեղ ինքը յաջարկել , ըսաւ Գէորգ աղա :

— Այո՛ :

— Բայց չեմ յուսար թէ յաջողի :

— Ինչո՞ւ . հարցուց թովմաս զարմացմամբ :

— Որովհետեւ այս Օհանը , որ այս գիշեր դիպուածով հոս է . շատ ջանաց այդ աղջիկը ձեռք ձգել . բայց չյաջողեցաւ . վասն զի աղջիկը կատարելապէս սիրահարած էր Հրանտի . միով բանիւ՝ աղջկան կամքէն կախուած էր իր ամուսնութիւնը :

Թովմաս ձեռքը ճակտին դրած , քանի մը վայրկեան մտածելէ յետոյ , ըսաւ . — Օհանի կենցաղավարութեանը վրայ գաղափար մը ունի՞ք :

— Կատարելապէս :

— Ի՞նչպէս ,

— Օհան բնութեամբ անգութ , խորամանկ , չարամիտ , կծծի , ագահ եւ շափաղանց հարուստ մէկն է :

— Աւելի սղէկ , ըսաւ թովմաս խնդրութեամբ , եւ աւելցուց . այդ շարք մը ամականներուն մէջ իմ ընտրածս խորամանկն է : Խորամանկ է արդեօք կատարեալ :

— Այնպէս իր թուի ինձի . յարեց Գէորգ աղա :

— Եթէ այնպէս ըլլար , մինչեւ ցարդ Վերգինէի հետ ամուսնացած պիտի ըլլար . ի՞նչ որ է . գոնէ պարզամիտ մէկը չէ , այդչափն ալ ինձի կը բաւէ :

— Ինչ եւ իցէ . կը հասկնամ թէ Հրանտի եւ կամ Վերգիւնի դէմ խաղ մը պիտի խաղաք , բայց կը դուշապնեմ ձեզ որպէս զի ձեր խաղին թելերուն մէջ ինքզինքնիդ բռնուած չգտնէք :

— Ես այս խաղին դերակատարներուն մէջ չեմ տեսներ այնպիսի մէկը որ իր կտաւը կանոնաւոր նիւթէ , յարեց թովմաս յատուկ պարծենկոտութեամբ մը : Ուստի իմ աշարջուութիւնս ու խորամանկութիւնս կը բաւէ անոնց իւրաքանչիւրին օրինաւոր դաս մը տալու :

— Ալ դուք գիտէք . ըսաւ տանտէրը , դարձաւ խաղացողներուն կողմը , ուր Տօնիկ ալ նստած էր , եւ թէ անոնց խաղալը կը դիտէր եւ թէ՛ սիկար կը ծխէր : Վերջը թովմաս ալ եկաւ ընկերացաւ , եւ ամենքն ալ սկսան թղթի խաղով ժամանակ անցնել :

Ժ Զ

Գիշերային անկնկալ խոտովութեանը վրայ Հրանտ երբեք չէր քնացած՝ իրեն աննպատակ շատ տխուր դէպքեր երեւակայելով : Հետեւաբար ի նկատի առնելով որ չպիտի կարենար ալ Օհանի սենեակը երթալ , ուստի միտքը դրաւ որ արշալոյսը ծագելուն՝ Երանտս աղաի տունը երթայ եւ եղելութիւնը իմացնէ , թերեւս անոնցմէ կարենայ գաղափար մը առնել ինչ ընթացք բռնելուն վրայ :

Գծբաղդ երկտասարդը իր առանձնութեանը մէջ սա խորհրդածութիւնները կընէր . — Մայրս շատ յանգուզն գըտնուեցաւ , սէտք չէր որ անոր կոշտ ու կոպիտ վարմունքը բացարձակ պատարակէր : այլ իր խոնորհ պարկեշտութիւնն ու բնածիր ազնուականութիւնը անոր եպերելի յաւակնութիւնը խայտառակէին : Բայց ի՞նչ կըսեմ . անկիրթ գաւառացի մըն է այդ մարդը , մի՛ գուցէ այն ատեն մերս հեղահամբոյր բնառութիւնէն օգուտ քաղելով աներկեւան միջոցներու ձեռնարկէր . . . ոչ , ոչ , լաւագոյն միջոցը տանս սեմը չհանդպցնելն էր . ասիայն աս ալ անկարելի էր , քանի որ իր անկիրթու-

թեանը կանխաւ ծանօթութիւն ունէինք : Հիմա որ տանը վարձակալը եղելութիւնը փոքր ի շատէ գուշակեց . հետեւաբար այս մարդը գիշեր ատեն ատնը դռնէն դուրս ելաւ , ո՞ր գնաց . որուն տունը ապաստանեցաւ , եւ կամ գացած տեղը մեզի համար ի՞նչ տարապայման գրապատութիւններ յերկրեց . . . : Ո՛վ գիտէ , գուցէ վաղը դանազան թաղերէ եւ աննշան անձնաւորութիւններէ անվայել լուրեր առնենք . . . : Աստուած իմ , այս ի՞նչ փորձանք էր որ մեր գլխուն եկաւ : Այս տեսակ մտատանջութեամբ անքուն մնաց բոլոր գիշերը . առաւօտեան արշալոյսը ծագելուն պէս : ելաւ անկողնէն , մօրը ձայն տուաւ եւ սկսաւ հաղուիլ : Մայրը անոր շտապումէն հասկցաւ թէ ուղղակի Երանտի տունը պիտի երթար , ըսաւ . — Տղաս , դեռ ժամանակ կայ , մի՛ աճապարէր , այսօր վաճառականիդ երթալու օրը չէ . Օհան աղաին ալ , ինչպէս որ յայտնի է , երբեք երթալու գլխաւորութիւն չունիս . ուստի նստէ , կրակը պատրաստեմ , սուրճ մը խմենք եւ այդ գլխուածին վրայ լաւ մը խորհինք : Ասիկա ըսելով տիկին Վարդուհին շուտով ամուխ դրաւ վառարանին մէջ , քանի մը պատրաստ կրակներուն միջոցաւ կատարելապէս եղաւ կրակը , եւ ըստ արդի սովորութեան սրճամանը դրաւ կրակին վրայ եւ ինք ալ նստաւ . տեսաւ որ Հրանտ խոր մտածութեան մէջ էր , ուստի անոր սիրտ տալու եւ միթիթարելու համար ըսաւ . — Տղաս , ամենեւին մտածելու բան մը չիկայ . մեք եւ ոչ մէկուն դէմ անիրաւութիւն մը գործեցինք :

— Այո՛ այնպէս է , ըսաւ երկտասարդը՝ գլուխը չարժեքով : Բայց անիրաւութիւն գործելու տրամադիր եղողին գործակից եղանք՝ արդարը պաշտպանելու համար , ու չըյաջողեցանք : Ա՛հ , եթէ արդի վաճառականիս խորատներուն անսայի , այսչափ յառաջ չէի երթար . վասն զի ինքը կըսէր միշտ ինձի . — Տղաս , դուն դարոցէն նոր ելած բարեմիտ աղայ մընես . չըլլայ որ չար ընկերներու հետ ժամանակ անցնես , անոնք հրապարակին մարդամեքենաներն են . շուտով սիրտդ ու միտքդ կը կողտաւեն , ինձի երաշխաւորողը միայն անմեղութիւնըդ է . եւ կարծեմ բաւական պատիւ մընէ որ երաշխաւորեցի թորոս աղաի քեզի համար . եւ տակաւին՝ այլ եւ այլ բարոյա-

կան խրատներ : Հիմա եթէ իմ սիրահարութիւնս եւ այս դիպ-
ուածական յարաբերութիւններս իմանայ , ի՞նչ պիտի ըսէ :

Մայրը գաւաթ մը սուրճ տալով ըսաւ . — Աստուծոյ
յանձնէ ինքզինքդ , որդեակի . անաչառ է անոր դատաստանը .
դու քեզի ապաւէն մը ունիս որ է Վերգիլնէ . սիրտդ քննած
է եւ կրնայ ի հարկին քեզ պաշտպանել :

Երիտասարդը սուրճը խմելէն յետոյ՝ վարանամիտ ուղղեց
իր ճանապարհը դէպի Երանոս աղաի տունը : Սակայն յան-
կարծ միաքը եկաւ թէ ժամանակը դեռ կանուխ է . — Մի՛
գուցէ Երանոս աղա տակաւին տունը եղած ըլլայ : Ուստի
սկսաւ դանդաղաքայլ յառաջանալ , եւ թէ կը խորհէր ներկայ
դէպքը ի՞նչ կերպով պատմել . որպէս զի կասկածի տեղի
չըտայ : Եւ ահա Պաղլար-պաշի ընդարձակ դաշտավայրէն
երբ կանցնէր , երգիծական ձայն մը ականջին հասաւ . — Եղ-
ջիւրաւոր պարոն Հրանոս , ձեր սոյն գեշերային սիրաբանա-
կան հանդէսին յարատեւութիւն կը մտղթեմ :

Հրանոս իր շուրջը նայեցաւ՝ այդ չարագուշակ ձայնը ուս-
կից գալը իմանալու , եւ կարծես գլխուն քար մը ինկաւ , եւ ,
կեցած տեղը խեղացնոր , քիչ մնաց որ դլրէր : Բայց ինք-
զինքը ամիտօրէնով գնաց քարի մը վրայ նստաւ , վասն զի այս
տեսակ երգիծաբանութեանց չէր վարժուած : Ի վերջոյ խոր-
հելով որ այս երկչոտութեան հետեւանքը աղետալի վերջաու-
րութիւն մը պիտի ունենար , ոտքի ելաւ , դնաց սրճարան մը
նստաւ՝ դոյզն ինչ սրտին յուզմունքը դադրեցնելու համար :
Այդ երգիծաբանութեան հեղինակն էր Թովմաս եւ իր ընկերը
Տօնիկ , որոնք կանուխ դուրս ելլելով Երանոս աղաի անցնելուն
կըստատէին : Շատ չանցած տեսան որ Երանոս ծանրաքայլ եւ
գլխակոր Պաղլար-պաշիէն վար կիջնար դէպի Սէլամսրգ . եր-
կու երիտասարդներն ալ հասնելով ծերունիին : Թովմաս ակ-
նարկ մը կընէ Տօնիկին իրմէն հեռանալու . ապա ինքը ամե-
նայն խոնարհութեամբ յարգանքով բարեւելով կըսէ . — Նե-
րեցէք Երանոս աղա . թէպէտ եւ ձեզ ճանչնալու բարեբաղ-
դութիւնը ունեցած չեմ , սակայն կարեւոր խնդրոյ մը համար
քառորդի մը չափ ժամադրութիւն կը խնդրեմ , այսու ամե-
նայնիւ գիտցած ըլլաք որ իմ առաջարկելիքս ո՛չ նպատախ եւ

ո՛չ գթութեան խնդիր մընէ : Երանոս աղաի ազահութիւնը
եւ նշանաւոր կծծիութիւնը ծանօթ էր Թովմասի :

Երանոս աղա քիչ մը մտածելէ յետոյ ըսաւ . — Ձեր խըն-
դիրը հիմա չէ՞ք կրնար առաջարկել :

Այո՛ , բայց քաղաքավարութեան դէմ չդրծելու համար ,
ձեզմէ ժամադրութիւն խնդրեցի , որովհետեւ ինչպէս որ
յայտնի է , կերեւի թէ ուղղակի Պոլիս կերթաք :

— Ո՛չ պատասխանեց Երանոս աղա պաղ արինտով , դեռ
կանուխ է , եւ . . . ըսած մեջոցին : — Սա սրճարաններէն
մէկը նստինք . ըսաւ Թովմաս : Որպէս զի Երանոս սուրճի
վճարուելիք ստակին վրայ մտածելով միաքը չիօխէ . եւ պար-
տիզաւոր սրճարան մը առաջնորդեց Երանոս , եւ հոն պարտե-
զին մէջ երկուքը նստան դէմ առ դէմ : Տօնիկ ալ նոյն սրճա-
րանը մտաւ . բայց իբր օտար , իրենցմէ հեռու տեղ մը քաշ-
ուեցաւ : Այն ատեն Երանոս աղա իր ծխափողի պարկը հա-
նեց : ծխափողը իրար անցուց եւ ծխաքարչին մէջ ծխախոտ
վեցնելու միջոցին ըսաւ . — Տղաս , դուն ո՞ւր տեղացի ես :

— Այս քաղաքէն , պատասխանեց Թովմաս պարզամիտ
դէմը մը եւ կատարեալ պարկեշտութիւն մը ցոյց տալով :

Երանոս իր մտածութեան մէջ ծիծաղկոտ դէմքով ծխա-
փողը քաշելով ըսաւ : — Ե՛յ , դուն բուն իսկ այս քաղաքէն
ես , թէ Պոլսոյ ուրիշ գիւղերէն :

— Ո՛չ , բուն իսկ այս քաղաքը ծնած եմ :

Երանոս աղա այս անգամ ծխափողը աւելի ուժով քաշե-
լով եւ գլուխը շարժելով , երկայն հը՛ մը ըրաւ : Թովմաս այս
հը՛ էն բան մը չիրնալով դուշակել , իր լարած որոգայթին
այս հըն խոնդոտ մը չըլլալու համար , առաւել յարգանքով
եւ առաւել միամտական ցոյցերով ըսաւ . — Ներեցէք , էֆէն-
տի , ծննդավայրս հարցնելու պատճառը չիրցի հասկնալ .
արդեօք ինձմէ կասկած մը ունիք , ըսաւ Թովմաս . եւ այս
խօսքերուն վրայ ոտք ելլել ձեւացնելով շարունակեց խօսքը .
— Ներեցէք . իմ խօսելիքս ձեզի նպատաւոր էր . ուստի եթէ
զիս իբր խարդախ կամ բախտախնդիր մէկը կը նկատէք . ա-
ւելի աղէկ է որ խօսք չբանամ . վասն զի ըստ իս մարդկու-
թեան պարտաւորութենէն դուրս բան մը չեմ տեսներ :

Երանոս աղա երիտասարդի ձեռքէն քաշելով ըսաւ . — Նստէ , նստէ , ես կատակ կընեմ , եւ ըսէ՛ տեսնեմ առաջարկելի կարեւոր խնդիրդ :

Այն ատեն Թովմաս լրջմտութեամբ ըսաւ . — Եֆէնտի . գերդաստանիդ պատիւն ու կեանքը վասնզի մէջ է , վասն զի այն Հրանտը զոր դու կը սիրես , եւ մինչեւ խաղ աղջիկդ ալ տալու գաղափարներ կըտածես : սրիկային մէկն է իր ընտանիքովը հանդերձ :

— Ի՞նչ կըսես , աղայ . ըսաւ Երանոս աղա յօնքերը արեւ տեղով . Հրանտ պատուաւոր երիտասարդ մը կերեւի :

— Այս գիշեր Օհան անուռով սեղանաւորին մէկը իր սուսնը կը հրաւիրէ . շատ հաւանական է որ այդ մարդը դուք ալ կը ձանձնաք , վասն զի ձեր հայրենակիցն է եւ Հրանտն ալ անոր սենեակը այցելութեամբ գրագրութիւն կընէ եղեր :

— Ինչե՛ր կը լսեմ , Աստուած իմ :

— Մտիկ ըրէ՛ք , Երանոս աղա . նախորդ օրը այդ խաղ բերայ Հրանտը Օհանի ձեռքէն 4-5 տակի կը կոպէ . — Տասնը մէջ պարտաւորիչ հանդէս մը ունիմ կատարելիք կըսէ . եւ ան ալ կը հրաւիրէ : Նախ իր մայրը կը ներկայացնէ Օհանին որ ըստ բաւականին գեղադէմ կին մըն է . եւ անոր պարտու պատշաճ յարգանքը մատուցանելէ յետոյ , օգի կը հրամայնէ , եւ կսկսին գլուխները բաւական տաքնալ :

— Է՛յ , վերջը , վերջը , ըսաւ Երանոս աղա զարմացմամբ : Թովմաս շարունակեց . — Այդ միջոցին Հրանտ Օհան

աղաի ակամջին կըսկսի բան մը փախալ որով երկու տակի ալ կը յափշտակէ անկից . եւ ահա տանը վերի յարկը բնակող վարձակալները վար կուգան . վասն զի անոնք ալ հրաւիրուած են եղեր . ուստի սեղանը կը պատրաստուի եւ զինինեւ ըսով ու կերակուրներով զուարճանալու միջոցին՝ Հրանտի մայրը իր մէկ ձեռքը գինիի բաժակը առած եւ միւս ձեռքը Օհանի երկնցուցած . նոյնպէս Օհանի մէկ ձեռքը գինիին բաժակը եւ միւս ձեռքը օրինով երկնցուցած , կենացդ բտելով գաւաթ գաւաթի ընդհարման միջոցին՝ խաղաթիւն մըն է կը ծագի . կինը Օհանի քանի մը ապտակ կըջեցնէ , Հրանտ ալ քանի մը կից տալով խեղճ մարդը խելակորոյս դուրս կելլէ . եւ մնա

թին մէջ քաշելով ըստ բազդի դուռ մը կը գարնէ , ուր քանի մը երիտասարդներ զուարուած էին զուարճանալու համար : Ես ալ հոն գտնուելով յանկարծ , Օհանին դալտեանը եւ այդ պատմութեան իբրեւ վրայ , պարտք համարեցի ձեզ տեսնել եւ եղելութիւնը խնայ տալ , որպէս զի ալ զգուշանաք այդ սրիկայ Հրանտին :

Երանոս աղա զարմացական ակնարկ մը ուղղելով Թովմասին ըսաւ . — Հաւատա՛ , աղաս , այս առաջին անգամն է որ իմ վստահելի կարծած անձնաւորութեանցս վրայ այս անակ աւսօրինաւորութիւններ կը լսեմ : Բայց ինչ որ է . ինձի համար հօգ չէ . Հրանտ իր ձեռքով իր սուսնը քանդեց . իմ աղջկանս համար ամուսին պակաս ըլլայ . այս բանը Աստուծոյ եղաւ , ապա թէ ոչ կնոջս խօսքին անսալով՝ վարդի պէս աղջիկս այդ սրիկային ձեռքը սխալ մատնէի անգլխակցաբար : Ախ ի՞նչ ըսեմ սա արդի ժամանակին կենցաղավարութեան . խաբուսիկ կրթութեանը . հօր խելքին չեն ձգեր որ . . . : Այո՛ , եթէ իմ խելքիս ձգէին , աղջիկս Օհանին կուտայի . երկու հարստութիւններ իրար կը խառնուէին , եւ , երկու մեծ գերդաստաններ միանալով նշանաւոր համբաւ մը կտանայինք այս ընդարձակածանալ քաղաքին մէջ : Ալ այսօր Պալիս լրջալը մէկդի թողով մէյնը տուն դառնալու եմ . Աստուած ասոր որ այդ խաբեբայ Հրանտը հոն միանգամ ձերբակալէի :

— Բայց կաղաչեմ Երանոս աղա , իմ պատճառովը . . . :

— Ո՛չ ո՛չ , դուք մարդասիրտբար պարտականութիւն մըն է՝ որ կատարեցիք . այսու ամենայնիւ Հնորհակալութիւնս յայտնելով կը խնդրեմ որ մեր այս տեսակցութիւնը յարատեւութեան սկզբնաւորութիւն մը ըլլայ :

— Ի հարկէ , Երանոս աղա . հետեւաբար ձեր արնուութիւնն է որ մեզի պէս ստորադասեալ անձնաւորութիւն մը պատուաւորներու կարգը կը դասէ : Երանոս աղա , ուշագրութեան առնելու կէտ մընալ կայ , որ մուսցայ յիշեցնել ձեզի . թէպէտ եւ ձեզի համար նշանակութիւն չունի . . . :

— Ինչ ըսել է , պէտք է որ ամեն բան բնէք , որպէս զի ես ալ ըստ այնմ վարուիմ :

— Գուցէ օրիորդը չափազանց վշտանայ եւ մեզ իբր թըշնամի նկատէ յանգէսս :

— Ոչ, ոչ, ի՞նչ կը կարծէք, աղջիկս այնչափ տխմար չէ՞ Աստուած չընէ. ասիկա ըսելով Երանոս աղա, ոտք կելլէ եւ « մնաս բարով » ըսելով Թովմասի, կուզդէ իր ճամբան դէպի տուն :

Ասպ երկու չար ոգիները, Թովմաս եւ Տօնիկ միանալով առաջինը կը պատմէ եղելութիւնը վերջինին :

— Սիրելի Տօնիկ. պէտք է գիտնալ որ երկպառակութեան առաջին պայթումը Երանոս աղաի տունէն պիտի սկսի : Թող երթայ այն սպուշ Հրանտոս ալ հասկնայ թէ, ի՞նչպէս պէտք է մարդու դեր խաղալ :

— Բայց դուն ի՞նչ ըսիր որ մարդը մէկէն սաքի ելաւ եւ չիտակ ճամբան դէպի տուն ուղղեց :

— Ես եղելութիւնը այլ ընդ այլը պատմելով այնչափ ստուարացուցի գործը. պատասխանեց Թովմաս, որ պարտաւորեցաւ տուն դառնալ եւ Հրանտը արտաքսել յաւիտեան :

— Հա՛հ, իմ ուզածս այդ էր. ըսաւ Տօնիկ :

— Հիմա եղբայր, գործը կատարելապէս յաջողուած է, այսուհետեւ մեր պարտականութիւնն է այն եղելութիւնը քաղքին ամէն կողմը տարածայնել. եւ Հրանտի մայրը անպատիւ կին մը եւ Հրանտ անոր գործակատարը ցոյց տալ հասարակութեան :

— Այո՛, այո՛. ձեր կարգադրութեան համամիտ եմ ես. ըսաւ Տօնիկ չարխմաց ժպիտով մը :

— Հիմա պարտականութիւն մընալ ունիմ ես, աւելցուց Թովմաս. պէտք է որ այսօր անպատճառ Պոլլա լծնամ Օհանը տեսնեմ : Մեր այս օրուան տեսակցութեան յաջող լուրերը իրիկունը դարձեալ կը պատմեմ ձեզի :

Կրկին տեսնուելու խոստումաբ՛ բաժնուեցան իրարմէ :

Ժ Է

Տարաբաղդ Հրանտը, որ առտուան իրեն ուղղուած նախառաջի խօսքերէն յուզուած ուժամասկառ գացած նստած էր

սրճարանը, ժամու մը չափ սպասելէ յետոյ, ինքնին « ժամանակն է » ըսելով, գնաց Երանոս աղաի տունը : Յայտնի է որ վաղխառուն հոն չէր. Վերգինն լծնալով դիմաւորեց եւ թեւ ի թեւ վեր ելան : Սակայն Հրանտ այսօր սովորականին պէս ուրախ չէր : Օրիորդը զգալով երիտասարդին տխուրութիւնը ց հետաքրքրութեամբ հարցուց թէ, այսօր մտմտուք մը ունեւնալու էր :

— Ա՛հ, Վերգինն, ըսաւ հասաչելով. չգիտեմ ինչպէս բացատրեմ. մեր վիճակը կերպարանափոխ եղաւ կարծեմ. մեր երջանկութիւնը վասնգի ենթարկուեցաւ :

Նոյն ժամայն տիկին Երարիտն վրայ գալով հարցուց սըրտազոտով. — Ի՞նչ կայ, ի՞նչ եղաւ :

— Ի՞նչ պիտի ըլլայ, պատասխանեց Հրանտ հասաչելով. — Այս գիշեր մեր տունը եկաւ Օհան . . . :

— Յետոյ. հարցուց տիկինը,

— Յետոյ՞, ըսելով երիտասարդը, եղելութիւնը ձգբիւ պատմեց առանց խեղաթիւրելու. սակայն ոչ այնպէս ինչպէս որ Օհան Գէորգ աղաի տունը եւ Թովմաս սրճարանը Երանոս աղաի պատմած էր :

Ա՛հ, ըսաւ մայրը Հրանտի. այն պահուն ուր ինդիրը ինձի պատմեցիր, քեզի ըսի թէ շատ աղէկ չես ըրեր այդ գործը, հետեւաբար Երանոս աղաի ալ խնայնել քիչ մը տարօրինակ կը թուէր ինձի. սուտի ոչ քու անոր քով պաշտօն ունենալը խնայ տուի եւ ո՛չ ալ կեղծ կնիքի խնդիրը : Հիմա գործը աւելի ծանրացաւ. այս գիշերային դէպքի գուգադիւ պութեամբը. բոյց անաչառ խօսելով, ձեր մայրն ալ շատ անխափան գտնուեցի :

— Ա՛հ, ինչ ըսելիքս չգիտեմ, տիկին, յուսահատ եմ վերջին ատիճան :

— Այս խօսքերուն վրայ՝ Վերգինն յանկարծ ոտքի ելաւ եւ Հրանտի ձեռքէն բռնելով ըսաւ. — Հրանտ, ինչ որ ալ ըլլայ, դու իմ ես. եթէ սերտ սիրով կը սիրէս զիս. քեզմէ բաժնուիլը կեանքէս բաժնուիլ ըսել է. ամէն վտանգ ամէն դաւադրութիւն եւ խարդախութիւն չպիտի զօրեն այս ծովու պէս պեկոծեալ սրտիս մէջ կաթիլ մը անգամ առելութեան

թոյն թափել . կը սիրեմ ըսի քեզի , եւ սէրս այնչափ մեծ է որչափ անասնանութիւնը որ ընդգրկած է անապոյց դատարկութեան մէջ սիրուող բիւրաւոր մուրախները . քու հոգիդ , քու սէրդ է Հրանտ : Ո՞վ կարող է չորս տարեքը իրարմէ բաժնել եւ առանձինն առանձին կեանք տալ . ո՞վ կուրող է գլուխը մարմինէն դատել եւ երկուքէն ալ կենդանութիւն սպասել . եթէ մարդաստան կամ աւագակ մընալ ըլլաս , եւ դանակ մը սրտիս մէջ մխելով՝ զիս մահացնել սպառնաս , չսիրտի դանգատիմ երբեք եւ սուսերաւոր ու արինաթափաւ ձեռքդ համբուրելով՝ գլուխս կուրծքիդ վրայ , շունչս շունչիդ խառնելով , այնպէս սիրտի աւանդեմ հոգիս : Ահա՛ , Հրանտ , այսպէս կը սիրեմ քեզ , իմ սիրոյս կարողութիւնը : մարդկային կարողութեանէն շատ բարձր է , երախտապարտ ըլլանք Արարչութեան որ սիրոյ այս մեծ ու անսահման կարողութիւնը մեզի պարգևեւր է : Աստուծոյ շնորհը մարդիկ շատ անգամ կըզլանան իրարու եւ առկէ մեծամեծ դժուարութիւններ կը ծագին : Ահա՛ , ագիտութիւն , ագիտութիւն . ի սկզբանէ անտի աշխարհ ինչ անբացատրելի տառապանքներ կրած է քու եւրեւի : Սիրելի Հրանտ , համոզուէ որ այս բոլոր եղելութիւնները ագիտութեան արդիւնքն է . անթիւ սիրահար արարածներ որոնց դոյնութիւնն ու կեանքը ազատալի է . ու այսպէս ագիտութիւնը կըզլանայ նախանձու ու փոռատիրութեան հզօր դրօշը անոնց կարողութեանը վրայ բարձրացնելով :

Այսպէս վերգինե՛ ռգեւորեալ խօսելու ատեն՝ մայրն ու Հրանտ արտաստաթոր մտիկ կնէին :

Ապա Հրանտ ոտքի ելլելով ըսաւ իր սիրուհուն . — Վերգինէ , չունիմ ձեր այդ բարձր հանձարը որ իմ սիրոյս անբաւութիւնն ալ ձեզի բացատրեմ . ուստի համառօտիւ այսչափ մը միայն կըսեմ որ , եթէ ապրիմ , քեզմով սիրտի ապրիմ . եթէ չապրիս , չսիրտի ապրի երբեք Հրանտ : Ուստի երախտապարտ եմ քեզի ըսելով , անոր դողաճուն ձեռքը համբուրեց . — Ալ մեկնելու ժամանակն է . երթում տեսնեմ թէ հրապարակին վրայ ի՞նչ կը խօսուի մեզի նկատմամբ : — երթաք բարով սիրեցեալը իմ , կրկին տեսութիւն , յարեց վերգինէ :

Հրանտ , իր վերջին շնորհակալութիւնը յայտնելէ յետոյ , փողոցի դռանը մօտեցած սահուն , յանկարծ դուռը ուժգին բաղխեցաւ : Հրանտ վախէն թէպէտ քայլ մը ետ գնաց . բայց այսչափը իրեն նուաստութիւն համարելով , յառաջացաւ ու բացաւ դուռը :

Յանկարծ դէմ առ դէմ եկան Հրանտ եւ բարկացող ու խռովեալ երանոս աղան , որ այնպիսի անկող գոչումով մը . — Այս ժամանակ հոս ի՞նչ բան ունիս , սրիկայ . գոչեց այնպէս որ բոլոր տունը գոռաց . — Հոս ջրհանկիրներու սրահն է ըսելով եւ ծոճրակին երկու զօրեղ կուռի լջեցնելով տունէն դուրս արտաքսեց ու դուռը գոցեց , եւ վեր ելլելով կատարած ծերուկը , ապտակ մընալ աղջկանը լջեցուց :

Սինը , որ այս անտեղի գործողութեանց ներկայ էր , տխրադէմ զինքը ղիմաւորելով ըսաւ . — Ահա՛ երանոս աղա , դուն շատ սիրտի գլջաս քու սյսօրուան անկրաւ վարմունքիդ վրայ , բայց այն ատեն ի՞նչ օգուտ որ տունը տեղը կործանուած եւ զիս ու աղջիկդ գերեզման դրած սիրտի տեսնես . առա՛ջ որ ժամանակին մարդը չես , եւ ամէն բան հին չափովդ կը ձեւես :

Մարդը որ սրտին բարկութեանն ու բարբախումէն հազիւ շունչ կանէր , բազմոցին վրայ ինկաւ եւ կատաղի հայեացքով մը կնոջը դառնալով ըսաւ . — Այս աղջիկը ծներ է՛ տանս մէջ կրակ թափելու համար . այս աղջիկը մեծցեր է՛ տունս կործանելու համար . վերջապէս այս աղջիկը իսկամուտ է եղեր ամէն բանի՛ նախահայրերուս աւանդական սրտինն ու հարստութիւնը խաղառ փճացնելու համար : Մե՛ղք . հագար անգամ մեղք որ զինքը դարոց զրկեցի , ուսմունք եւ ձեւագիտութիւն սովորեցուցի , այնչափ ստակ վատնեցի որ հիմա ելլէ համարձակի տունս քայքայելու . եւ դու ալ անոր քայքայմանը դիւրութիւններ ընծայես :

— Չեր երկուքի մէջ թիւրխմացութիւն մը կայ . սակայն հասկցուելու համար . լրջամիտ օտարի մը ներկայութիւնը պէտք է , ըսաւ տիկին Նրաբին :

— Ի՞նչ կըսես , կնիկ . սրտաց վաշխառուն . գիտես սյսօր ինչեր լսեցի այդ ձեր սրաշտաւնած խեղճիկ Հրանտի

վրայ : Գիտե՛ս ի՞նչ խորամանկութիւններ , ի՞նչ ծուղակներ ի գործ դրեր է ան . յափշտակութիւն դաւադրութիւն , անպատուութիւն , արտակ , կից . ալ ո՛ր մէկն ըսեմ . աս տեսակ սրիկայ մը տունէս վաճառելու համար թէ՛ քեզմէ եւ թէ՛ ազջիկէս պախարակուիմ . աս ըս՞ած բան է , աս ի՞նչ անիրաւութիւն է :

— Չգիտեմ ի՞նչպէս համոզեմ քեզ . կը ցաւիմ որ տակաւին աղջկանդ եւ Հրանտի անմեղութեանը վրայ երբեք դադարաբար չունիս , եւ չպիտի կարենաս ունենալ ալ :

Տիկին Բրաբրոնի սոյն խօսքերուն վրայ , Երանոս աղա յանկարծ տեղէն ցատկելով պոռաց . — Անիկ . դուն այս գիշեր անպատճառ ձեռքէս փորձանք մը պիտի հանես . որովհետեւ խելքի եւ բնութեան հակառակ կը խօսիս :

— Այո՛ , այո՛ , ըսաւ հանդարտօրէն կիներ անոր զայրոյթըն ու կատաղութիւնը մեղմացնելու համար . մասամբ իրաւունք ունիս . վասն զի լրածիդ վրայ չարած ես ամէն բան եւ ոչ ստուգած . եթէ անգամ մը ստուգելու ըլլայիր , ո՛չ թէ պիտի բարկանայիր . այլ Հրանտի ճակատը համբուրելով պիտի ըսէիր . — Ապրի՛ս , գաւտիս , ես քեզ ինձի փեսայացնելու արժանաւոր մէկը չեմ եղեր . մանաւանդ այն խարդախուած կնիքին խնդրոյն վրայ . ուր իրաւամբ քիչ մը անխոհեմութեամբ յառաջ գացած է . (կիներ կարծելով թէ խարդախեալ կնիքին խնդիրը իմացած եւ բարկացած է իր ամուսինը) , բայց հոգ չէ , դարձեալ բաւական է որ դու ալ գիտես . . .

Վաշխառուն իր կնոջ խօսքը ընդմիջելով ըսաւ . — Բայց այդ կնիքին խնդիրը ո՞րն է :

— Անուշա գիտնալու էք թէ Հրանտ խարդախեալ կնիք մը շինել տուած է Օհանի խնդրանքով :

— Իմ կնիքս , այնպէս չէ՞ :

— Այո՛ :

Երբ , « այո՛ » բառը լսեց , դարձեալ ծերունիին աչքերը վառուեցան կատաղի բարկութեամբ . — Ա՛հ , հիսա կը խենդենամ գոռաց , եւ սխառ սենեակին երկայնութեանը արագ արագ երթալ գալ : Անպատճառ այդ չարամիտ Օհանը վաղը 4-5 հարիւր ոսկիի եւ կամ աւելի պարտամուրհակ մը պիտի

պատրաստէ եւ պայմանաժամը լրանալուն՝ մարդ պիտի զրկէ ու ստակը պահանջէ : Ի՞նչ պիտի ընեմ այն ատենը . կնիկ . այս հարցմանս պատասխան մը չտա՞ս ինձի . ըսէ՛ , ըսէ՛ չուտ . այն ատեն ի՞նչ պատասխանեմ :

Աղջիկը այս միջոցին յանկարծ ներս մտնելով՝ անյիշաչար կերպով ըսաւ հօրը . — Հայր իմ , ո՛չ սպաքէն կնիքը խարդախուած է . ո՛չ սպաքէն եթէ անիրաւաբար ձեզմէ ստակ պահանջէ եւ կամ բողոքէ , դատը դու պիտի շահիս :

— Գիտէ՞ք . որչափ դժուարութիւններու , որչափ ծախքերու դուռներ պիտի բացուին՝ ատրկա հաստատելու եւ իրաւունքը շահելու համար :

— Հայր , կրկին կըսեմ որ յաջողութեանդ մասին երբեք կասկած մի՛ ունենար . Հրանտ ամէն բան գիտէ :

— Ի՞նչ է . տեսնենք սա գիտցածը :

— Դուք պարտամուրհակ կըսէք , բայց այնպէս չէ :

— Հապա ի՞նչ է . հարցուց մեղմօրէն Երանոս իր աղջկանը :

— Փոխանակագիր մըն է , պատասխանեց Վերգինէ . տաան եւ հինգ օրէն վճարելի . եւ կնքուած է Հրանտի շինել տուած կեղծ կնիքով :

— Կնիքն ալ ինք Հրանտ անձամբ փորագրել տուեր է . այնպէս չէ :

— Այո՛ , ճիշտ է :

— Շատ աղէկ . ասոր կեղծ ըլլալը ուսկի՞ց պիտի ստուգուի . հարկաւ Հրանտ ի վերջոյ զիս արդարացնելու ճամարիտ սպացոյց մը եւ փաստ մը պատրաստած է :

— Եւ այդ սպացոյցը Հրանտ ունի իր ձեռքը . այսինքն կեղծ կնիքը փորագրիչէն առնելէն զվնի , ինքը իր ձեռքով երկու փշիկներ շիներ է կնիքին վրայ :

— Չեմ կարծեր որ այդ փշիկները Օհանի աչքէն վրիպած ըլլան : Դիցուք թէ անոր աչքէ վրիպած ըլլան այդ փշիկները . չէ՞ որ ի վերջոյ թէ՛ կեղծ փոխանակագրին պահանջատէրը , թէ՛ կնիքը փորագրողը եւ թէ՛ փորագրել տուողը պատասխանատու են . ա՞ս է անոր գիտցած փաստաբանութիւնը . տոմարակալութիւնը . ճարտարութիւնը . դուք չգիտէ՞ք որ

այս տեսակ սատանայական մեքենայութեանց մատս անգամ չեմ կրնար դպցունել :

Տիկինը իրաւունք տալով իր ամուսնին , ըսաւ . — Այդ մասին Հրանտը քիչ մը անխոհեմութիւն ըրած է :

— Կնիկ , ինձի այդ Պոլսեցիներու բերանը մի՛ գործածեր . ո՞րն է քիչ մը . քու անխելքութիւնովդ աս լիրբ աղջկան Հրանտի հետ ամուսնանալու խենթ ու խելար կրակովը զիս կործանեցիք , հիմա տեսնենք թէ իմ կործանումէս դուք ի՞նչ պիտի շահիք :

Կինը հեկեկալով . — Աստուած ողորմած է , ըսաւ . մէկ սխալանքով մարդը չեն կախեր աս :

Մարդը բարկութենէն . — Հեռացէք աչքիս առջեւէն . դուք ձեր անխելքութեամբը մարդը կը ճաթեցնէք , պոռաց եւ դարձեալ բազմոցին վրայ ինկաւ ու ժառայաւ :

Մայր եւ աղջիկ դուրս ելան՝ Երանտ աղաի բարկութիւնը աւելի եւս չըզրդուելու համար : Ծերունին իր առանձնութեանը մէջ սկսաւ մտածել իւրովի . — Ի՞նչ ընելու է . Աստուած իմ , որո՞ւ դիմելու է այս փորձանքին առջեւն առնելու համար . եթէ փաստաբանի գնամ , մեծկալի գումար մը պիտի պահանջէ , եւ յետոյ գործը երկարելով . « այսօր չեղաւ , վաղը հոն չէր » այսպէս նորանոր ստակի դուռներ պիտի բանայ . ալ ո՞ր մէկն ըսեմ : Ախ , ի՞նչ անխոհեմութիւն . ո՞րչափ խելքի տկարութիւն . յանցաւորը եւ այս բոլոր եղելութեանց միակ պատճառը ե՛ս եմ . ես ժամանակին թողուցի որ այս սրիկան պատեհութիւն ունենայ ընտանիքիս հետ տեսակցելու : Բայց որո՞ւ մտքէն կանցնէր այս տեսակ փորձանք մը . . . : Առ այժմ աս խորհրդածութիւնները աւելորդ էին . պէտք էր ներկայ վերքը բուժող սպեղանի մը հայթայթել :

Փամուս մը չափ այս օրինակ խորհուրդներով միտքը յոգնեցնելէ յետոյ . — Երթալու աս ինձի հետ տեսակցող բարեսիրտ երիտասարդը գտնելու է ըսաւ . եւ սոք ելլելով խիղջն ժամացոյցը նայեցաւ . — Օ՛ անկէ ի վեր ճիշտ երկուք ու կէս ժամ անցեր է , հիմա ժամը վեցն է . եւ ես այս ժամանակ անհնար է որ զինքը միեւնոյն տեղը գտնեմ :

ԺԸ

Թովմաս տեսակցութեան համար Օհանի ժամադրութիւն խոստացած էր ճիշտ ժամը վեցին . ուստի նոյն պահուն Օհանի սենեակը մտաւ . որն որ իր գրասեղանին վրայ ձեռքը ճակտին դրած , նոյն գիշերային անակնկալ դէպքը , իր այնչափ ծախսած ստակներուն ապարդիւն յօդս ցնդիլը , նաեւս իր խոյտառակ սիրահարութեան հետեւանքը ի նկատի առնելով , խոր մտածութեան մէջ էր :

Օհան երբ տեսաւ Թովմասի ժամադրեալ պահուն գալուստը . ուրախութեամբ զինքը զիմաւորելով ըսաւ . — Արդարեւ խոստմնապահ երիտասարդներ էք եղեր . ճշմարտը խօսելով չէի յուսար թէ խոստումնիդ պիտի կատարէք ,

— Ինչո՞ւ , ըսաւ Թովմաս , զարմացական դէմքով մը :

— Որովհետեւ ինչպէս որ գիտէի , Պոլսեցիք քիչ մը խոստմնապահութեան եւ ժամադրութեան կարեւորութիւն չեն տար , պարկերով լեցուն խօսք . բայց գործ բնաւ երբեք :

— Շատ կը սխալիք , բարեկամ . արդարեւ այս ծովածաւալ մայրաքաղաքին մէջ բախդախնդիրներ շատ կը գլտնուին , որոնց գործը ընդհանրապէս ստութիւն եւ խաբէութիւն են , ճարտիկութիւնը մարդ ճանչնալուն մէջ է , հըրապարակի վրայ շատ գործերով զբաղող մարդիկ քիչ անգամ կը խաբուին :

— Ի՞նչ ընենք , եղբայր . մեր գործը այնչափ ընդարձակ չէ , ընդհանրապէս պանդուխտներու հետ գործառնութիւն ունինք , եւ անոնք ալ պարզամիտ մարդիկ են . ուստի ո՛չ իւրեք եւ ոչ ալ մենք կարող ենք մեզի սահմանուած շրջադիւժէն դուրս ելլել :

— Բայց քանի որ Պոլիս կապրիք , աւելցուց Թովմաս . — Պէտք է որ մերթ ընդ մերթ փոքր դրամագլխով յանդուգն գործերու ձեռնարկէք , խարդախ կամ գործունեայ մարդոց հետ յարաբերութիւն ունենաք , առեւտրական դատերու ներկայ գտնուիք , որպէս զի եթէ այսպիսի չնչին անակնկալ դէպք մը պատահելու ըլլայ , չչփոթիք :

— Աւյայտնի բան մընէ որ այս տարիքէն ետքը գործունեայ ճարտար չենք կարող ըլլալ :

— Այո՛ , այդ մասին ալ կատարեալ իրաւունք ունիք , ըսաւ կեղծաւոր երիտասարդը հաստատական ձեւով մը :

— Ուստի հիմա որ քաջայոյս եմ թէ ուղղամիտ եւ արդար մարդու մը հետ է գործս , ըսաւ խարդախութեան ցեխով ազականուած մարդը . — Ուստի սլիտի համարձակիմ գաղտնիքս քեզի յայտնելու :

— Պատրաստ եմ ձեզ լսելու , Օհան աղա :

Օհան սկսաւ խօսքի :

— Մեր եւ Երանոս աղաի միջեւ ի վաղուց անտի գերդաստանական ատելութիւն մը՝ վրէժխնդրութիւն մը կայ . եւ այդ վրէժը լուծելու համար մինչեւ ցարդ բարեգէտ միջոց մը եւ առիթ մը չէի կրցած ձեռք ձգել . . . :

— Ներքեցէք խօսքդ ընդմիջելուս , ըսաւ . բարեմտական հետաքրքրութիւն մը ձեւացնելով Թովմաս . — Այդ ձեր ժառանգական վրէժխնդրութեան մէջ սիրահարական գործողութիւն մըն ալ կա՞յ :

— Ներկայիս մէջ գրեթէ այդ ժառանգական վրէժխնդրութեան յաւելուած մը եղաւ սիրահարական խնդիրը . պատասխանեց Օհան :

— Օհան աղա , իմ հարցմանս մէջ հոգի կայ , ըսաւ Թովմաս ծիծաղկոտ դէմքով մը . որովհետեւ սիրահարութիւնը այնպիսի խնդիր մըն է որ ամենայն ինչ վեր ի վայր կը վերդովէ . ճշմարտութիւն . ուղղամտութիւն . առաքինութիւն , ընտանեկան միաբանութիւն եւ խողաղութիւն այս ամէնը մէկ խոր ընելով , քարբի պէս ամէն կողմանէ կը ծակէ կանցնի եւ ինքը անոնց մահացու վէրքէր տալով , կը յագեհայ : Ուստի եթէ այնպիսի բան մը տեղի ունեցած է . պէտք է նախ ուսնակոխ ընել ատրկա :

— Նեցցես . պարոն Թովմաս . անաշտո խօսելով հաղուտագիւտ են քեզի պէս ազնուական եւ առաքինի մարդիկ :

— Այդ ձեր ազնուութիւնն է , յարեց աւելի պարկեշտ եւ մտերմական ձեւակերպութեամբ . խղճի եւ արդարութեան գէմ գործել չեմ ուզեր : Սակայն առաքինութիւնն ալ ընկձելու

սքողելու չափ չեմ վատթարանար . մահու չափ թշնամի կըլլամ , շիտակը ըսելով , « Եղիցուք խորագէտ իբրեւ զօճ , եւ միտախ իբրեւ զաղաւնիս » ին տիպարն եմ ես :

Սրկիպի այս գրաւիչ խօսքերէն այնչափ յափշտակուեցաւ Օհան եւ այնչափ բերկրեցաւ , որ սրտին ու մտքին բոլոր գաղտնիքը դուրս թափելով եւ իր սանձը անոր ձեռք տալու յօժարամիտ յայտարարութեամբ մը ըսաւ . — Այսուհետեւ ազատ ես դու անհրաման այս սենեակը մտնելու եւ ելլելու . ես երեսուն եւ ութը երկար տարիներէ ի վեր է որ Պոլիս կը գտնուիմ . բայց ձեզի պէս ուղղամիտ եւ առաքինի անձնաւորութեան մը հետ տեսակցելու պատիւն ունեցած չեմ :

— Որովհետեւ բարձր դասու անձնաւորութեանց հանդէսներուն կամ յարաբերութեանց միջամտելու չափ դիւրութիւն մը տեղի ունեցած չէ մինչեւ ցարդ , սպա թէ ոչ , ինձի նման շատեր ձեր ընկերութիւնը սլիտի վայելէին :

— Թերեւս այդպէս ըլլայ . բայց հիմա , ինչպէս դուք ալ սիրահարութեան գէջ հետեւանքները ցոյց տուիք . այո՛ , այնպիսի սիրահարութիւն մըն ալ տեղի ունեցած է եւ չէ յաջողուած . յարեց Օհան , անբնական նայուածքով :

— Որո՞ւ հետ :

— Ինձի հետ : Այդ խարդախ Երանոս աղան հօրս խոստացած էր իր աղջիկը ինձի կնութեան տալու եւ ի վերջոյ իր խոստումը ուրացած է : Ո՞րու մտքէն կանցնէր թէ Հրանտի տալու դիտաւորութիւն ունի եղեր . ո՞րու մտքէն կանցնէր թէ այդ աւանդական վրէժխնդրութիւնը ի կատար հանելու համար այս խաբեբայութիւնը ի գործ պիտի դնէ , եւ Հրանտի միջնորդութեամբ կամ որ եւ իցէ կերպով զիս աշխարհի սուջեւ պիտի խօստառակէ :

— Մի՛ վշտանար , բարեկամ , մի՛ վշտանար . ասոնց վրէժը լուծելու համար շատ դիւրին միջոցներ կան : Տեսնենք ուրիշ զլիտաւոր բան մը ունիս :

— Այո՛ , այո՛ , ըսաւ Օհան հառաչելով . կեղծ կնքով 500 ոսկիի փոխանակադիր մը կայ , երկու օրէն վճարելի :

— Այդ կնիքը ո՞րու փորագրել տուիր :

— Այդ կնիքի փորագրութիւնը Հրանտի յանձնեցի . եւ

ան յաջողեցաւ համանմանը փորագրել տալ :

— Բայց ո՞րու , կրցաք տեղեկանալ :

— Մերունիի մը ըսաւ , մանրամասն տեղեկութիւն չունիմ այդ մասին :

Թովմաս քիչ մը մտածելէ յետոյ ըսաւ . — Հասկցայ . բայց այդ կեղծ կնիքին մէկ օրինակը ունէ՞րք :

— Այո՛ , այսինքն իսկական օրինակը — որմէ օրինակուած է կեղծը :

— Պէտք է որ թէ ճիշդ օրինակը եւ թէ կեղծ կնիքը ու փոխանակագիրը տեսնեմ :

— Շատ աղէկ , ըսելով Օհան . դարակէ մը ծրար մը թուղթեր հանեց եւ ծրարը բանալով , անոնց մէջէն թէ՛ վճարուած փոխանակիրը եւ թէ՛ խարդախուած օրինակը առնելով , միւսները տեղը դրաւ , եւ յետոյ գրպանէն փոքրիկ քսակէ մը կեղծ փորագրուած կնիքն ալ հանեց ու գրասեղանին վրայ դրաւ :

Թովմաս , իսկոյն հետաքրքրութեամբ ճիշտ օրինակը եւ խարդախուած կնիքը իրարու հետ ընդ երկար բաղդատելէ , հետեւարար թէ փոխանակագիրը եւ թէ կնիքը նկատողութեան առնելէ յետոյ , ըսաւ . — Բաղդաւորութիւն ունիս եղեր , Օհան աղա , որ ինձի պէս ուղղամիտ մէկու մը հանդիպեցար . տալ թէ ո՛չ կորուստդ անխուսափելի էր :

— Ի՞նչ , արդեօք սխալմունք մը կայ . հարցուց Օհան՝ անհամբեր հետաքրքրութեամբ :

— Այո՛ , եւ մեծ սխալմունք մը յարեց Թովմաս զարմացմամբ :

— Կը խնդրեմ , շուտ ըրէք , բացատրեցէք :

— Այս փորագրիչը փարպետ մարդ է , շատ աղէկ կը ձանձնամ . մարդը համանմանը փորագրեր է առանց մագի մը չափ օրինակի ճշտութենէն վրիպելու . սակայն կը նշմարե՞ս , օտար ձեռքի մանր մագի թանձրութեամբ երկու փշիկ կերեւայ :

Օհան նայելով ըսաւ . — Ա՛ , այդ չէի նշմարեր բնաւ :

— Ահա , այս փշիկները որ ի վերջոյ շինուած են , քու հոգիդ ու սիրտդ պիտի ծակելին , եւ տարակոյտ չկար որ թէ՛ դուն եւ թէ՛ ինքը Հրանտ բանտարկութեան պիտի դատա-

պարտուէիք . տես փոխանակագրին կնիքին վրայ ալ այդ երկու փշիկները կերեւին :

— Ուրեմն վերստին փորագրել պէտք է :

— Այո՛ , սակայն ես կուզեմ որ սոյն փոխանակագիրը որ Հրանտի գիրն է , սաի նոյնութեամբը Երանտո աղաի ցոյց տալ պէտք է , որպէս զի ինքն ալ համոզուի թէ ան երբեք ի նպատտ իրեն չէ գործած :

— Բայց այդ անհնար է . կարծեմ , քանի որ սոյն կնիքը ճշդութիւնը չի կրեր :

Այս միջոցին պահ մը լուութիւն տիրեց երկուքին մէջ տեղ . Թովմաս ճակատն սկսաւ շիւղ իր ուղեղէն նոր գիւտ մը ստեղծելու համար , վասն զի փոխանակագիրը օրինաւոր գրուած էր , եւ թէ այս ստակը պիտի կարենար կորզել Երանտո աղաէն : Հինգ վայրկեան տեւեց այդ լուութիւնը եւ յետոյ , մըտքին մէջ նոր լոյս մը ծագածի պէս , գլուխը վեր առաւ եւ քարճրածայն ըսաւ . — Շահեցանք . Օհան աղա 500 ոսկին շահեցանք :

— Ա՛հ , բարեկամ , իրա՞ւ կըսես , վրէժս արդեօք պիտի լուծե՞մ , ըսաւ :

— Լուծուածի պէս համարէ , սակայն այս մուրհակի վրայի կնիքը ո՞ր մեղանով կնքեցիք :

— Մեք քանի մը տեսակ մելան չենք գործածեր . ահաւա՛ստիկ այս մեղանով , ըսաւ Օհան , եւ գրասեղանին վրայի կաղամարը ցոյց տուաւ :

Իսկոյն Թովմաս գրիչը մեղանին թաթխելով , կնիքին երկու նուրբ փշիկները , որ հագլիւ նշմարելի էին , տարեց . — Եւ , ահաւաստիկ կատարեալ համանման կնիք մը ըսաւ . ուստի հիմա ուրիշ կնիք մընալ պէտք է գոր ես հոս աչքիդ առջեւ պիտի փորագրեմ . եւ այս երկրորդական կնիքը պատճառ պիտի ըլլայ Երանտի տունէն Հրանտի արտաքսուելուն :

— Բայց ի՞նչպէս . . . խնդրեմ , չուտով բացատրեցէք :

— Ժամանակը երբոր դաց , կիմացնեմ քեզի ըսելով , դըրպանէն անգիր ձուլուած պղինձ կնիք մը , եւ կաշիի մէջ ծրարուած փոքր գործիներ հանեց , եւ օրինակը առջեւը առնելով չափեց չափչըփեց եւ սկսաւ մեծ ուշադրութեամբ գիրերը

վորացիքը : Օհանայ նոյն պահանջներն ապա զեկուցու
ղիւր մը պատրաստելու զբաղեցու , որպէս թէ վտանակաւ
զբին պայմանաժամը լրացած է : —

Թովմաս երբոր տեսաւ , հարցուց Օհանի , թէ՛ն . — Ի՞նչ է
գրածդ :

— Զեկուցողիւր մը ըսաւ 500 ոսկիին համար : գալիս ըսաւ

— Աղէկ չէք ըներ , ըսաւ Թովմաս , պէտք է որ շարաժիկ
մը հետքը անձամբ երթնաք որպահանջէք : արդարեւ նոյն վայր-
կեանին պիտի բարկանայ , նեղանայ , այլ եւ այլ խօսքեր օրհոտի
ըսէ . սակցն եւ յանկործ ներկայ պիտի դռնուի իմ հոն , եւ
երկաւքնիւր սկիւրածնոյն պիտի ընեմ :

— Ես աւագիւր կամքը ձերն է , ըսաւ Օհան :

— Օհան աղա . դուք հիմա 1000 ոսկիի վտանակաւ գիր
մընալ պատրաստեցէք , եւ իրեն ներկայանալէն երկու օր ա-
ռաւ բազարեցէք :

— Օհայ ի՞նչպէս կարելի բան է :

— Այո՛ , կարելի է պատասխանեց սրիկան . մեծամարտ
տակեան մէջ երկշտա ըլլալով չէ հարկաւ ես ալ որոգայթ
մը լարած եմ : Ինչպէս որ ըսի դուք այնպէս ըրէք . . . Հե-
տեաւար Հրանտի շինեղ տուած կնիքովը պիտի կնքէք այդ
հազար ոսկիի վտանակաւ գիրը . իմ փորագրելիքս ի հարկին
պիտի դործածուի : Օհան աղա , ըսաւ անանջ զիր ըսածիս .
երկու փոխանակագրին ստանիւ ալ օրհոտի դռնէք Երանտու տ-
ղան անպատճառ . մէկը խնդրագրով , իսկ միւսը անտնոյ
խնդրագրի :

— Այնպէս կը խօսիս բարեկամ , որպէս թէ պարտաւոր
հանջը խոտուցած է քեզի կանխաւ :

— Այս խօսակցութեան միջոցին , որ հապիւ կէս ժամ տեսած
էր կնիքին փորագրութիւնը անարտեց եւ ըսաւ . — Ահա
ւասիկ կնիք մընալ կատարեալ ճշգրտութեամբ :

— Եստ աղէկ , շնորհակալ եմ . սակցն ո՞ր օրը եւ ո՞ր
ժաման Երանտու տունը դռնուելու եմ :

— Յատկապէս կիրակի ժամը ճիշդ եօթին պէտք է որ
հոն դռնուիք : արդ . հիմա պէտք է սովորութիւն մը ընենք .
եւ ինչպէս որ նախապէս ըսի ձեզ խարդախութեան , եւ ստու-

թեւեմ չեմ ակործիր : երկուստեք խոտանալու ջիւնը եւ
գործէք ճշգրտութեամբ :

— Ամենայն սիրով կնդունիմ ձեր առաջարկը , սպա . ը-
սէք ձեր պահանջը , ըսաւ Օհան :

Թովմաս պատասխանեց . — 50 ոսկի կանխիկ , 50 ոսկի
ալ վճարելի գործը վնասի յետոյ :

Օհան այս առաջարկեալ գումարին վրայ սարսափանալ
մտածելու ատեն արդէն Թովմաս փորագրած կնիքը իր գր-
պանը դրած էր . բանի մը վայրկեան երկուստեք լուսթիւն
մը տրեղէ վերջը . Թովմաս անտարբերութեամբ ըսաւ . —
Ի՞նչ կը մտածէք , բարեկամ . միթէ մեծ պահանջ մընէ հար-
իւր ոսկին , ի փոխարէն հազար հինգ հարիւր ոսկույ . դուք
ոտն առ ոտն բարձրանալ կուզէք , վասն զի վտանգէ կը վախ-
նաք . եւ մինչեւ որ ձեր գաղափարային սրտեայ կատարը հազ-
նիք ինքզինքնիդ ձերացած եւ ամէն բանի անկարող կը դառ-
նէք . գոր օրինակ . զուարճութեան գրօտանաց սիրահարու-
թեան , ամուսնութեան եւ այլն եւ այլն : Այս՛ , չէք կարող
սրտասկիւր եւ կորովախտ առաջնորդութիւն մը ընել . կամ
1500 ոսկի շահ , եւ կամ 50 ոսկի վնաս . իրաւամբ այս տեսակ
բաներ հրատարակի վրայ սատանաներու հետ իրաւախոհ եւ
ղալ եւ դժոխքին բանալիները գողցող մտրդաց գործերն են .
բայց դուք , բանի որ այս տեսակ մարդ մը ձեզի առաջնորդ
ունիք , ամենեւին մտածելու չէք . սակցն ինչ որ է խար-
ուղը գարձեալ մենք ըլլանք , բաւական է որ ձեր բարեկա-
մութիւնը շահած եմ , եւ յուզեալ դէմքի արտայայտու-
թեամբ սոք ելլելով մնաք բարով ըսաւ :

Օհան (երթաք բարով) . ք . Ղրցաւ սրտարեղել եւ ուղեց
ուղեցէն համալիչ խօսք մը ասեղծել այդչափ անակ մէկ ժա-
նու մէջ չտուծելու համար . — Ի՞նչու կաճապարէք , ըսաւ .
վաճորդեալս սրտին բռնադրօնիկ սանձ մը դնելով . դուք
գործատուութեանց մէջ բաշխահմուտ անձ մընէք , միջոց տուէք
որ անկարը ինքզինքը համոզելու չափ գողախար մը գոյսցնէ
մտքին մէջ : Է՛հ , ի՞նչ ընենք . վարձ ենք դանդաղ քայլելու ,
բայց անասլթաք : —
— Օհան աղա , անասլթաք քայլելու համար չգրայն հա-

զար հինգ հարիւր ոսկի գրպանել միթէ քու հաշուետունա-
րիդ մէջ արձանագրուած կա՞յ . աղէկ մտածէ . փորձանքները ,
վտանգները աչքիդ առջեւը բեր , արդարութիւնը ընկճելու
համար՝ երկու զօրաւոր վերացեալ տարրերու կեանք տալու
է . գրկանք եւ անիրաւութիւն՝ երկու երկաթէ բազուկներ շի-
նելու է . եւ այս բազուկներուն գործադրութեանը հսկելու
համար՝ արթուն վարիչ մը ըլլալու է . որպէս զի կարող ըլլան
արդարութիւնը իրենց մէջ խեղդել :

— Համոզուեցայ , համոզուեցայ , ըսաւ Օհան . հիմա
խնդիրը սակարկութեան վրայ է . միով բանիւ ձեզ գոհ ընե-
լու վրայ . այնպէս չէ՞ , բարեկամ :

— Ա.յո՛ւ , պատասխանեց Թովմաս :

— Շա՛տ աղէկ , դուք ինծի 50 ոսկի կանխիկ առաջար-
կեցիք . կընդունիմ , սա պայմանով որ 10 ոսկին կանխիկ վճա-
րեմ եւ 40 ալ պահանջս գանձելէ յետոյ :

— Անբողջ ինծի տրուելիք դրամի գումարը ըսելէ 50
ոսկի պիտի ըլլայ , փոխարէն իմ պահանջած 100 ոսկիին :

— Ա.յո՛ւ , կը յուսամ թէ ատոր դիտողութիւն մը չպիտի
ընէք :

— Թող այդպէս ըլլայ , ըսաւ Թովմաս . կընդունիմ ձեր
առաջարկը . որովհետեւ քով գիտեմ թէ այդ գումարը ամ-
բողջութեամբ պիտի ստանաք Երանոս աղական : Ձեզի երկրորդ
պայման մընալ ունիմ :

— Ի՞նչ պայման , հարցուց վաշխառուն , աչքերը սովո-
րականէն աւելի բանալով :

— Տառը ոսկին կանխիկ առնելէս յետոյ , մնացեալ 40
ոսկիին համար ալ մուրհակ մը պիտի տաք ինծի . երբ մնացածը
վճարէք ամբողջովին , ձեր մուրհակը այն ատեն կը վերա-
դարձնեմ ձեզի :

— Կընդունիմ , ըսաւ Օհան . եւ թղթի մը վրայ քսան
օրէն վճարելի մուրհակ մը գրեց եւ թղթադրօջմ մը փակցնե-
լով անոր վրայ՝ ստորագրեց : Յետոյ 10 ոսկին կանխիկ վճարե-
լով մուրհակն ալ յանձնեց Թովմասի :

— Շնորհակալ եմ , յարեց բախդախնդիրը . այս ձեւա-
կերպութիւնը շատ օրինաւոր եղաւ թէ՛ ձեզի եւ թէ՛ ինծի

համար . կը յուսամ թէ ես ալ իմ սովորական գործերուս մէջ
պիտի յաջողիմ եւ ձեզ գոհացնեմ :

— Ա՛ր բաղձանքն ալ աղ է :

— Ուրեմն , մնա՛ք բարով :

— Երթաք բարով , բարեկամս : Կիրակին չմտնաք Պ .
Թովմաս . աւելցուց Օհան :

— Երբեք . . . :

Թովմաս ոսկիները գրպանելով՝ ուրախ գուարթ դուրս
ելաւ Թորոս աղաի սենեկէն , եւ այն օրը ա՛լ չը յիշեց թէ ինքը
հարուստ ընկեր մը ունի միշտ իրեն օգնող :

ԺԹ

Հիմա դառնանք մեր դժբաղդ Հրանտին վիճակը քննելու .
թէ ի՞նչ ըրաւ կուխահար արտաքսուելէ յետոյ : Երանոս աղաի
տունէն ելլելով՝ ուղղակի տուն գնաց եւ արտասուաթոր աչ-
քով եղելութիւնը մօրը իմացուց : Մայրը շատ մտածեց այս
չարաղէտ վտանգին դարման մը ընելու . բայց անօգուտ :
Հրանտ նմանապէս չունէր այնպիսի սրտակից բարեկամներ որ
իրեն օգնէին ու զինքը մխիթարէին . վասն զի որչափ որ ուս-
ման մէջ յառաջագէմ էր , ի բնէ չունէր մաքի այն կորովը որ
ինքզինքը պաշտպանէր տարածայնութեանց դէմ որ հետզհետէ
վնասարեր պիտի ըլլային , եւ մինչեւ իսկ գործը բանտարգե-
լութեան պիտի հասցնէին : Հրանտ գիտէր կատօրեալ Փրանս-
սերէն եւ Տաճկերէն , նաեւ հմուտ էր ամառապալութեան ,
բայց ձախող եւ տարաբաղդ սիրահարութիւնը իր յառաջա-
դիմութեան օրինաւոր խոչընդոտ մը եղաւ : Այսպիսի գործո-
ղութեանց մէջ թշնամիին կարողութիւնը չափելու չափ հան-
դութեանց մէջ թշնամիին կարողութիւնը չափելու չափ հան-
ձար չունէր , իր սիրուհին իրմէ աւելի հեռատես էր , եւ շատ
անգամ այդ նազելի արարածն էր որ զինքը կը զգուշացնէր
այնպիսի վտանգներէ որ իրեն համար նշանակութիւն չունէին :

Հետեւեալ օրը որ վաճառականին գործերը տեսնելու օրն
էր . ցաւ ի սիրտ առաւօտուն ելաւ գնաց , տեսաւ որ վաճա-
ռատան պահապանը նոր կը բանար . քիչ մը օտաւեց եւ ասպա

անասորքեր ներս մտնելու ատեն, պահարանը «կեցի՛ք, այս-
րոն Հրանտ» ըսաւ. եւ ներս մտնելով գոց նստակի վրէ՛նքը
դուրս ելաւ, եւ Հրանտի սաղով ըսաւ. — Այս նամակը
չորպանին առաւ որ ներս մտնելէդ առաջ ձեզի՛. յանձնեմ:
Հրանտ առաւ նամակը եւ աճապարանքով բանտով, հետեւ
եալ սողերը կարդաց. «Պարոն Հրանտ, անցած գիշեր ձեր
տանը մէջ պատահած իրողութիւնը ընդհանուրին բերանն է,
հետեւ տըրար կեղծ կիւղիքին խնդիրն ալ, որ ստուտատը վաճա-
ռավանի վրէ՛նքը համար փոստաբեր է: Այս եղելութիւնները պատ-
ճառ եղան ձեր վարկը կորսնցնելու մեր սաջեւ, քանո՛ր սոցն
երկտող գրութեամբ այս օրէն ձեր գրագրութեան պաշտօնէն
հրաժարիլը կը ծանուցանենք»): Ստորագրութիւն. Սարգիս
Մանդակունի:

Խեղճը երբ այս սողերը կարդաց, ցուրտ քրտինք մը
ստեղծ վարմինը սրտակեց. եւ պայտանձած մտնց կեցած տեղը:
Պահարանը որ եղելութիւնը խնայած էր վաճառատան
միւս պաշտօնեաներէն եւ ինքն ալ իր արիող սէն համարած
ձեւ մը կը գործածեաւ որպէս թէ թանկ մը տեղեկութիւն չու-
նենայիր: Երբ իրուտակը այս տանը ծանուցելու արժանի
մարդ չեն եղեր, եւ որ բեռնակիր մըն է, քեզմէ աւելի
պատիւ ունիմ արիողս առջեմ: Եւ, անկառն ոչսպինի սրտ-
խորակելի խօսքեր շարացարկով, ինքզին ախրտե ու աղիք-
ները կը կեղեքէր: Եւ ինքն ինքն զայն զայն զայն զայն
Հրանտ, անտնց պահարանին սրտատախան մը տարու,
բութեամբ մեկնեցաւ եւ ճորտան ինքնիրեն սխառ մտածել ու
ըսել. — Այս թէնք դժբաղդութիւն է, Ստուտած իմ, ո՛րք եր-
թամ: ո՛րո՞ւ դիմեմ, ո՛րո՞ւ յայտնեմ անտեղութիւնս, ո՛ր կա-
րող է սրտաւ անկեղծութեանը թարգման ըլլալ. ընտանեկան
պատիւս կորսնցուցի, առօրեայ արարէնս կորսնցուցի, սիրուէիս
կորսնցուցի, ալ ի՛նչու ապրիմ ես: Այս տեսակ խօսքերով հա-
սուտ կամուրջը, եւ անկէ ալ գնաց մտաւ Իւսիլետարի թիւ 5
չոգեանը: Ճամբան քանիցս ինքզինքը ծովը նետել մտարե-
րեց, բայց չունեցաւ այդ քաջութիւնը. վառնդի կը մտածէր
թէ իր մահտընէն յետոյ, վառ համբու մը պիտի ձգէր իր եւ

տեւ, եւ ինչի՞ պիտի ծառայէր իր կորուտող, եթէ ոչ վատա-
համբաւութեան մը հաստատութիւնը: Այս խորհրդածու-
թեամբ չոգեանը նաւանայոցը մտեցաւ, եւ ծողովրդին հետ
ինքն ալ դուրս ելաւ: Կը մտած էր թէ իրիկունը գուժիւն մըն
ալ պիտի հարկուէր իր մօր: Միտքը այս տեսակ խորհուրդ-
ներով պաշարուած դէպի Պաղլար-Պաշի կը յառաջանար: տե-
սաւ որ երկու երկասարդներ իր հետքը չէին թողուր, ու-
չարութեամբ նայեցաւ եւ իսկոյն հասկցաւ որ Զիթթիկի սրտ-
տէղին մէջ վերդինէլ հետ տեսակցած միջոցին՝ իրեն սիրահա-
րութեանը հակառակը երկասարդներն էին:

Թովմաս եւ Տօնիկ յարաքայլ մտեցան Հրանտի եւ կեղծ
քաղաքավարութեամբ բարեկեցին զինքը:

Հրանտ չուզեց ինկ անոնց բարեւոյտները, ուստի քողած
քավարութեան դէմ չգործելու համար անոնց բարեւոյտներու
նայն ժամայն Թովմաս հանարձակութիւն տոնելով աւելի մօ-
տեցաւ եւ ըսաւ. — Պարոն Հրանտ, միթէ՛ մեզի հետ տե-
սակցիլը քեզի հանգրտանպատուութիւն կը համարին:

— Ա՛յ, պատասխանեց Հրանտ անտարբերութեամբ, բայց
եւ սյնակս ձեզի հետ տեսակցելու շարժումիմ մը չունիմ:

— Բայց մենք կուզենք որ ձեզի հետ յարաբերութիւն ու-
նենանք. մենք վստահամբաւ տարածայնութեանց կարեւորու-
թիւն չենք տար. քեզ կը սիրենք եւ կուզենք որ ձեր սրտին
ւր յուսախաբութեան մը գոհ չըլլայ:

— Իրական թէ դուք բարեկամ չէք ինծի. բայց այսու ա-
մենայնիւ գիտեմ թէ ձեր թշնամութենէն ոչինչ վնաս եկած է
ինծի, ուստի կաղաչեմ, կը պաղատիմ, թողք զիս որ իմ ճամ-
բաս շարունակեմ, դժխեմ բազդին ինծի տուած ի հարուած
ները բաւական են: Եւս առիկի՞մ, ճմասս այնուպէս զի իտարս

— Կուզէք որ ձեզի բարեկամական արտայայտութիւն մը
ընեմ. կուզէք որ ձեր թշնամ աղաքի դրած մտխոնեակողքին աւ
ղետակ հետեւանքները մի առ մի բացատրեմ, ըսաւ Թովմաս:

— Ա՛հ, դուք ալ գիտե՛ք այդ փոխանակողքին ինքիրը,
անհաստիկ այդ փոխանակողքին է որ զիս սոցճառ երեն տի-
տի հանէ. արդարեւ անխոհեմութիւն էր ըրածս. բայց ըրած
զանուեցայ եւ ես անձամբ ինքզինքս խորխորատը ձգեցի:

Ի վերջոյ Երանոս աղան ալ պիտի համոզուի թէ ես միշտ
ի նպատակս իրեն դործեր եմ :

— Դուք միշտ ի նպատակս Երանոս աղան դործեր ես՝ Օ-
հան աղան թակարթը ձգելու համար . բայց հոգ չէ . այս կի-
րակի դործին եղելու թիւնը պիտի յայտնուի . դուք պիտի խոյ-
տառակուիս եւ չպիտի ազատիս արդարութեան ձեռքէն :

— Ի՞նչ ըսել կուզէք , ըսաւ Հրանտ աւելի յուզուած եւ
չրթունքները դողդղալով :

— Ըսել կուզեմ թէ , պատասխանեց թովմաս . ձեր այդ
սիրահարութիւնը բացարձակապէս փորձանք մըն է ձեր գըլ-
խուն : Եթէ դուք այդ երեւակայական ցնորքները լքանելով
մտռնաք խորսո , գիտցած ըլլաք որ ձեր նախկին պատիւը ձե-
զի պիտի դառնայ , պիտի սրաչապանուիք այնպիսի անձերէ՝
որոնցմէ թշնամութիւն միայն կակնկալէիք :

— Միթէ կարելի է մտթ սենեակի մը մէջ առանց ճրա-
գի լոյս ըլլալ . միթէ կարելի է որ մարդ իր կեանքը զոհէ եւ
առանց կենաց ասրի . ո՛չ , ո՛չ , այդ անկարելի է , պա՛րոն :

— Բայց հաւատա՛ որ այն օրիորդը այս պարոնինն է .
ըսաւ թովմաս եւ Տօնիկը ցոյց տուաւ , այն օրիորդը որուն
պատիւը արատեցիք ձեր երթեւեկութեամբը մինչեւ ցարդ :

Հրանտ ալ չկարենալով իր սրտին բարկութիւնը զսպել
լին է այն օրիորդը պա՛րոն . ըսաւ աւելի բարկացայտ դէմ-
քով մը :

Այն ատեն Տօնիկ իր լուծութիւնը խոյեցով . — Թշուառա-
կան , դեռ համարձակութիւն ունիս խօսելու , ըսաւ . եւ
ձեռքի դաւազանովը հարուած մը իջեցուց անոր գլխուն :
Հրանտ մէկ ձեռքովը դաւազանը բռնեց եւ միւս ձեռքովը
սալտակ մը զարնելու ատեն , թովմաս աւելի ճարտար գտնու-
ելով , Հրանտի կուրծքին կուռի մը իջեցուց եւ կռնակի վրայ
դետին տատալեց : Այս միջոցին ճամբորդներէն քանի մը ան-
ձինք հաւաքուեցան բայց այս երկու սրիկաներուն զրպարտիչ
աղաղակներէն ներկայ եղողները համոզուելով , Հրանտը յան-
դիմանեցին եւ անարգանքով ու սպառնալիքով ճամբեցին :

Հրանտ տղու մը պէն լալաղին կը դառնար տուն :

Ի

Նոյն չարթուան կիւրակէն բոլորովին փոխուած էր Երա-
նոս աղա . այսօր կերեւար թէ քոսկին բերանը քիչ մը աւելի
բացած էր , որովհետեւ սեղանը զարդարուն , առատ կերա-
կուրներ եւ ըմպելիքներ պատրաստել տուած էր : Այնպէս կը
թուէր թէ չարիտղանց ուրախութիւն մը ունէր . եւ ի՞նչպէս
ալ ուրախ չըլլար , վրան զի 200 սակի փոխարէն առանդ
արուած էր ազարակ մը որ կարժէր 500 սակի , պարտասէրը
մեռեր , եւ ինք որ եւ իցէ խարդախութեամբ նոյն ազարակին
տէրն էր եղեր :

Վաշխառուն բողբոջին մէկ անկիւնը բազմած կրտէր . —
Կնիկ , բեր նայինք սա օղին , ասօր օխտը ըրախիւն օրն է .
վիշերը նայինք դէմ առ դէմ . աղջիկ դու ալ մէզէ հասցուր
տէ՛ նայինք , դուք ալ ուրախ եղիր . փառք Աստուծոյ , մէջեր-
նիս օտար մարդ չունինք , սեղաններնուս սէք անկող մէկը
չկայ , իշտէ ես ալ ասանկ կուզեմ . մեր սենեցածը մեք զիտ-
նանք . մեր կերածին ընկեր չգտնուի որ , փորեքնիս կերթայ ,
կռնակնիս կերթայ , հոսկնանք . նայէ՛ , այսօր ժամը 7 ը գա-
ցեր է , ու դեռ կը զուարճանանք : Աղէկ որ այն խոյտառակ
տղան անէս տէ՛ֆ ըրի . մեր տունը , սրբոն , միւսիս , էֆէն-
տի մտա՞ մի , տունին չարխը դարձաւ դնայ , մանաւանդ
Վերգինին , ան միւսիս Հրանտը եկած ատեն , ի՞նչ ընելիքը
չէր զխտէր . հաց անգամ ուտելու ժամանակ չունէր :

Երանոս աղան այս խօսքերը խօսած ատեն , մայր եւ աղ-
ջիկ ախտը էին , չէին ուզեր անոր ուրախութեանը մասնակ-
ցիլ . իսկ Երանոս աղա , առանց նկատողութեան առնելու ա-
նոնց տխրութեան պատճառը , ըսաւ . — Հայտէ նայինք ,
տո՛ւր սա ըրախին . եւ դաւաթը պարպելով հետեւեալ խօս-
քերը ըրաւ . — Գիտե՞ս կնիկ , որ երկու ամսուան մէջ 200
սակի փոխարէն երեք հարիւր սակի ալ շահած եմ : Հանգուց-
եալ պարտաստանին տղաքները , որ խեղճ վիճակի մէջ են , ու-
ղեր են առանդ արուած ազարակը ծախել . ուստի թուա-

կանը փոխել յաջողելով, նախ հինգ տարուան տակս պահանջեցի, եւ վերջապէս յաջողեցայ ազարակին տէր ըլլալ:

— Իսկ այն տղաքը, ըսաւ տերազին Վերդինէ. թերեւս անօթի մնացին եւ խեղճութենէ մեռնէին ալ:

— Խեղճ տղաքներ, ըսաւ տիկին Բրաբան:

— Խենթ աղջիկ, ինչե՛ր ալ կը մտածես: Անիկ, օղի մընալ տուր սա գուարձալի խօսակցութեան վրայ. ըսաւ ան խիղճ մարդը:

Աինք ակամայ օղի մընալ տուաւ իր ամուսնին:

Երանոս աղա գաւաթը ձեռքը առաւ եւ խմելու վայրկենին՝ յանկարծ դուռը զարնուեցաւ: — Ո՞վ պիտի ըլլայ արդեօք. ես եւ ոչ մէկուն ժամադիր էի եւ ոչ ալ ժամադրութեան կրօնատէր: Ի՛նչ որ է, աղջիկ, դե՛ս՝ դուռը բաց:

Վերդինէ գնաց դուռը բանալու, եւ երբ տեսաւ իր դէմը Օհան աղան, վեր ելլու տառնց քողարքալարական յարգանք մը մատուցանելու, եւ իմաց տուաւ թէ « Օհան աղան » է:

— Հա՛յ, Աստուած փորձանքդ տայ մարդ. ըսա՛ւ ձեռունին. երբեք մտքէս չեր անցնէր: Եղբն ժամայն՝ Օհան ներս մտաւ եւ ծիծաղաբէ՛մ ամենքը բարեւեց, յետոյ նստաւ արձուի մը վրայ:

Բարի եկաք, ըսաւ Երանոս աղա, եւ նորեկի սրբախօսութիւնը հարցուց:

— Շատ աղէկ եմ եւ կը յուսամ թէ դուք ալ աղէկ էք. ըսաւ Օհան, եւ լի առատութեամբ սեղանին նայելով շարունակեց խօսքը. այսօր կը տեսնեմ թէ դաւառացի փաշտառուի մը տնտեսագիտական սահմանէն դուրս ելլելով, Պոլսեցի դժբախտակրներուն դատակարգը բարձրացեր էք. ուրախ եմ եւ կը մաղթեմ որ աւելի բարձր դատակարգի մէջ տեսնեմ:

— Աը սխալիք, բարեկամ, ըսաւ Երանոս հանդարտ ոգւով. ի՛նչ որ էի՛ դարձեալ նոյնն եմ. մենք դաւառացիքս, ինչպէս որ դիտէք, օթեկ հացը սոկիի սրարկերուն քսելով կը շատանանք. բայց մերթ ընդ մերթ ալ սահմանը ձեզքելով կանցնինք զոր բացառութիւն կանուանեն. ինչպէս դուք ալ անցած օր բացառիկ ծախքեր ընելու սովորուեցաք եւ շարժառիթը գրեթէ պատանի մըն էր:

— Այո՛, այո՛, իրաւունք ունիք, ըսաւ հեգնելով, ես կատակ ըրի. թէ որ կուզէք, ամէն օր սոյսովսի հացիկերոյթներով, կոչնականներով գուարձալի կեանք մը վարեցէք. ալ տակաւ տակաւ թօթաիելու էք ձեր վրայէն գաւառացին աւանդական սարրերը, վասն զի Պոլսոյ դրութեամբ ընտանիք մը կը կազմէք: Ապա ուրեմն, Պոլսոյ դրութեամբ ձեր խոստմանը հաւատարիմ մնացէք:

— Ես միշտ իմ խոստմանս եւ գործերուս մէջ հաւատարիմ մնացած եմ, պատասխանեց ձերունին:

— Շատ աղէկ, ես ալ այնպէս կը հաւատամ: Ուրեմն չնորձ ըրէք սա փոխանակազիրը վճարելու, վասն զի սոյսման նաժամէն օր մըն ալ անցած է, յարեց Օհան. եւ գրպանէն թուղթ մը դուրս հանելով ներկայացուց Երանոս աղաին:

Երանոս աղա առնել ուզեց թուղթը Օհանի ձեռքէն, բայց անիկա ետ քաշելով՝ կրկին դրաւ գրպանը. ձերունին համնալով անոր մտքը ծաղրական կերպով ըսաւ. — Ի՛նչ փոխանակազիր է սա:

— Զգիտէ՞ք, քսան օր առաջ հօրմէս՝ Թորոս աղան փոխ ստակ ուզեր էք, եւ ան ալ քանի մը օր ետքը վճարեր է՞՞ ձեզի:

— Օհան, դիտէի որ դուք այս տեսակ խարդախութիւն մը պիտի ընէիք. բայց ինչպէս որ դիտէք, մեք դաւառացիքս 500 ոսկի չէ, 500 փարսոյ անգամ չենք վճարեր ապարդիւն: Դուք նայեցէք որ ուրիշ անուղղակի միջոցներով ձեր անիրաւ վրէժը լուծել ջանաք:

Սոսկալի մարդը պատասխանեց, աւելի հանդարտ եւ աւելի խորհրդաւոր. — Մեր վրէժը չարժեր որ 500 ոսկիով լուծենք. վասն զի վրէժն ալ իր շրջագծին մէջ վեճմութիւն մը ունի. 500 ոսկիով քեզ չենք կրնար կործանել: Վրէժն ու սրահանջը տարրեր են իրարմէ:

— Թող այնպէս ըլլայ, ըսաւ Երանոս աղա հեգնելով. տեսնենք սա փոխանակազիրը զոր վճարելու համար անփոյթ եմ գտնուած մինչեւ ցարդ: Տուէ՛ք նայիմ:

— Ո՛չ, բնագիրը ձեզի չեմ կրնար տալ, սոկայն մէկ օր իննակը եթէ կուզէք տամ:

— Խոնչ , կը վախնաք որ ձեր ձեռքէն կը յափշտակեմ :

— Ինչո՞ւ պիտի յափշտակէք . բայց օրինաւորութիւն չէ :

— Բայց պարտաւէր մը կատարեալ իրաւունք ունի իր կնիքը կամ ստորագրութիւնը աչքէ անցնելու . ես քաջ դիտեմ որ այդ մուրհակի կնիքը խարդախուած է :

— Խորախեա՞լ , ըսաւ Օհան եւ զարմացական հայեացքով մը սօք ելլելով . ուրեմն պիտի պարտաւորինք օրինաց արդարութեանը դիմել :

Այս միջոցին դարձեալ փողոցի դուռը զարնուեցաւ . եւ ահա Թովմաս եւ Տօնիկ միասեղ ներս մտան . վերգինէ այդ սրբիկաներու երեսը չտեսնելու համար՝ խոյս տուաւ իր սենեակը :

Երանոս աղաի գլուխը օդիէն բաւական տաքցած ըլլալով , Օհանի սպասնայիքին դէմ աւելի խստութեամբ սկսաւ խօսիլ , այնպէս որ նորեկ ինքնակոչ հիւրերուն ներկայութիւնը իր աչքէն վրիպած էր . — Գուն , կըսէր , ի վաղուց անտի կը փափաքէիր այս տունը հիմ ի վեր ստապել . քակել քայքայել եւ անոր աւերակներուն վրայ խնճոցքի սեղան կանդնել . եւ դողոջուն ու զաւամած հօրդ կենդանութեանը բաժակներ պարսկել : Բայց ս'չ , ս'չ , այդ ամէն ցնորքները երազներ են՝ որ իրականութիւն չպիտի գտնեն երբեք :

Թովմաս Երանոս աղաի խօսքը ընդմիջելով ըսաւ , — Խոնչ հարկ այդ պատարակելի խօսքերուն :

Երանոս աղա . լսելով այդ սրիկայի պաշտպանողական խօսքերը , յանկարծ դռչեց . — Օ՛ դու ես , բարեկամս . այնպիսի յարմար ժամանակի մը մէջ եկար որ չեմ կրնար պատմել . հիմա արդարութիւնը երեւան կելլէ , ըսաւ . եւ դէպի սենեակին դուռը գնաց . ու խոհարար , գնա՛ սա Հրանտը չուտով հոս կանչէ . սպա դառնալով ըսաւ . — Օհան աղա , դու օրէնքին արդարութեանը դիմել ուզեցիր . այս տեղ ներկայ գտնուող անձերէն աւելի արդար դատաւոր չպիտի կարենաս դանել կարծեմ . մէկը ձեր գրագիրը՝ որ սուտ չիխօսիր . միւսը՝ իմ բարեկամս , որ արդարութեամբ պիտի մձուէ մեր իրաւունքը , եւ մենք ալ՝ կարծեմ , իրարու խօսք կրնանք հասկնալ :

— Բայց . կը յիշե՞ս , ըսաւ Օհան հանդարտութեամբ . քիչ մը առաջ ըսիր որ այս մուրհակի կնիքը խարդախուած է :

— Այո՛ , ըսածս չեմ ուրանար :

— Ըսել է որ ես խարդախ սեղանաւոր մըն եմ , փաստքուս , յափշտակող եւ գրպարարի :

— Իրականութիւնը պիտի ստուգէ այդ ամէնը . ըսաւ Թովմաս :

— Շա՛տ աղէկ . քանի որ ամէնքդ ալ արդարութեան եւ իրաւունքի կուսակից էք , եթէ օրինական փաստերով հաստատէք մեր իրաւունքը , այն ատեն ես պարտականութիւնս պիտի ճանչնամ :

Արդ . սա այժմ կըստատէին Հրանտի գալստեանը : Վերգինէ երբ ըսեց որ իր սիրելին ալ ներկայ պիտի գտնուի . հետեւաբար անոր անմեղութեան եւ հաւատարմութեան վրայ կատարեալ վստահ էր ինքը . ըստ սրում քաջ տեղեակ էր իրոզութեան գաղտնիքին : Սիրաք ուրախութեամբ լցուեցաւ . հակառակորդներուն խայտառակութեանը ներկայ գտնուիլ ուզեց . ուստի մեծ համեստութիւն մը ցոյց տալով մտաւ դարձեալ սենեակը եւ գնաց մօրը քով նստաւ :

Հուսկ ուրեմն Հրանտ եկաւ . եւ զամենքը բարեւելու առ տեն երբ Թովմաս եւ Տօնիկ աեսաւ , բոլորովին այլայլեցաւ . սակայն իր այլայլելու պահուն աչքին հանդիպեցաւ Վերգինէ , որ մօրը քով նստած քաղցր ակնարկ մը ուզված էր Հրանտի . ուստի ինքզինքը զսպելով Հրանտ . ի սէր Վերգինէի չէր ուզած սոյն հանդիսաւոր խաղաղութիւնը վրդովել . ուստի իրեն ալ ամիս մը ցոյց արուելով , գնաց մէկ անկիւն մը նստաւ : Ապա — Բայց ընիկ սոյն գերդատառնին անդամներէն՝ ամենքնիս ալ օտար ենք . եւ իրարու հետ ո՛ր եւ է սուսչութիւն մը չունինք կարծեմ :

— Ճշմարիտ է , պատասխանեցին ամէնքը մէկ բերան :

Ապա Թովմաս Օհանին դառնալով ըսաւ , բանէ մը տեղեկութիւն չունեցածի պէս . — Դուք փոխանակազիր մը ունիք եղեր Երանոս աղաի կնքովը :

— Այո՛ . ըսաւ Օհան , գրպանէն թուղթը հանելով :

— Տուէք ինձի այդ թուղթը , եթէ վստահութիւնս ունիք ինձի :

Այո՛ . կրկնեց վաշխառուն եւ փոխանակագիրը Թովմասի ձեռքը տուաւ :

Թովմաս թուղթը ձեռքը առնելէ յետոյ, օրինական ձեւակերպութեամբ Հրանտը կանչեց եւ փոխանակագիրը բացաւ ու ձեռքովը կնիքը գոցեց եւ ցոյց տալով ըստւ . — Այս ձեր գիրն է :

— Այո՛ , պատասխանեց Հրանտ . սակայն ինչո՞ւ կնիքն ալ ինձի ցոյց չէք տար . վասն զի այդ կնիքին վրայ բացատրութիւններ ունիմ տալիք :

— Կազաչեմ , ըսաւ Թովմաս . ձեր բացատրութեանցը արգելք եղող չկայ , բայց ժամանակը չէ . ապա թէ ոչ մինչեւ իրիկուն կամ մինչեւ վաղը այս գործը չի վերջանար . եւ դառնալով Երանտին . — Ձեր կնիքը կը ճանչնա՞ք :

— Անտարակոյս , ձեռքիս մասներուն սկսա :

— Սա կնիքը ձերն է . յարեց Թովմաս , ցոյց տալով Երանտի :

— Ոչ , ո՛չ . ըսաւ առանց վրան նայելու :

— Բայց , կազաչեմ . անգամ մը վրան նայեցէք . յարեց Թովմաս :

Երանտ ազա առանց ուշադրութիւն ընելու նայեցաւ ու դարձեալ , ո՛չ . կրկնեց :

Թովմաս , դառնալով առ Օհան . — Դուք ի՞նչ կըսէք , բարեկամն :

— Այս կնիքը բուն իսկ իր ձեռքով կնքած կնիքն է , զոր կուրանայ հիմն :

Թովմաս , կեղծաւորութեամբ սակաւ ինչ մտածել ձեւացնելով , բողբոջան լուրթեանէ յետոյ ըսաւ . — սխալ է ստուգել , եւ այս ստուգութիւնը ուրիշ կերպով չըլլար , բայց եթէ բուն կնիքը աչքիս առջեւ ունենալով :

— Շատ աղէկ , ըսաւ Երանտ ազան , եւ մեքենապէս գրարանէն կնիքը հանելով սուաւ Թովմասի ձեռքը որ բազդատէ :

Թովմաս վայրկեանի մը չափ ուշադրութեամբ բաղդատելէ յետոյ՝ կարկին մը ունիք ըսաւ :

Վերգրինէ , համեստ եւ ցած ճայնով մը . — կայ , եթէ կուզէք , ըսաւ . եւ հօրը նայեցաւ :

— Բե՛ր ուրեմն . յարեց հայրը :

Ազլիլը խոյն գնաց ու բերաւ :

Այս բաղդատութեանց պահուն՝ թէ՛ Հրանտ եւ թէ՛ Վերգրինէ անոնց ուշադրութիւնը գրեթէ կը ծաղկէին :

Թովմաս խոյն թէ՛ ծաւալը եւ թէ՛ գիրերը չափեց , բայց տարբերութիւն մը չգտաւ , ապա ցտակցական ձեւով Երանտի դառնալով ըսաւ . — Տարբերութիւն մը չեմ գտներ :

— Իրաւունք ունիս տղաս , պատասխանեց ձերունին . հող այնպիսի գաղտնիք մը կայ , զոր եթէ ինձի չչայտնէին , ե՛ս ոչ չպիտի կարենայի գիտնալ :

— Ա՛ , չեմ կարծեր որ հոս գաղտնիք մը եղած ըլլայ . ըսաւ սրիկան , անքթիթ վրան նայելով :

— Երկու հատ նուրբ վաշխներ չե՞ս նշմարեր , ըսաւ Արանտ ազա ծաղրական ժպտով մը :

Թովմաս դարձեալ ուշադրութեամբ նայելու ձեւով մը . — Բայց ես հոս բան մը չեմ նշմարեր , ըսաւ :

Երանտ ազաի գոյնը փոխուեցաւ եւ կատաղի ակնարկ մը ձգեց Հրանտի վրայ :

Հրանտ ոտքի ելաւ , ըսելով . — Այս պարոնը ինչո՞ւ չի թողուր որ ես ալ խօսիմ :

— Բայց կնիքը քեզի չէր վերաբերեր , եւ ահա ստոր համար չթողուցի որ խօսիք : Հիմա կարգը ձերն է , պա՛րոն . ազատ էք խօսելու , ըսաւ Թովմաս :

— Պա՛րոններ , այդ կնիքը կեղծ է , եւ ես փորագրել տուած եմ , իրաւամբ միւսնոյն չափով չափած եւ մազի չափ տարբերութիւն չունի . սակայն չէ՞ք նշմարել որ այդ կնիքին վրայ երկու մանր վաշխներ կան :

— Եկէք նայեցէք , ըսաւ Թովմաս լրջմտութեամբ :

Հրանտ , ելլելով նստած տեղէն , եկաւ վաշխները ցոյց տալու դիտաւորութեամբ : Ուշադրութեամբ նայեցան ամենքը : Անդին դարձուց . սատին դարձուց , բայց իր շինած վաշխներուն ստուերն անգամ չը գտաւ . — Բայց պիտի ըլլայ անպատճառ , ըսելով , կրկին սկսաւ նայիլ : Անդձին ձախտէն ջուրի պէս պաղ քրտինքի կայլակներ կը թփփէին , եւ այնպէս կը թուեր որ պիտի մոնէր կնիքին մէջ եւ գաղտնիքը որոնելով գտնել :

-- Ալ բաւական չէ՞, ըսաւ Թովմաս . եկէք, ամենքնիւր ալ նայեցէք, թէ ճանճի ստրի չափ տարբերութիւն կա՞յ : Դժբաղդաբար կամ բարեբաղդաբար, իր ամբողջութեամբը պատկերացած է այս կնիքը առանց մեղանի թերութեան . ամենքն ալ ուշադրութեամբ նայելու վրայ էին, բայց ո եւ է նշան մը չկրցան նշմարել :

Այն ատեն Օհան, որպէս թէ չկրնալով համբերել, ըսաւ . -- Կը տեսնէք . բարեկամներ դուք ալ եթէ պէտք ունենաք դրադրի մը . այսպիսի դրադիր մը ունեցէք, որպէս զի քիչ օրէն վաճառատան սնանկութիւնը ստորագրէ :

Թովմաս պաղարեամբ ըսաւ Հրանտի . -- Քու գաղափարովդ որ կողմը պաշտպանելու միտք ունէիր :

-- Բնականաբար Երանոս ազաի կողմը :

-- Բայց ատիկա պաշտպանութիւն մը չպիտի ըլլար դարձեալ :

-- Եւ մեզ պիտի կործանէիր, այնպէս չէ՞, ըսաւ Օհան :

-- Կորսուէ՛, սրիկա . գոչեց Երանոս ազան եւ բարկութենէն սեղանէն դաւաթը առած ետեւէն նետելով :

Թովմաս, ծերունին հանդարտեցնելով, ըսաւ . -- Այս ետատարդը յանցանք չունի . յանցաւորը անոր խելքին վատահացող անձն է . կը տեսնէք որ այս ազան ո՛չ ըրածը դիտէ եւ ո՛չ ալ ըսածը : Հիմա Երանոս ազա մտիկ ըրէ . մեր եզրահացութիւնը սա է, թէ դուք անպատճառ այս դուռնորը պիտի վճարէք Օհան ազաի ուր որ ալ երթաք, վճիռը ի վնաս ձեր պիտի տրուի :

Այս միջոցին Օհան քաղաքավարութեամբ փոխանակադիրը դարձեալ առնելով՝ դրպանը կը դնէ . եւ Թովմաս ալ կնիքը կը դարձնէ կրանտի :

-- Է՛յ, ի՛նչ պիտի ըսես, յարեց բարկութեամբ Երանոս Օհանին . այս ստակը պիտի՞ վճարեմ քեզի :

-- Դժբաղդաբար, կըսեմ, թէ պիտի վճարէք . վասն զի ալ փախչելու տեղ չմնաց, Երանոս ազա :

-- Բայց այսչափ անդթութիւն ըսուած բան է :

-- Հիմա, բարկեալ, ըսաւ Թովմաս ծերունիին . ես կըզգամ թէ դուք այս ստակը առած չէք . բայց քանի որ օրինա-

ւոր է փոխանակագիրը, եւ ձեր կնիքը կը կրէ, ինչ որ ալ ընէք, անօգուտ է . վերջապէս պիտի վճարէք : Ի՞նչ կըսէք, պա՛րոն Տօնիկ :

-- Յաւօք սրտի ես ալ կըսեմ թէ՛ Երանոս ազա պիտի վճարէ այդ գումարը, վասն զի բանելու կէտ մը . փախչելու միջոց մը չունի : Բայց եւ այնպէս բաւական ալ պիտի յոգնի Օհան ազան, մինչեւ որ այդ ստակը դանձէ :

-- Այնպէս կը խօսիք, պարոն, որպէս թէ երբեք պահանջ մը ունեցած չըլլամ, յարեց Օհան :

-- Ալ ամէն բան մտնի է ինձի, կըկնեց Տօնիկ :

-- Կը տեսնե՞ս, կնիկ . կը տեսնե՞ս, վերդինէ, ի՞նչ փորձանքներու մէջ ձգեց մեզ այս շան ծնունդ Հրանտը, ըսաւ հառաջելով եւ դարձաւ Թովմասի : Պա՛րոն, հիմա եթէ այս ստակը վճարելու ըլլա՞մ, կրնայ ըլլալ որ վաղը այս սարսափելի մարդը ուրիշ փոխանակագիր մընալ պատրաստ է . եւ այսչափ կամ ուելի եւս դուռնոր մը պահանջէ :

-- Ո՛չ, ո՛չ, պատասխանեց Թովմաս, ատոր միջոցը շատ դիւրին է . եւ անգամ մըն ալ եթէ այս տեսակ փոխանակագիր մը կամ մուրհակ մը վճարելու ըլլաք, չըլլայ որ կնիքը պատուելով մէկ կողմ նետէք . ասոր անխաղ միջոցը, ալ պարտք չունենալու համար, պարասպահանջն անդորրագիր մը առնել : Հիմա այս մարդուն ալ եթէ վճարելու ըլլաք, անպատճառ ստացադիր մը առնելու էք, որպէս զի կնիքն խարդախութիւն ընելու միջոց չկրնայ աւնենալ :

Երանոս ազա, քանի մը վոյրկեան մտածելէ յետոյ, հարցուց . -- Ուրեմն, Օհան ազա . իբրեւ պարտատէր, կը հարցնեմ ձեզի թէ ո՛րչափ ժամանակի մէջ կուզէք որ վճարեմ այն գումարը :

-- Դուք դիտէք . ըսաւ վաշխառուն՝ սիրա առնելով . արդէն փոխանակագրին պայմանաժամը լրացած է . դարձեալ պայմանաժամ կը խնդրէք :

-- Ես ձեզի բան մը ըսեմ, յարեց բաղդախնդիր սրիկան . Օհանի ուղղելով իր խօսքը . -- Դուն անպատճառ գեղջ մը ընելու եւ ստակը կանխիկ առնելու ես . եւ փոխարէն ստացադիր մը տաս այսօր Երանոս ազաին :

Ո՛չ, ո՛չ, անկարելի է ատ . ես այս ստակը գեանէն չեմ ժողովուած , եղբայր . ի՞նչ հարկ կայ զեղջելու :

— Ես այնպէս կերեւակայեմ թէ , շատ դիւրաւ այս գուռ մարը չես կրնար ձեռք ձգել . քանի որ մէջ անդը խենթ մը . վերջապէս ասուշ մը կը գտնուի , եւ այս ասուշը երկուստեք վնասակար կրնայ ըլլալ : Ուստի դործը քաղցրութեամբ վերջացնելն ամենէն սքանչելի միջոցն է :

— Պա՛րոն թովմաս , կը տեսնեմ որ դուք անաշուտապէս չէք վարուիր մեր շահերուն հետ , ըսաւ Օհան . ի՞նչու ձեր ուզըութենէն կը վրիպիք :

— Օհան աղա , պատասխանեց թովմաս , ճշմարիտը խօսելով , դործին մէջ խարդախութեան նշոյլ մը կերեւի . ասոր ամենէն լաւ միջոցը իրաւախոհութիւնն է . ինծի այնպէս կը թուի թէ՛ ի վերջոյ դուք ձեր յամուութեանը վրայ պիտի զըզջաք :

Թովմաս այս խօսքերը կուզէր Օհանի գաղտնապէս . որպէս զի ներկայ եղողները չի լսեն . ի վերջոյ թորոս աղաի որդին բարձր ձայնով ըսաւ . — Երանոս աղա , վերջապէս ի՞նչ կերպով վճարել կուզէք այս ստակը :

— Ես պարոն թովմասի առաջարկութիւնը կընդունիմ , պատասխանեց Երանոս աղան :

— Շատ ազէկ . ես ալ ընդունեցայ , յարեց Օհան , եւ հարցուց թովմասի . զեղջը ո՞րչափ պիտի ըլլայ .

— Հարիւր ոսկի . պատասխանեց թովմաս .

— Ո՛չ, ո՛չ, շատ է . գոչեց Օհան :

— Շատ չէ , շատ չէ՛ . դու իմ խօսքիս համոզուէ , բարեկամ : Օ՛ն , Երանոս աղա . դուն 400 ոսկի պատրաստէ . եւ դու ալ , Օհան աղա , պատրաստուէ անդորրագիր մը գրել սա պայմանով որ թուականէն վերջը Երանոս աղան ո՛չ կընքով եւ ո՛չ ալ ձեռագիր ստորագրութեամբ ստակ պահանջելու իրաւունք չպիտի ունենաք :

Երանոս արդէն մեկնած էր որոշուած գումարը բերելու , եւ Օհան ալ քիչ մը թուղթ հանեց գրպանէն՝ անդորրագիրը պատրաստելու :

Նայն միջոցին թղթի կտորի մը վրայ արտարնօք երկտող

բան մը գրեց թովմաս եւ Օհանի ցոյց տալով ըսաւ . — Ահաւաւսիկ , անդորրագիրը . այսպէս պէտք է որ գրէք . « Այս վայրկենիս ստակը առնելուդ պէս՝ 40 ոսկին ինծի վճարելու էք » :

— Շատ ազէկ , ըսաւ Օհան . եւ նայն միջոցին Երանոս աղա 400 ոսկի ի ձեռքին՝ ներս մտաւ սենեակէն . նոյն ժամայն թովմաս դիմաւորելով Երանոս աղան , ըսաւ . — Տուէք ինծի , պէտք է որ ես համբեմ եւ յանձնեմ Օհան աղաին : Օհան յանձնեց փոխանակագիրը եւ թովմաս ոսկիները այնպիսի ճարտարութեամբ մը համբեց որ 40 հատը խլեց . ո՛չ ոք չը կրցաւ բան մը մտադրել . — Հիմա առէք , Օհան աղա , դուք ստակը , ես ալ փոխանակագիրը :

Օհան համբեց ոսկիները տեսնելով որ 40 հատը պակաս էր , դիտմամբ լուծիւն պահեց :

— Ճիշտ 400 ոսկի՞ է , հարցուց թովմաս :

— Այո՛ , ճիշտ 400 հատ , պատասխանեց Օհան :

— Ուրեմն Երանոս աղաի պահանջած անդորրագիրն ալ ստորագրեցէք եւ տուէք որ յանձնեմ տիրոջը . ըսաւ թովմաս :

— Ահաւասիկ ըսելով Օհան՝ յանձնեց . իսկ թովմաս , նախ աչքէ անցնելէ վերջը Երանոս աղաի դառնալով կարգաց հետեւեալ տողերը : « Ներքոյ գրեալ թուականէս վերջը էճուկեց Երանոս աղան ստակ մը առնելիք չունիմ . եւ եթէ գտնուի քովս այնպիսի մուրհակ մը թէ ձեռագիր ստորագրութեամբ եւ թէ կնքուած , վաւերական չը պիտի համարուի : »

Կ. Պոլիս 28 Նոյեմբեր 1876 .

ՕՀԱՆ ԹՈՐՈՍԵԱՆ

— Ահաւասիկ , Երանոս աղա , անդորրագիրը առէք եւ պահեցէք , յարեց թովմաս . ալ այսուհետեւ այս մարդը անկարող է ձեզմէ ոսկի մը անգամ պահանջելու ըսելով , կեղծ փոխանակագիրը պատուեց եւ սկսաւ խրատել ձերունին որ այսուհետեւ Հրանտի պէս պարզամիտ եւ անխորձ տղոց կարեւրեւորութիւն չտայ եւ իր պատիւը չարատաւորէ :

Քանի մը վայրկեան ետքը խուսք մը կողպտիչ բաղդալընդիւրներ դեւի պէս մէկը միւսին ետեւ մեկնեցան տունէն :

Յրանոս աղա ինքզինքը դարձեալ նոյն սեղանին առջեւ դրու-
նելով, հետեւեալ խորհրդածութիւնը բրաւ ինքնիրեն :

— Ա՛հ, ժամ մը առաջ ո՛րչափ ուրախ էի եւ հիմա ո՛րչափ
տխուր . 200 ոսկի շահու փոխարէն 400 ոսկի տուգանք . սար-
սափելի է աս : Ի՞նչ կրնամ ընել ինքզինքս միխթարելու հա-
մար . ո՞րու կրնամ բեռնցնել այս տուգանքը : Եթէ որ եւ իցէ
գրպարտութեամբ այս միտան կրկինը չլահիմ, սրտիս ցաւէն
պիտի մեռնիմ . այո՛ պիտի մեռնիմ : Ա՛հ, վերգլինէ՛, վերգլինէ՛,
քեզի համար է որ այսչափ միտս կրեցի . քեզի համար է որ
այսչափ տառապանքի եւ պրկանքի կը դատապարտուիմ : Սեր
պպերէն մեզ աւանդուած այն յարգուրը, այն խրատը ո՞ւր
մնաց : — Ոսկին ամէն ինչ է . ահա ոսկի ունեցայ, զիս եր-
ջանկացնելու չափ հարատուիւն ունեցայ . բայց ո՞ւր է եր-
ջանկութիւն : Ազբատը կըսէ որ, եթէ ոսկի ունենայի, երջա-
նիկ կըլայի . ես ալ կըսեմ որ եթէ վերգլինէն չուենեայի, եր-
ջանիկ կըլայի : Բայց ամէն ինչ յուսախաբութիւն մընէ եղեր
աշխարհի վրայ . չիկայ եղեր հիմնական բան մը, իր մը, գոյ-
ութիւն մը՝ որոնց վստահի մարդս . եւ անոր վրայ երջանկու-
թեան շէնքը կանգնէ :

Կս կը կարծէի թէ առջեւս պիտի բացուէին փառա-
ւար օրերու հասանք մը, եւ փառքի քաղցը գեփիււոք առա-
գատեալ աւետարեր երջանկութեամբ պիտի մղէր դէպ ան-
մահութիւն : Ո՛չ, ո՛չ, հիմա կըզգամ թէ մարդկային կեանքը
ցնորական երեւակայութիւն մը, երազ մըն է օրորոցէն մինչ
չեւ գերեզման :

Այս տեսակ յուսահատական խորհրդածութեամբ միտքն
ու սիրտը տանջելէ յետոյ, թողուց իր ճօխ սեղանն ու գնաց
իր ննջատեանեակը առանձնացաւ .

ԻՍ.

Հրանտ, որ երկրորդ անգամ արտաքսուած էր Յրանոս
աղաի առնէն ուղղակի իր աունը երթալով, կնիքին խնդիրը
հասկցուցած էր մօրը :

Մայրը որ ուղղամիտ կին մըն էր, ըսաւ տղուն . — Տը-
ղաս . եթէ ես ալ Յրանոս աղաի տեղն ըլլայի, պիտի կասկա-
ծէի վրադ եւ ատեւութիւնս պիտի կրկնապատկէր, եւ ամէն
ջանք ի գործ պիտի դնէի՝ ո՛չ թէ քեզ տունէս միայն հեռա-
ցնելու, այլ քաղաքէն ալ դուրս արտաքսելու . ինչու որ դուք
չիրցաք ձեր անմեղութիւնը բացարձակ ցոյց տալ ու չբմեղու-
թիւնդ հաստատել : Այն երկու երիտասարդները, որ քու
կատարեալ հակառակորդ են վերջապէս իրենց ճարտիկու-
թեան շնորհիւ յաջողեցան լարած որոջայթիդ մէջ քեզ ձգելու
եւ բարեկամիդ ու սրաշուպանիդ պատիւը ձեռքովդ սոսնակի
ընելու : Ըստ իս, ալ այսուհետեւ դործ չունիս հոն . համբե-
րութիւնը սահման մը ունի, սլափիւք ատիճան մը, եւ սիրա-
հարութիւնը՝ չափ մը . դուն ամէն կերպով չափազանցեալ
բաղդախնդիր մը պատկերացար անոր աչքին . եւ քու տկա-
րամտութեամբը ո՛չ միայն ի միտս անոր գործեցիր այլ եւ քու
անձին իսկ . որովհետեւ պատիւդ կորսնցունելով ունեցած
փոքրիկ շահդ ու ապագայ բոլոր յոյսերդ կորսնցուցիր . եւ
այսօր աւօրեայ պարէն մը հայթայթելու, գոնէ ինքզինքդ
մեռչանելու փոքրիկ շահ մը չունիս . ա՛հ, որդեակ . ի՞նչ պի-
տի ըլլայ վիճակդ . այսպէս թախառական եւ յուսախաբ կեանք
մը վարելէ :

Գիտես որ հարուստ չենք, եւ մեզի վիճակաւոր գեր-
դատուններու ազքատութիւնը սոսկալի է : վասն զի տղքատը
կրնայ մերաւ եւ ըստ բաւականին գոհացուցիչ կեանք մը վա-
րել : Բայց մենք, ինչպէս որ գիտես, անհնար է որ մութանք .
ո՛հ, այն ատեն լու է ողջ ողջ դժոխք իջնել քան թէ աշխար-
հի վրայ իբր մարդ շրջիլ, վասն զի մարդոց հոսանքին մէջ
մարդ գտնելու համար, քու դպրոցական ուսմանքդ՝ գիտու-
թիւնդ չի բաւեր : Արդ, տղաս . կը խրատեմ քեզ որ այդ
հարուստ գերդատունին հետ ունեցած սիրահարական յարա-
բերութիւնդ դադարեցունես :

Տիկնոջ այս վերջին խօսքէն Հրանտ բողբոլկն ելեկարացած,
տոք ելաւ եւ շեշտելով ըսաւ . — Սիրահարական յարաբերու-
թիւնս դադարեցնեմ . ո՛չ, ո՛չ, վերգլինէ, այդ հրեշտակային
սիրտ կրող աղջիկը ինձմէ անբաժան է . ինչպէս իրանս գլխէս :

Մայրը հասաչելով պատասխանեց . — Բայց , ո՞րդեակ իմ , գործը աւելի արտուր եւ ստակալի կերպարանք մը կտանէ . լէ՛ք դժբաղդ մօրդ աղերսը , եւ համազուէ ըսածիս :

Գարձեալ ո՛չ , ո՛չ , կրկնեց երիտասարդը . եւ աւելցուց . — Ես Երանոս աղան՝ անմեղութիւնս պիտի յայտնեմ , մինչեւ իսկ ինքզինքս մտանելով արդարութեան ձեռքը :

— Բայց Երանոս աղան այնչափ դիւրազգած եւ խորաթափանց մէկը չէ , լոկ անմեղութեամբ չես կարող անոր սիրելի ըլլալ . թերեւս այդ քու անմեղութեանդ պարկին մէջ քանի մը հազար ոսկի դանուէր . այն ատեն քիչ մը խելքս կը հասնէր որ արդարանայիր . բայց հիմա որ սիրուհւոյդ սրտին մէջ կառկած մը սարդած է , այդ պատճառով անկարելի կը դանեմ :

— Մայր , անկարելին կարելի պիտի ըլլայ , ըսաւ Հրանտ . եւ սկսաւ դէպի փողոցին դուռը յառաջանալ :

Մայրը դիմաւորելով որդին՝ հարցուց . — Ո՞ր կերթաս , դաւակա : չգիտե՞ս թէ՛ այս գիշեր ուտելիք անգամ չունինք :

— Ա՛յ , մայր իմ , թող զիս . հիմա ուտելիքը մտածելու ժամանակ չէ . ես ժամէ մը կը դառնամ :

— Բայց այդ յաճախակի երթեւեկութեամբ սիրուհիդ անգամ պիտի ձանձրացնես :

— Ես արդէն ապրելէ ձանձրացած եմ . եւ ի սէր սիրուհւոյս ընդգրկած եմ աշխարհը . եւ եթէ ստուգապէս համազուիմ թէ՛ սիրուհիս ալ ինձմէ ձանձրացած է . այն ատեն ես աշխարհիս մէջ ալ գործ չունիմ . այնուհետեւ անմեղութիւնս թող իմ պատանքս ըլլայ , եւ հաստատամտութիւնս ու հաւատարմութիւնս գերեզմանիս մահարձանք . ըսաւ , ու դուրս ելաւ . եւ սկսաւ խելագարի պէս արտօրնօք Երանոս աղան ստունը երթալ :

Ճամբան մօրը յորդորները մօքին մէջ սկսաւ դարձնել . — Արդարեւ , կըսէր ինքնիրեն . մայրս իրաւունք ունի . իմ յաճախակի երթեւեկութիւնս ինձի պատիւ չի բերեր . մանաւանդ որ հակառակորդներս շատ են :

Այս տեսակ անդոհական խորհուրդներով մօտեցաւ Երանոսի տանը . տեսաւ թէ՛ Վերգինէ պատուհանն էր , ոտք եւ

լաւ դուռը բանալու , բայց ոչ ըստ սովորութեան ծիծաղաւ դէմ , այլ տխուր :

Հրանտ երկիւղածութեամբ ներս մտաւ . բայց Վերգինէի վրայ չտեսաւ այն նախկին համակրանքն ու սէրը . նոյնպէս մօրը վրայ :

Հրանտ մտաւ սենեակը :

— Հրամայեցէ՛ք , ըսաւ օրիորդը , աթոռ մը ցոյց առաւ , եւ ինքն ալ նստաւ ուրիշ աթոռի մը վրայ :

Մայրը նախ օրպիտութիւնը հարցուց եւ ապա անցեալ դէպքին վրայօք դազափար մը առնել ուղեւով , ըսաւ . — Նախ ցաւեցանք ձեր այն վիճակին վրայ . բայց յետոյ տեսանք որ շխարհացար ինքզինքնիդ ճշմարիտ ու բացայայտ փաստերով պաշտպանել . թէպէտ եւ Երանոս աղան վստահութիւնը բոլորովին վերցուց ձեր վրայէն . բայց մենք ալ անաչառ խօսելով . փոքր ի շատէ կռակած մը ունեցանք , վասն զի ձեր խոտտացած նշաններուն հետքն անգամ չը տեսանք այն կեղծ փորագրուած կիւքին վրայ :

Հրանտ , առանց տիկին Բրաբիոնի գոհացուցիչ պատասխան մը տալու , դառնալով Վերգինէին ըսաւ . — Օրիորդ Վերգինէ , դո՞ւք ալ կը հաւատաք թէ՛ ես ստած եմ , եւ թէ՛ այս գործին մէջ նիւթապէս շահ մը ունեցած եմ , խնդրեմ պատասխանեցէ՛ք :

— Պա՛րոն Հրանտ , ես այն հաւատաքը ունիմ ձեր վրայ թէ՛ դուք սուտ չէք խօսիր . եւ այս գործին մէջ շահ մը չէիք ակընկալեր , բայց ստուգութեան մասին երբեք դադափար չունիմ :

Տիկին Բրաբիոն Վերգինէի այս պատասխանին վրայ քիչ մը նեղանալով ըսաւ . — Վերգինէ . դու միայն կոյրգիւրացն կը հաւատաս Հրանտի խօսքերուն իբր պատգամ Աստուծոյ :

— Այո՛ , ինչպէս որ ընդհանրապէս մարդիկ կը հաւատան Աստուծոյ :

— Ես քիչ մը կը նեղանամ , ըսաւ մայրը , երբ ստուգեմ թէ՛ որ եւ իցէ մէկը ի վնաս կամ ի կործանումն մեր գերդաստանին կը գործէ անխնայ :

— Բայց , մայր իմ . . . :

— Ա՛յ , ո՛չ , մինչեւ իսկ երբ հայրդ ուրիշներու դէմ ի

նորապատ մեղի անգլթաբար կը գործէ . կը տեսնես շատ անգամ որ կը պատարակեմ զինքը :

— Բայց դուք չհասկցաք իմ միտքս , մայր իմ . ես ըսել կուզեմ թէ որչափ որ Հրանտ մեղապարտ վճռուեցաւ . սաւկայն դարձեալ անմեղ է եւ իր չքմեղութիւնը չկրցաւ օրինաւոր փաստերով յայտարարել :

— Բայց , աղջիկս . Աստուծոյ հաւատարու պէս մարդու մընալ կոյր զկուրայն հաւատալ , կարծեմ , բաւական տխմարութիւն է . վասն զի մարդ իր անձին անգամ վատահութիւն չունի . այսօրուան սիրածը՝ վաղը կատէ , այսօրուան օրինաւոր դատածը՝ վաղը կը դատաւարատէ :

Հրանտ տեսնելով որ իր անմեղութեանը վրայ երբեք կասկած չունի վերգինէ , ըսաւ մօրը . — Տիկին , իմ անմեղութիւնս ցոյց ապուս համար ինքզինքս պիտի յանձնեմ արգարութեան . եւ այն ատեն բնականաբար փորագրիչ հրեան ալ պիտի մատնեմ որպէս զի անմեղութիւնս հատապատէ , ալ ուրիշ միջոց չունիմ ընելու :

— Բայց կը կարծե՞ս թէ այդ կերպով ինքզինքդ պաշտպանած կըլլաս , քանի որ կեղծ կնիքի վրայ այն երկու վշիկները չեն երեւիր :

— Տիկին , եթէ հաստատելու ըլլամ , հարկաւ կնիքը պիտի պահանջուի , եւ այն ատեն դուք ալ պիտի հաւատաք :

— Բայց գիտես որ այն ատեն պիտի պատժուիս Հրանտ . ըսաւ հեկեկելով վերգինէ . կնիք մը խորդախողին կարծեմ փոքր պատիժ մը չի տրուիր :

— Ի՞նչ պատիժ որ տնօրինուի , պիտի ընդունիմ սիրով , բաւական է որ ձեր առջեւ իմ անմեղութիւնս յայտնած ըլլամ :

Այս խօսքին վրայ դուռը ուժգնակի գործուեցաւ . վերգինէ զարմացմամբ դէպի պատուհանը դիմելով նայեցաւ , թէ ո՞վ է : Եւ սրչափ մեծ եղաւ զարմանքը երբ տեսաւ թէ նորանոս աղան էր , որուն ցերեկ ատեն դառը երբեք չէր յուսար . ուստի ա՛հ ու դողի մէջ , « Հրանտ սա միւս սենեակը դնա » ըսաւ . եւ ածապարեց խմացեել խոհարարին որ դուռը բանայ :

Հրանտ սենեկէն դուրս ելաւ . եւ երկու րոպէ ետքը ծե-

րունին բարկութեամբ սենեակը մտաւ եւ բարձրաձայն գոչեց . — Կը տեսնե՞ս , կնիկ . այսօր ալ ուրիշ նոր բողոք մը ըրեր է հազար ոսկիի համար :

— Բայց չէ՞ որ այն ատեն անդորրագիր մը տուաւ թէ՛ այսուհետեւ ստակ մը պահանջելու իրաւունք չունի :

— Այո՛ , տուաւ այնպիսի ստորագրութիւն մը , սակայն անդորրագրին թուականէն երկու օր առաջ բողոքագիրը առեւտրական դատարանին մատուցուեր է . ա՛հ , ի՞նչ ըսեմ . այդ խարդախ մարդիկը իմ տունս պիտի կործանեն . պիտի սնանկացնեն զիս եւ վերջապէս պիտի մեռնեն .

Այս ըսելով Երանոս աղան , նստած տեղէն յանկարծ մէկ կողմ շրջեցաւ :

— Ի՞նչ կըլլաս . հարցուց տիկին Բրարիոն :

— Չը գիտեմ . բան մը կըլլամ , ըսաւ . ձախ ձեռքիս ուստքիս վրայ թուրութիւն մը կըզգամ , չգիտեմ թէ մահս մօտեցած է արդեօք :

Կինը հասկնալով որ իր ամուսնին կրած սրտադուշն եւ յուզմունքէն իջուածք մը տեղի կուեննար , անոր սիրտ տալով ըսաւ . — Երանոս աղա . ամենեւին հոգդ մի՛ ըներ , այս գործին ես պիտի միջամտեմ եւ ստակ մը կորզել չպիտի տամ . բայց կը խնդրեմ որ դու երբեք չբարկանաս , եւ այսուհետեւ այս գործին վրայօք հարցումներ մի՛ ըներ . գոցէ Պոլսոյ սենեակդ ալ եւ տունդ հանդիստ ըրէ :

— Ի՞նչ , սենեակս գոցե՛մ , շահու աղբիւրներս ցամքեցնե՛մ . ատ ըլլալու բան չէ՛ , կնիկ :

— Սակայն դուն ժամանակը անցուցած ես եւ չես կարող մրցիլ այնպիսի անձերու դէմ , որոնք ամէն օր գերեզմանը փորել կաշխատին :

— Հաղա Թորոս աղան որ ինէ շատ տարիքոտ է , ի՞նչ պէս կը գործէ կոր :

— Ա՛հ , ան Թորոս աղան ալ , ան Օհանն ալ պիտի կործանին . անոնք ալ իրենց գործած չարութեանց փոխարէնը պիտի ընդունին օր մը . դու անհոգ եղիր : Ուստի դարձեալ կըսեմ . գէթ ժամանակ մը դադրեցուր գործերդ , մինչեւ որ ճշմարիտ եւ հաւատարիմ օգնական մը ունենաս :

— Ի՛նչ որ ալ ըլլայ, կնիկ . ես այս տանը մէջ չեմ կարող ապրիլ . ես Օրթագիւղ պիտի հաստատեմ բնակութիւննիս այսուհետեւ ,

— Շատ աղէկ իրաւաց , ըսաւ տիկին Բրաբիոն . իմ ուղածս ալ առ է :

Երանոս ազա աւելի տկարութիւն դժգոյցով, բարձ մը ուզեց պառկելու . բայց կինը չթողուց որ քնանայ, եւ խօսցն խոհարարը դրիկեց որ բժիշկ մը բերէ :

— Ա՛հ, կնիկ, ըսաւ Երանոս ազան . ինչո՞ւ չես թողուր որ քնանամ :

— Ո՛չ, ո՛չ, չըլլար ըսաւ . ցերեկ ատեն քնանալը աղէկ բան չէ . նստէ խօսինք քեզի հետ, աղէկ որ եկար . այսօր իմ ալ սիրտս սովորականէն աւելի կը նեղուի : Օրթագիւղ երթալ հաստատուիլ կուզես, այնպէս չէ՞ :

— Այո՛, այս տեղ ալ դժոխք կերեւայ ասջքիս . ինծի այնպէս կը թուի որ եթէ ասկից ձգել փախչելու ըլլամ, ամէն փորձանքէ ազատ կ'ըլլամ . սակայն սա 1000 ոսկիին խնդիրը ի՞նչպէս պիտի լուծուի արդեօք : Եթէ այս հազար ոսկին ալ տուժելու ըլլամ, դիտցած ըլլաս որ գործս լնացած է . դիտե՞ս ամէն մարդ որ ինծի պատիւ կընէ, զիս կը յարգէնէ, ստակիս համար է . եթէ ծանօթներս ու բարեկամներս խմանան որ սնանկացեր եմ . տավուլ զուճնալով սնանկութիւնս պիտի չնորհաւորեն :

— Ի՞նչու, ի՞նչ փնաս հասուցած ես այդ մարդոց :

— Է՛յ, մալիւմ ա . Աստուծոյ սրտին կիւճ չիգայ, ես մէկու մը հինգ բարայի խեր ըրած չեմ .

— Բայց փնաս ալ ըրած չունիս, կարծեմ :

— Ատոր տարակոյտ չկայ . սակայն մարդիկ ունեւորներէն կըստասեն . ի՞նչ պիտի ըսես . այսու ամենայնիւ զարմանալին ան է որ ունեւորն ալ կըստասէ ունեւորէն՝ չունեւորին սիրոյն համար :

— Երանոս ազա, սիրելիս, մարդ մը իր կրցածին չափ օգնելու է կարօտներուն . աշխարհի օրէնքն այսպէս կը պահանջէ :

Այս խօսակցութեամբ բաւական ժամանակ անցուց մինչեւ որ բժիշկը եկաւ :

Երանոս ազա զարմացաւ մտաց, երբ բժիշկը սենեակէն ներս մտաւ . եւ բարեւելէ յետոյ հարցուց . — Ո՞վ է հիւանդը :

— Մեր երանոս ազան, ամուսինս, պատասխանեց տիկին Բրաբիոն . քիչ մը անձնական տկարութիւն կըզգայ իր վրայ :

Երանոս ազա թէպէտ եւ նեղացաւ, բայց բժիշկը եկած էր արդէն . ուստի գէթ դեղի ստակը քիչ վճարելու մտքով, իր հիւանդութիւնը թեթեցնել ուզեց եւ ըսաւ բժշկին կեղծ ժպիտով մը . — Ներեցէ՛ք, տղթոր էֆէնտի . հիւանդութիւնս չնչին բան մըն է . քիչ մը ձախ ձեռքիս ու ոտքիս վրայ թուլութիւն մը կըզգամ . կիները ընդհանրապէս երկչոտ ըլլալով, փոքրիկ տկարութեան մը երկիւղալի կասկածներ կընեն . խօսցն բժշկի մը օգնութեան դիմելը իրենց սովորութիւն եղած է :

— Ուրեմն, ըսել կուզէք թէ բժշկի պէտք չունիք, ըսաւ տղթորը եւ Երանոս ազաի բազկերակը զննելով իր խօսքը շարունակեց . Այո՛, այո՛, վստահ եմ թէ այսօր բժշկի պէտք չունիք, վստահ զի հիւանդութիւննիդ իր առաջին քայլը առած է . վաղը քիչ մըն ալ աւելի առաջ երթալով, միւս օրը իր ազդեցութիւնը պիտի ներգործէ սպառնալեօք : Այն ատեն մեք ալ անոր հետ մաքաւելու համար՝ դեղորէից ամենէն զօրաւորագունին կը դիմենք . առանց մտածելու թէ այս երկու մաքաւիչ զօրութեանց պիտի զօրէ՞ արդեօք մեր հիւանդը տուկալ : Եւ յետոյ բժիշկը հարցուց թէ գլխու պտոյտ մընալ ունի՞ք :

— Այո՛, ըսաւ Երանոս զարմացմամբ եւ յարեց . դուք ուսկի՞ց հասկցաք, տղթոր էֆէնտի :

-- Այս արհեստը ուսումնասիրելու համար առ նուազն քսան տարուան կը կարօտիք, ըսաւ . եւ սկսաւ դեղագիրը գրել :

-- Անոր համար այդչափ սուղ են դեղերն ու բժշկի մը այցելութեան իրաւունքը : Այսու ամենայնիւ ես փառք Աստուծոյ դեղի այնչափ պէտք մը չունիմ . սրտիս մէջ անհանգստութիւն մը չեմ զգար . ես այս տարիքս եկած եմ, բժշկի դեղ առած չունիմ . ինչպէս որ ըսի, հիմա միայն քիչ մը թուլութիւն կըզգամ ձեռքիս ու ոտքիս վրայ :

Տղթորը քթին տակէն խնդալով ըսաւ . — Սրդէն ես ալ այդ թուլութեան համար դեղ մը կը գրեմ, որպէս զի բո-

լորովին առողջանաք : Ի վերջոյ , կնոջը դառնալով , կրկնեց . այս դեղէն երկու ժամն անգամ մը մէկ ապուրի դգալ անպատճառ պիտի խմէ , որ ջիւղերը կրկին զօրանան , երբեք չպիտի բարկանայ եւ ճամբայ չպիտի քայլէ . մինչեւ պարտեզ երթալ գալու արտօնութիւն կրնամ տալ , եւ ոչ աւելի :

— Է՛յ , տղթոր էֆէնտի , չքսէ՞ք . զիս տանս մէջ պիտի բանտարկէ՞ք , ըսաւ հիւանդը :

— Ալ կամքը ձերն է , պատասխանեց բժիշկը , եւ ոտք ելաւ մեկնելու :

Կինը ետեւէն վար իջնալով հարցուց թէ՛ վտանգաւոր բան մը ունի՞ :

Տղթորը . — Հիմակուհիմա վտանգ չերեւիր , բայց ամէն կերպով զգուշանալու էք ըսաւ , ու մեկնեցաւ :

Տիկին Բրաբիտն դեղագիրը դեղագործին զրկեց որ պատշաճ գեղերը , ինքը վեր ելաւ եւ Հրանտի կեցած սենեակը մտաւ . — Պա՛րոն Հրանտ . փաստաբան Ռափայէլ էֆէնտին կը ճանչնաք . ըսաւ :

— Այո՛ , կը ճանչնամ . եւ քանիցս մեր վաճառատան գործերը այն կարգադրած է :

— Ուրեմն , այս վայրկենիս դնա՛ դտիր այս իրիկուն անպատճառ զինքը տեսնել կուզեմ : Երկուքնիդ միատեղ եկէ՛ք . բայց զգուշութեամբ , որպէս զի Երանտս աղան չխնանայ ձեր փաստաբանի հետ հոս դալը :

— Շատ աղէկ , անհող եղիք . ես այս իրիկուն կը բերեմ Ռափայէլ էֆէնտին . ըսաւ , ու հեռացաւ տունէն :

Ի Բ

Հրանտ կայծակի արագութեամբ գնաց Ռափայէլ էֆէնտի գրասենեակը եւ տեսնուեցաւ : Փաստաբանը սրտուիրեց որ իրիկունը ժամը երկուքին (ը . թ .) սպասէ զինքը սրճարանը . եւ միտտեղ կերթան տիկին Բրաբիտնի բնակարանը :

Երիտասարդը ելլելով փաստաբանի գրասենեակէն , ուղղակի տուն դարձաւ եւ եղբուրները պատմեց : Մայրը ընդ-

երկար մտածելէ յետոյ ըսաւ տղուն հառաչելով . — Ես այս ճախող գործերուն վախճանը աղէկ չեմ տեսներ , ոտքով գլուխով այդ վտանգաւոր գործերուն մէջ ես մտեր . դուն աղօթէ Աստուծոյ որ խելքիդ կարեւորութիւն տուող չկայ . ապա թէ ոչ մինչեւ ցարդ բանտին դռները համբուրած էիր :

— Ես քեզի ի՞նչ ըսի , մայրիկ . բաւական է որ անմեղութիւնս յայտնուի . բաւական է որ ամենքը համոզուին թէ ես ի նպատտ Երանտս աղախ գերդաստանին գործեր եմ . երբ այս բաղձանքս կատարուի , գիտցած ըլլաւ որ երջանիկ պիտի ըլլամ միշտ :

— Ա՛հ , այդ աղայական երջանկութիւնը քեզի սնունդ չըհայթայթէր . օրուան հացդ մտածէ , ո՛րդեհակ :

— Իմ հացս միշտ պատրաստ է , մայր . պատուովս երջանիկ պիտի ըլլայի , զրգարառութեամբ ապերջանիկ եղայ . ապագաս ապահովել ուղեցի եւ ներկայս խիստին կորանցուցի : Ո՛հ , հիմա այսչափ զրկանքի ի՞նչպէս անտարբեր մնամ :

Դժբաղդացած մայր եւ որդի սոյն տեսակ վիճաբանութեամբ բաւական ժամանակ անցուցին . եւ օրը իրիկուն եղաւ : Կիչերային խաւարը հազիւ սկսած էր թանձրանալ , Հրանտ կտոր մը չոր հաց սաղ ջուրը թափխելէ եւ ուտելէ յետոյ՝ անհամբեր գնաց սրճարանը ուր ժամադիր եղած էին Ռափայէլ էֆէնտիի հետ միանալու :

Ժամը մէկ ու կէս էր . այս հաշուով կէս ժամալ սպասել ստիպուած էր , ուտտի գնաց նստաւ սրճարանի մէկ անկիւնը :

Փաստաբան Ռափայէլ էֆէնտի Երանտս աղախ կնոջ ազգականներէն էր . Երանտի կողմութեանն ու անքաղաքութեանը պատճառով չէր յաճախեր անոր տունը :

Ռափայէլ էֆէնտի ուղղամիտ եւ անաչառ մարդ մըն էր . իրեն յանձնուած դատը կը պաշտպանէր ամէն անձուիրութեամբ . ամէն մարդ իր ուղղամտութեանը համար կը սիրէին ու կը յարգէին զինքը . ամէն ազգի աղքատները կը գիմէին այս անձնաւորութեան որ իրենց կողմէ դատերնին պաշտպանէ : Սիրով կընդունէր այդ աղքատ մարդոց դատը եւ առանց վարձատրութեան մարդասիրաբար պաշտպանելէ յետոյ՝ այլ եւ այլ դատական ծախքերն ալ իր կողմէ կը հոգար :

Երանոս աղաի կինը որչափ որ հրաւիրած էր Ռափայէլ էֆէնտին, բայց կասկած ալ ունէր թէ պիտէ դա՞յ արդեօք, վասն զի շատ տարիներէ ի վեր ճշմարիտ բարեկամ մը կամ ազգական մը Երանոս աղաի դուռը չէր բաղխած : Ահաւասիկ տիկին Բրաբիոն այս կասկածներով պաշարուած, փողոցին դուռը կըսպասէր, երբ յանկարծ դրան առջեւ կանգնեցան Հրանտ եւ Ռափայէլ էֆէնտի ու բարեւելէ ետքը՝ անձայն եւ անշուշտ ներս մտան ու առանձնացան սենեակ մը :

Տիկին Բրաբիոն անոր որպիսութիւնը հարցնելէ յետոյ, սկսաւ մի առ մի պատմել իր ամուսնին գլխէն անցած դէպքերը :

Փաստաբանը երկար ատեն մտիկ ընելէ ու խորհելէ յետոյ, դարձաւ Հրանտին ըսաւ . — Եթէ ձեր եւ տիկինը պատմածները ճշմարիտ են, դուք երկուքէն երեք տարի բանտարկութեան պիտի դատապարտուիք . նոյնպէս Օհան երեք տարի . անիկա աւելի կը տուժէր եթէ հայր չուեննար, եւ դարձեալ այդ կնիքը փորագրողն ալ պատիժի ճիրաններէն չպիտի կրնայ ազատիլ :

— Ես իմ մասին պատրաստ եմ անորինուած պատիժը կրելու :

— Տիկինը դարձաւ փաստաբանին ու ըսաւ . — Հարկաւ ի վերջոյ այս տղան փրկելու միջոցներուն վրայ կը խորհիք :

— Չեմ կրնար վճռական պատասխան մը տալ ըսաւ փաստաբանը : Եթէ կուգէք, տիկին . այս կերպով վաղը Օհանի բողոքագիրը կը նայիմ եւ ինքզինքս փոխանորդ կարգելու համար գիր մը կը պատրաստեմ . թող Երանոս աղան իր կնքովը կնքէ եւ այս պարոնին ձեռքով ինծի զրկէ :

— Ուրիշ առաջարկութիւն մը ունի՞ք ընելու . հարցուց տիկին Բրաբիոն :

— Հիմակուհիմա ուրիշ որ եւ է առաջարկութիւն չունիմ, տիկին . երբ վերջանայ այս խնդիրը, այն ատեն կը պարտուորիք վճարել ծառայութեանս փոխարէնը :

Տիկինը, ամենայն յարգանքով շնորհակալ եղաւ :

— Ուրեմն վաղը կէս օրէ ետքը պարոնը թող գայ գրասենեակս, որ փոխանորդագիրը յանձնեմ իրեն . եւ իրիկունը կը զրկէք ինծի :

— Ծատ աղէկ . ձեր բոլոր պատուէրը փութով պիտի կատարուի . դուք անհող եղիք, ըսաւ տիկինը :

Ռափայէլ էֆէնտի եւ Հրանտ դարձեալ անձայն տունէն դուրս ելլելով մեկնեցան :

Ի Գ

Երանոս աղաի հիւանդութիւնը օր ըստ օրէ կը սաստկանար, եւ հակառակ բժիշկներուն ջանքերուն ու դարմաններուն, ուղեղն ալ սկսաւ տկարանալ : Իր բարձրագիւր եւ ծովահայեաց բնակավայրը՝ որ շատ գեղեցիկ էր . հովասուն եւ զրօսեցուցիչ, իրեն համար տանջանարան մը եւ կամ դժոխք մը կերեւէր : Ուստի բնակութիւնը փոխադրեց Օրթագիւղ . իրեն այնպէս կը թուէր թէ նախկին բնակավայրը թշնամիներէ պաշարուած էր . իսկ հոս ազատ շունչ եւ ոգեւորութիւն պիտի առնէր :

Իր գանձելի մուրհակները անընդհատ միտքը կըբաղեցնէին . անոնց համար անդադար սիրտ եւ հոգի կը մաշեցնէր :

Հրանտ Երանոս աղաէ գողտնի այդ սուակները կը հաւաքէր ու բերելով տիկինը կը յանձնէր : Վերջապէս, դժբաղդ երիտասարդը կատարեալ հաւատարիմ գործակատար մը եղած էր : Ամէն բան ի կարգին կընթանար :

Տիկին Բրաբիոն, որ վստահ էր Հրանտի հաւատարմութեանը, ըսաւ օր մը . — Տղաս . երեք շաբաթի չափ կայ որ Ռափայէլ էֆէնտիէն լուր մը առած չեսք . արդեօք մեր գործը ի՞նչ վիճակի մէջ է . պիտի տուժենք թէ չահինք :

— Այդ մասին ալ ձեզ կը վստահացնեմ, տիկին . որ գործը կարգին է, չպիտի տուժէք բնաւ . հաւատացէք որ անձս կը զոհեմ Երանոս աղաի պատիւը վերստին տեղը բերելու համար : Ես բարեոյն դէմ բարիք եւ չարին չար հատուցանել ուզեցի, բայց չըյաջողեցայ . Աստուած այսպէս տընօրինէր է եղեր : վաղը իմ յայտարարութեամբ եւ ճշմարիտ փաստերովս ամէն ինչ պիտի յայտնուի . այս մտախն իմ հաւատքս մեծ է :

Մայր ու աղջիկ Հրանտի այս խօսքերը ուշադրութեամբ մտիկ կընէին :

Կինը մտադրազ էւ Վերգինէ յուզուած էր :

Վայրկենական լուսթիւն մը տիրեց երեքի մէջ . եւ սալա տիկին Բրաբիոն հառաջանք մը արձակելով ըսաւ . — Տղաս . դատին ընթացքին եւ մանրամասնութեանցը վրայ երբեք դաւախար չունիս :

Բարեսիրտ Հրանտ ձակաւը բարձրացնելով, ուրախ զուարթ պատասխանեց . — Ամէն մանրամասնութեանցը տեղեկութիւն ունիմ, տիկին . փաստաբաննիդ սքանչելի ուղղամիտ եւ աննաման մտքը մըն է . այս դատը մինչեւ ցարդ կաւարտէր սակայն ինչպէս բացատրեմ . փաստաբանս եւ արդարադատ դատաւորները կը ջանան որ զիս պատիժէ ազատեն . հիմա գործը մանրակրկիտ քննութեան ենթարկուեցաւ : Օհան, այդ վատասիրտ մարդը՝ պրծելու նրբանցք մը չգտնելով, զիս մատնեց :

— Բայց ի՞նչպէս եղաւ :

— Դատարանը փոխանակագրին բուն կնիքը եւ Օհանի շինել տուած կեղծ կնիքը բազդատութեան դրաւ . եւ վերջնապէս տարբերութիւն մը գտնելով՝ կեղծ ըլլալը հաստատեց :

— Ի՞նչ տարբերութիւն . հարցուց տիկինը արտասովոր հետաքրքրութեամբ :

— Կեղծ կնիքին յղութիւնը մաքուր եւ գիրերը յստակ . վերջնապէս առաւել ճաշակաւոր . խի բուն կնիքը կոշտ . եւ գրերն հաղիւ ընթեռնիլ, Օհան ստիպուած, բերանովը խոստովանեցաւ դատարանի առջեւ . երբ փորագրիչը սրահանջեցին . այն ատեն Օհան իմ անունս տուաւ, այն վայրկենին որ ներկայ էի՝ այնչափ ուրախացայ, տիկին . որչափ որ Վերգինէն ինծի տալու խոստացած օրերնիդ :

— Բայց այս լուրը ձեզի համար դուժկան մըն է, կարծեմ . ըսաւ տիկին Բրաբիոն :

— Գուժկան, ի՞նչ դուժկան . ո՞չ սպաքէն 1000 ոսկւոյ պահանջը ջնջուած է, ո՞չ սպաքէն հաւատարմութիւնս ստուգուելով պիտի ըսէք թէ Հրանտ երանոս ազաի դերդաստանին արժանաւոր փեսայ մըն էր : Ա՛հ Վերգինէ, այսօր ես կը

բաժնուիմ քեզմէ . բայց ո՞վ գիտէ, գուցէ տարիէ մը կամ երկու տարիէն ազատ արձակուիմ . ա՛հ այս երկար օրերուն չարքին մէջ պիտի յիշե՞ս զիս արդեօք թէ բոլորովին պիտի մոռնաս :

Վերգինէ արտասուածոր աչքով պատասխանեց . — Քեզ մոռնա՛լ, քեզ չը յիշե՛լ . միթէ կարելի՞ բան է Հրանտ . իմ հաւատքս մեծ էր արդէն վրադ . եւ փառք Տիրոջը՝ կրնամ պարծիլ այսօր թէ երբեք չսխալեցայ, բայց այդ երկար օրերու եւ ամիսներու սրտատանջութեանը պիտի գորեմ տոկալ ես : Ա՛հ, ո՛չ, ո՛չ, պաշտելիդ իմ Հրանտ . երբ դառնաս ու զիս չգտնես, ամենեւին մի՛ վշտանար : Քու սիրոյդ համար անձս գո՛հ սրտով պիտի զոհեմ . եւ դու երբ ինքզինքդ ազատ գտնես, եկուր գերեզմանիս վրայ, արցունքդ թափէ, սրգաւոր սրտիս հողը արցունքովդ ողողէ : Ի՞նչ ընենք, Աստուած այսպէս տնօրինեք է եղեր :

— Այսչափին ալ գո՛հ ըլլանք, ըսաւ Հրանտ . Քու ծնողքդ զիս յանդիմանեց, վրաս կասկածներ յայտնելով, ծնողքս զիս պախարակեց՝ ապագաս վտանգաւոր տեսնելով . նախանձոտ երիտասարդներ, առ երեսս ինքզինքնին քու հօրըդ բարեկամ ձեւացնող սրիկաներ զիս կուսիով ու գաւազանով հարուածեցին, ժողովուրդին առջեւ փողոցի մէջ հըրաւ պարակի վրայ խայտառակեցին զիս : Քու հօրմէդ 400 ոսկի խլեցին անիրաւաբար . մինչեւ խի քեզ խլել՝ յափշտակել ու զեցին ծնողքիդ գրկէն : Ես այս ամենուն կուրծք դրի, համբերեցի, հիմա չպիտի կարենամ մէկ տարի ալ համբերել, սիրեցեալդ իմ՝ Համբերէ՛ դու ալ, եւ մի կարծեր որ այս սերտ սիրով միացած երկու սիրտերը պիտի բաժնուին իրարմ :

Վերգինէի մայրը, որ այս խօսակցութեանց ներկայ էր, զանոնք միտիմարելով ըսաւ . — Մի՛ վճատիք երկուքդ ալ, Հրանտ . քաջայոյս եմ որ անդրդուելի է քու ուխտդ, նոյն հաստատամտութիւնը քու վրադ ալ կը տեսնեմ Վերգինէ . դու ալ զխոցած եղիր որ մինչեւ մէկ տարի կրնամ համոզել հայրդ, մէկ խօսքով կը վստահացնեմ ձեզ թէ ընդհուպ երկուքնիդ ալ երջանիկ պիտի ըլլաք :

— Ուրեմն հոգիով ու սրտով շնորհակալութիւնս կը յայտ-

նեմ քեզի , ազնիւ արկին . կաղաչեմ նաեւ որ թշուառ մայրիկս մաքէ չհանէք , ըստ կարի օգնէք անոր . նիւթապէս տկար է եւ մինչեւ խի փոքրիկ առօրեայ անունգի կարօտ : Մնաք բարով արկին , մնաս բարով Վերգինէ , ըսաւ :

Քանի մը վայրկեան երկուքը մնացին լուռ դրկախառնութեան մէջ , եւ յետոյ բաժնուելով մեկնեցաւ Հրանտ ախար տպաւորութեան ներքեւ :

Հրանտի վերջին հրաժեշտը տալէն անցած էր երկու օր , եւ տակաւին Ռախայէլ էֆէնայի չէր երեւցած : Վերգինէ կուգէր անոր վրայօք տեղեկութիւն առնել . մասնաւորապէս խոհարարին ալ աղաչէր էր՝ ստոյգ տեղեկութիւն մը առնէ , թէպէտ եւ հակառակորդներուն կողմէն խորհուրդ կը տրուէր տիկնոջը որ դիտաւորութիւնը փոխէ դատապարտուած մարդու մը նկատմամբ :

Երրորդ աւաւտունն երբ խոհարարը դուրս կելլէր , տեսաւ հեռուէն այն երկու երիտասարդները որոնք կրանտս ազալէն մեծ պատիւ գտած էին : Վերջապէս դէմ առ դէմ եկան . խոհարարը յարգանքով գանոնք բարեւեց , եւ անոնք ալ նոյն կերպով բարեւը առին :

Թովմաս քաղաքավարութեամբ հարցուց Երանտս աղախորսութիւնը . խոհարարն ալ հետեւեալ պատասխանը տուաւ . — Դուք անձանօթ եւ ստորադաս անձնաւորութիւն մը չէք . ձեզի պէս պատուաւոր անձերու հետ միշտ կը փախաքինք տեսակցիլ :

— Մեծապէս շնորհակալ եմ , թէպէտ եւ այդ պատիւին արժանացած չեմք , սակայն դիտենք թէ անարժաններն ալ կը յարգէ կը քաջալերէ . եւ այդ մարդուն բարեսրտութենէն չէ՞ր որ խաբուեցաւ եւ Հրանտի պէս սրիկայի մը բացած փոսը գլորեցաւ . եւ գիտէ՞ք որ ինքն ալ վերջապէս դտաւ իր պատիժը :

— Ի՞նչպէս , հարցուց խոհարարը անհամբեր :

— Տեղեկութիւն չունի՞ք :

— Ո՛չ , փաստաբանը տակաւին տեղեկութիւն մը չը հասցրդեց :

— Ուրեմն , եթէ կը հաճիք , այս կողմերը սրճարան մը

նստինք , ըսաւ Թովմաս խնդալով . եւ ես հակիրճ պատմեմ քեզի եղելութիւնը :

— Եստ աղէկ , ըսաւ խոհարարը . եւ գնացին Օրթապիւղի ծովափի մօտ սրճարան մը նստան :

Նախ խոհարարը խօսքի սկսելով . — Ե՛ղբայր , մենք վերի վերոյ եղելութիւնը խնայանք . հիմա օրիորդը , ինչպէս որ գիտէք , Հրանտի վրայ լուր մը առնելու համար շատ հեռաքրքիր է , ուստի անոր վրայօք կուղեմ տեղեկութիւն մը առնուլ :

— Ահաւասիկ , ես ալ կրկնեց Թովմաս , Հրանտի վրայ պիտի խօսիմ : Դատարանը՝ ուր ներկայ էինք , Հրանտ եօթը տարի բանտարկութեան դատապարտեց հետեւեալ առարկութիւնը ընելով . նկատելով որ այս տղան փորագրել տուած է խարդախուած կնիք մը . այս պատճառով յանցանքի մեծ մասը անոր կը վերագրուի :

Թովմաս , այդ անգութ օրիկան կը խեղաթիւրէր վատաբար . դատարանը երկու շաբաթ բանտարկութեան վճիռ տուած էր Հրանտի . խի Օհանի երեք տարի , ահա առ էր ճշմարիտ եզրակացութիւնը :

Խոհարարը այս խեղաթիւրուած լուրը առնելէ յետոյ մնաք բարովը դրաւ , ապա կերակուրի վերաբերեալ պէտքերը հոգաց ու դարձաւ տուն :

Դժբաղդ աղջիկը որ անհամբեր լուր մը առնելու կսպասէր , երբ տեսաւ թէ խոհարարը տանը դուռնէն ներս կը մտնէր , իսկոյն զինքը դիմաւորելով ըսաւ . Արիւսկոս ախար , արդեօք Հրանտի վրայ լուր մը ապի՞ր :

Այո՛ , օրիորդ , պատասխանեց խոհարարը , բայց աղէկ լուր մը չըլլալուն համար , պէտք չէ որ ինէ իմանաք :

Վերգինէ Արիւսկոս ախարի այս խօսքին վրայ աւելի հետաքրքրուելով բռնեց անոր օձիքէն եւ ըսաւ . — Ո՛չ , ո՛չ , անկարելի է , մինչեւ որ չըսես , չպիտի թողում որ խոհանոցը երթաս . քեզի վերաբերեալ բան մը չկայ . ես անհամբեր կըսպասեմ ստոյգ տեղեկութիւն մը առնելու . բարի եւ թէ չար պէտք է որ ըսես :

Խոհարարը կակաղելով պատասխանեց . — Բայց օրիորդ , եթէ . . . :

Վերգինէ այս կցկտուր խօսքերուն վրայ զայրացած , սխտի բն՞ս թէ ոչ , գոչեց սպառնալիքով :

Կիրակոս ախար ճարահատած բերնէն թռցուց . — Հըրանտ եօթը տարի բանտարգելութեան դատաւարտուեր է : Այս ըսելով մէկ ակնթարթի մէջ խոյս տուաւ դէպի խոհատունը եւ սկսաւ կերակուրի պատրաստութեամբ զբաղիլ :

Վերգինէ եօթը տարին խնացածին պէս , գլխուն մազերը ցցուեցան . ջղածգութիւն մը եկաւ վրան , եւ ալ ինքզինքը չկարենալով զսպել : ա՛հ , գոչեց եւ երեսի վրայ ինկաւ մարմարէ քարերուն վրայ : Հայրն ու մայրը այս աղմուկը լսելով , վար վազեցին եւ տեսան որ Վերգինէ մարած ինկած էր , ա՛մէն ջանք ըրին որ զինքը ուշաբերեն . մայրը ողբալով օգնութիւն եւ դարման կը խնդրէր . հիւանդոտ հայրը ձեռքը ճակտին կը զարնէր մեռած կարծելով աղջիկը :

Օրիորդի այս անզգայութիւնը գրեթէ քառորդ ժամուշափ տեւեց . եւ սպա սթափիչ դեղերու միջոցով հազիւ կրցան ուշաբերել . եւ վերցնելով քարերուն վրայէն տարին իր սենեակը եւ անկողինն մէջ պառկեցուցին : Գողջածն հայրը մօտենալով աղջկան մահճակալին անընդհատ կը հարցնէր . — Աղջիկս , ի՞նչ եղար , ի՞նչ պատահեցաւ քեզի :

Վերգինէ բացաւ աչքերը , եւ , փոխանակ պատասխանելու , սկսաւ խնդալ եւ երկար ատեն խնդալը շարունակեց :

Մայրը , որ խոհարարէն խնացած էր եղելութիւնը . կը ջանար մխիթարել անիկա . բայց ի զուր , վասն զի աղջիկը դժբաղբաբար սեւամաղձ (hypochondrie , գարա սէվտա) է բռնուած էր եւ դարմանի կը կարօտէր :

Նոյն վայրկեանին երկու բժիշկներ կանչուեցան , որոնք հիւանդը գննեցին եւ պէտք եղած դեղեր տալով մեկնեցան , խափա պատուիրելով որ երբեք օրիորդը առանձին չլիթողուն , որպէս զի անպատեհութիւն մը չզրտասնելու համար :

Այս ատենակ ինքնախօսութեամբ կը հայէր կը մաչէր . որչափ որ անոր դառնաղէտ սիրտը մխիթարիչ խօսքերով ամուքել կուզէին այնչափ առաւել կը զայրանար , կը բորբոքէր եւ այդ սիրելիներու երեսները անգամ տեսնել չէր ուզէր : Կեանքըս , սէրս ու երջանկութիւնս կըսէր , հազար օսկիի փոխաւ

Ի Դ

Տիկին Բրաբրին դասէն տեղեկութիւն մը առնելու նպատակաւ քանիցս լուր զրկած էր փաստաբանին : Ռափայէլ էֆէնտի ամէն անգամ պատասխանած էր թէ դատարանի վերջին վճռագրին կըստասեմ :

Իսկ դժբաղբ Վերգինէի հիւանդութիւնը որ գրեթէ անդարմանելի էր , անյուսուցեան դատաւարտուած էր խեղճ աղջիկը . կուրծքին մէջ ահռելի ալեկոծութիւն մը եւ մտքին մէջ գուժաբեր լուրերու արձագանդ մը անընդհատ կը տանջէին խեղճը , գիշերն արթուն , ցերեկն արթուն , գողցես ա՛նքերեւոյթ զօրութեանէ մը սարսափահար կը տանջուէր , եւ ինքզինքէն իսկ փախչիլ կուզէր :

Բոլորովին փոխուած էր նախկին Վերգինէն . մերթ դէպի պատուհանը . մերթ դէպի ջրհորը եւ մերթ դէպի կրակը կը դիմէր . աղախին մը յատկացած էր անդադար հսկող անոր ամէն վտանգաւոր շարժումներին . բայց ինքը աշաւուրջ հսկողութենէն ձանձրացած կը գոչէր . — Մայր իմ , ի՞նչ է այս հսկողութիւնը . իմ քայլերս անդադար դէպի գերեզման կարշաւեն եւ կեանքս անյուսուցեան առանձնութիւն կը խնդրեն , արիւնով շաղախած հողեղէն պատանքս մարմինս կղգեստաւորէ եւ մահը իր յողթական ձեռքը գլխուս վրայ կարկառած հողիս հանգիստը կը կարդայ . եւ դուք այս վերջացած կեանքէն յարութիւն կըստասէք տակաւին :

Ահաւաստի երկինքը կը մթադնի , երկիրը ոտքերուս ներքեւ կը խուսի . ա՛հ չկայ ինձի օգնող մը . Հրանտ . Հրանտ . արդեօք ո՞ւր առանձնացած կը տառապիս , ա՛հ իցիւ թէ սենեկիդ պարունակող օդը գրկէի եւ այնպէս հող դառնայի :

Այս տեսակ ինքնախօսութեամբ կը հայէր կը մաչէր . որչափ որ անոր դառնաղէտ սիրտը մխիթարիչ խօսքերով ամուքել կուզէին այնչափ առաւել կը զայրանար , կը բորբոքէր եւ այդ սիրելիներու երեսները անգամ տեսնել չէր ուզէր : Կեանքըս , սէրս ու երջանկութիւնս կըսէր , հազար օսկիի փոխաւ

նակեցիք . երկու կեանք վաճառեցիք հազար ոսկի շահելու համար , ու շահեցաք . հիմա այդ հազար ոսկիով ձեր ծնգեալ ծիրեալ երիթացեալ կմայնները պարարեցէք , մեր մարմնին վրայ վառուած . մեր մարմնովը պարարտած հողին արգասիքով ձեր մարմինը սնուցէք . կաշառեցէք կեանքը , որպէսզի մահուան բարեխօսէ կամ ի հարկին պատուար մը ըլլայ անոր դէմ . բարձրացուցէք Նարուզոյթոնոսորի նման ոսկեղէն կուռք մը եւ անոր առջեւ ծնրադիր՝ խունի ծխելով երկրպագեցէք . ըրէք , որչափ որ ոսկին ձեր անդժուրթեանը լայնարձակ սահման դժած է :

Գնաց Հրանտ , եւ երթալու վրայ է՝ Վերգինէն . ձեր արգանդին երկունքը , այն ատեն ամայացած այս տանը մէջ հանդիստ կեանք վարեցէք . ձեզ ձանձրացնող , ձեր դուռը դարնող մէկը չպիտի դանուի . մինչեւ որ մահը գայ եւ այս տունը ձեր գլխուն վրայ փլցնէ . եւ ձեր ոսկիներն ալ ձեր ազգականներուն բաժանելով եւ անոնք ալ ձեր դերեզմաններու վրայ անէծքներ թօթալելով՝ սպառեն ու յագեանան :

Շատ անգամ ալ այս տեսակ դանդաղաներէ ետքը կսկսէր գառանցել :

Տիկին Բրաբիոն իր ամուսնէն դադանի բժիշկներուն եւ դեղագրերուն ստակ չէր խնայեր . բայց բոլորը անօգուտ : Լոգանքի որոշում ըրած էին բժիշկները . ուստի լողարան մը առնուեցաւ . Վերգինէն երբ դանէն ներս մտնելը տեսաւ խընդալով ու ծափահարելով ըստ .

— Ահաւասիկ այդ իմ դագաղս է . եւ կամ դագաղիս մէկ նշանարանը , եւ դառնալով մօրը կը հարցնէր . մայր իմ , երբ պիտի հանգչիմ այս դագաղին մէջ : Մայրը որ միշտ կը ջանար այս տեսակ խօսքերէ դուռչացնել :

— Զաւակս , մտցիր այդ խօսքերը , կըսէր արտասուած թոր հառաչելով . այս ամէնը քու անձիդ առողջութեանը համար է . ա՛հ , մտքէդ անգամ չանցնի՞ր թէ ո՛րչափ կը սիրեմ քեզ , եւ քու ապաքինութեանդ համար ոչ թէ ոսկի՝ այլ կեանքըս անգամ զոհելու պատրաստ եմ :

Առաջին անգամն էր որ Վերգինէն իր մօրը խօսքերուն զուարթ դէմքով հետեւեալ պատասխանը տուաւ .

— Մի՛ լար , մայր իմ , մի՛ լար . արդարեւ ձեզ բաւական վշտացուցի . այսօր վաղը երթալիք հիւր մըն եմ . կամքդ կը կատարեմ , վաղը կը լուացուիմ այդ լողարանին մէջ , եւ բժշկին հրամայած դեղերն ալ կը գործադրեմ . ալ ըսելիք ունի՞ս , թո՛թովեց , եւ մօրը արտասուած թոր աչքերը համբուրեց :

Մայր ու ազլիկ քանի մը բոսկ լուս գրկախառնութեան մէջ մնալէ յետոյ , բաժնուեցան իրարմէ . ազլիկը սկսաւ դառնալէս արցունք թափել : Արցունքը աւելի նպաստաւոր է Վերգինէնի քան միւս դեղերը :

Նոյն գիշերը Վերգինէն հանդիստ քնացած էր մինչեւ առաւօտ ի դարմանումն ամենքին : Հրանտի բացակայութենէն ի վեր՝ ամբողջ երկու շաբաթ անցած էր . եւ այդ օրերուն վերջին գիշերն էր , եւ առաւօտուն հանդիստ ու հանդարտ ելած էր անկողնէն առանց տարօրինակ ցոյցերու ըստ նախկին սովորութեան : Հիւանդուհին գնաց երեսը լուաց եւ ազախինին հրամայեց որ սուրճ մը եփէ . յետոյ հօրն ու մօրը նստած սենեակը մտնելով՝ անոնց ձեռքը համբուրեց :

Հայրը այս առաւօտ Վերգինէն ուրախ եւ տարբեր տեսնելով , եւ խնդութենէն չկարենալով ինքզինքը զսպել , իր քովը նստեցուց . — Ազլիկս , քեզ այսօր քաջառողջ կը տեսնեմ , այնպէս չէ՞ . այսօրուան զգացած ուրախութիւնս անբացատրելի է . կը յուսամ թէ այն չարատանջ եւ անողբելի վիշտերդ ալ անհետացան :

— Այո՛ , յարեց մայրը , այսօր ալ իր կամքովը լողարանին մէջ պիտի լուացուի . տես երկու անգամ լուացուելովդ առողջացար , եւ այսպէս օր ըստ օրէ զգալով իր ապաքինութիւնը՝ ալ զանցառութիւն չպիտի ընէ դեղերու գործածութեանը :

— Ա՛հ , մեր աչքին լցսը , մեր կեանքն եւ Վերգինէն . կրկնեց հայրը , դիտես թէ ես տկար եմ եւ միակողմանի . բայց այսօր քու ապաքինութիւնդ տեսնելով՝ այնպիսի ոգեւորութիւն մը կըզգամ , որ իբրեւ թէ երբեք տկարութիւն մը չունիմ , ամէն բան իր նախկին վիճակին մէջ , շահերս կանոնաւոր , հարստութիւնս կրկնապատկուած եւ ոտքերս երջանկութեան սեմին վրայ դրած , կըսպասեմ որ ինձի հետեւիս :

Վերգինէն իր հօր այս տեսակ խօսքերուն եւ ոչ պատաս-

խան մը տուաւ , այլ ինքնիրեն խոր մտածումի մէջ էր եւ դէմ-
քը աւելի գունաթափ կերեւէր քան միւս օրեր : Հիւանդու-
հին սուրճը խմելէն ետքը , վեր ելաւ գլուխը զարդարեց :
Զգուշական միջոցները թէպէտեւ դոյզն ինչ դադրեցուցած
էին . բայց մայրը միշտ կասկածոտ էր . մանաւանդ այս ա-
նակնկալ յիտիսութեանը վրայ շփոթած ըլլալով , անոր հետ-
քերը կորոնէր անընդհատ . ուստի երբ նշմարեց սենեակը
մտնելը , հետեւաբար 5-6 վայրկեան հոն ուշանալը , բան մը
առնելու ձեւակերպութեամբ ինքն ալ սենեակը մտաւ , եւ
տեսաւ թէ Վերգինէն հայելին առջեւ մագերը կը սանտրէր :

— Ինչո՞ւ հիմա մագերդ կը սանտրես , աղջիկս հարցուց
հետաքրքրութեամբ , չէ՞ որ հիմա պիտի լուացուիս եւ ջուրն
ալ գրեթէ պատրաստ է :

— Այո՛ , իրաւունք ունիս մայրիկ , յարեց օրիորդը . բայց
ինչպէս որ գիտես , երկու շաբաթէ ի վեր բուլբուլին կերպա-
բանափոխ եղեր էի . հիմա հետաքրքրութեանէ շարժեալ՝ դէմքիս
այլայլութիւնը քիչ մը ուղղել ուզեցի . հասկնալու համար թէ
արդեօք նախկին գեղեցկութիւնս պիտի գտնե՞մ նորէն :

Այս պատասխանէն տիկին Բրաբրին հասկցաւ թէ տակա-
ւին մտային խանդարման հետքերը կերեւին անոր վրայ , սա-
կայն անտարբերութեամբ պատասխանեց . — Աղջիկս , միշտ
գեղեցիկ ես , աւելորդ է այդ հետաքրքրութիւնդ . եկո՛ւր վար
իջնանք միասին եւ ալէկ մը լուացուելէ յետոյ , հիմակուան
գեղեցկութեանդ կրկինը պիտի տեսնես վրադ . . . :

— Շատ աղէկ , ուրեմն երթանք , ըսաւ Վերգինէն եւ զը-
նարթ երես արագ արագ սկսաւ վար իջնալ , այնպէս որ մայ-
րը չկրցաւ անոր ետեւէն հասնիլ , եւ սանդուղներուն վերջին
աստիճանի վրայ կեցած՝ բարձրածայն ինդալով ըսաւ . —
Մայրիկ , չկրցար ետեւէս հասնիլ : Իսկ Բրաբրին առանց պա-
տասխանելու՝ ջուրը լողարանին մէջ լեցնել տուաւ . հիւան-
դուհին իսկոյն հանուեղով լողարանը մտաւ : Նոյն ժամայն բը-
ժիչկներուն կողմանէ տրուած սպիտակ փոշի մը լցուցին ջու-
րին մէջ :

Քսան վայրկենի չտի լուացուելէ յետոյ՝ հիւանդուհին եւ
լաւ հագուեցաւ , ու գնաց իր սենեակը . մէկ ժամ հանդիստ

առնելով , կրկին վար իջաւ . — Մայրիկ , անօթի եմ , կերա-
կուր կուզեմ ըսաւ , եւ բազմ ճաշի սեղանին առջեւ նստաւ :

Տիկին Բրաբրին ուրախութենէն ինչ ընելիքը չէր գիտեր .
վասն զի երկու շաբաթէ ի վեր հիւանդուհւոյն կերածը նըշա-
նակութիւն չունէր , ուստի կերակուրը չուտով տաքցնել տա-
լու պահուն , օրիորդը տղու մը պէս սկաւառակին սնակին եւ
պատառաքաղին հետ կը խաղար , իրարու հետ կը բաղխէր եւ
երբեմն ալ ձեռքը ձակտին դրած՝ կը սխէր մտածել . եւ ահա
այս միջոցին այնպէս ուժգին զարնուեցաւ փողոցին դուռը որ
Վերգինէն սարսափահար ոտք ելելով , աչքերը կատաղաբար
բացաւ . — Ահա մահը , գոչելն ու սեղանի վրայէն երկաթէ
պատառաքաղը յափշտակելով սրտին մտելը մէկ եղաւ : Իսկոյն
չըջեցաւ մարմարեայ քարերուն վրայ արիւնաթափաւ :

Հայրն ու մայրը եւ տանը մէջ գտնուողները վազեցին
եկտն : մայրը ողբագին աղաղակներով ձեռքը գլխուն վար-
նելով մագերը կը փետտէր , Այս աղմուկի փոթորիկի տեսն
փողոցին դուռը բացուեցաւ . եւ ահա Հրանտ ու Ռափայէլ
էֆէնտի ներս մտան :

Ահա՛ , ցաւալի տեսարան մը որ անսկարագրելի է :

Հրանտ խելակորոյս վիճակի մէջ կատաղի նայուածքով
մտեցաւ արիւնի մէջ լողացող աղջկան եւ ըսաւ . — Վերգինէն
սրտիս հատոր , ո՛ւր մնաց մեր ուխտին դաշնագիրը . ա՛հ , այդ
սրբազան դաշնագիրը : Այդ սիրաքը ինչո՞ւ պատուեցիր . ինչո՞ւ
փութացիր մահուան գիրիը ապաստանիլ , մինչ ես բազկա-
տարած քեզի կը դիմէի , մխիթարութիւն մը , ճայն մը , պա-
տասխան մը : Կայրի հոգիս , Վերգինէն . սա գունաթափ ան-
մեղ շրթներէդ սիրոյ վերջին քաղցր արձագանգ մը գոնէ հըն-
չեցուր ականջիս : Այսպէս կողիղազին ողբալու միջոցին .
Վերգինէն վրայ դեռ կենդանութեան նշաններ կերեւէին . վեր-
ջին ճգաֆը իր արիւնաթափաւ ձեռքը առ Հրանտ կարկառեց
եւ Հրանտ . գոչեց : Երիտասարդը իսկոյն սրտակեղ եւ կա-
րօտով իր մահամբձ սիրուհւոյն ձեռքն ու սառն շրթունքը
համբուրեց : Դժբաղդ աղջկան քթէն ու բերնէն առատ ար-
իւն կը հոսէին : Հրանտ տեսնելով այդ անմեղ արարածի վի-
ճակը , տեսաւ նաեւ այն պատառաքաղը որ հոն մնացած էր .

յափշտակեց ի քթթեւ ական եւ իր կուրծքը մխելով ինկաւ վերգինէի անչնչացած մարմնին վրայ եւ գոչեց .

— Ի միասին , ի միասին երթանք . այս էր մեր ուխտը :

Վայրկեան մը ետքը ոչ վերգինէ կար եւ ոչ Հրանտ այլ ճիւնի պէս սպիտակ մարմարէ քարերուն վրայ արիւնի լճակ մը որ կը հասէր երկուքին կուրծքէն :

Փաստաբանը որ այս ցաւալի անձնասպանութեանց ներկայ էր . յանկարծ հօրն ու մօրը դառնալով . ուժգին , լուեցէք աղաղակեց : Ամենքը ուշադրութիւններն անոր դարցուցին . Ռափայէլ էֆէնտի շարունակեց . — Մնողք , ի՞նչ պիտի ըլլան այս սպարդիւն սղքն ու կոծը . ձեր կոշտ ու կոպիտ եւ սպարդիւն բռնաբարութեանց վախճանը աս պիտի ըլլար . դուք տգէտ եւ ձեր գաւակները ուսեալ եւ դիւրագոյաց . միթէ չգիտէիք թէ գիտութիւնը ագիտութեան դէմ պիտի մրցէր : Ի՞նչու ձեր գաւակները կրթեցիք , դաստիարակեցիք , գիտութեամբ անոնց մտքերը մշակելով զարգացուցիք , եւ աշխարհի վրայ կրթութեան բարոյականութեան այս նորաբոյս բողբոջները՝ որ գմայլելի ներդաշնակութեամբ օրինակելի ընտանիք մը պիտի կազմէին . իրարմէ անջատել ու զրկել ջանացիք . եւ տգիտութեան օրէնքին հպատակութիւն պահանջեցիք : — Ահա , տեսէք երկու անմեղ զոհեր . գիտութեամբ , բարոյականութեամբ մաքուր սիրտով , անարատ սիրով զիրենք եւ ձեզ երջանկացունելու գաղափարներով վառուած : Արդեօք ինչէ՛ր կերեւակայէին . վայ ձեզի պէս ծնողքին , որ իրենց գաւակներուն կըրթութեանը հոգ կը տանին եւ անոնց մտքերէն իրենց փոտած մտքին արդիւնքը կըսպասեն : Ահա , ես փոքր ի շատէ այս աննչացած երիտասարդի ճարտիկութիւնն ու անոր անձնուէր ծառայութիւնը տեսնելով , հետեւաբար այն փոքր սխալանքը , որ բարեմտութեան մը արդիւնք էր , ամէն ջանք ի գործ դրի որ օգնեմ ու ազատեմ գինքը :

Հիմա կխնդրեմ ձեզմէ որ ասոնց յուզարկաւորութիւնը շքեղ հանդէսով կատարուի , ըսաւ եւ արտաստաւթոր դուրս ելաւ :

Արդարեւ հետեւեալ օրը շատ փառաւոր եղաւ այս երկու զոհերուն յուզարկաւորութեան հանդէսը , այդ երկու գերդաստաններուն ի հօրէ յորդի ժողովներուն սերունդը ջնջուեցաւ . անհետ եղաւ . վանդի մէկը մասնջ գաւակ մը եւ միւսը աղջիկ զաւակ մը ունէր միայն :

Վ Ե Ր Ջ Ա Ր Ա Ն

Նրանոս աղա աղջիկը մեռնելէն քանի մը ամիս հազիւ կարողացաւ սարիլ . իր խիղճը անաչառ դատաւոր մը եղաւ , եւ տանջուելով իր վերջին հրաժեշտը տուաւ աշխարհին :

Իսկ Թովմաս եւ Տօնիկ , այդ երկու չարագործ սրիկաներըն ալ իրենց պատիժը կրեցին :

Առաջինը գաղղիական ախտէ վարակուած՝ իր երկու աչքին լոյսը կորսնցուց քանի մը օրուան մէջ , յաւիտեան զըրկուելով տեսողութենէ : Իսկ վերջինը Տօնիկ , խաղի մէջ մեծ գումար մը կորսնցնելով , եւ իր հօր հարստութիւնը բոլորովին ոչնչացնելէ յետոյ , յուսահատութենէն առաւուտ մը կախուած գտնուեցաւ իր սենեկին մէջ :

Դժբաղդը խեղդամահ ըրած էր ինքզինքը :

Վ Ե Ր Ջ

« Ազգային գրադարան



NL0243329

